



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2(075)

U-15  
1891

440

5820 2(073)  
U-15

# ԱՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՆՈՐ-ՈՒԽՏԻ



Եկայք որդեակք իմ եւ յուարուք ինձ եւ զերկիւղ Տեառն ուսուցից ձեզ:  
Սաղմոս:

**Հ Ա Տ Ո Ր Բ .**

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Առաջին տպագրութիւնը փոխադրուած է Պօլսի բարբառով)

Աշխատասիրեց

**ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՅ**

(Միաբան Մողնուց Ս. Գէորգ եկեղեցուց)

Նիւթի մշակութեան կէտը տպուած է «Դասագիրք կրօնի» անունով,  
իսկ միւս կէտը շուտով ի յայ կրնձայինք:



**Տ Փ Խ Ի Ս**  
Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի

1891

საქართველოს მთავრობის

დასრულებული

1891

Дозволено цензурою, Тифлисъ, 28-го апрѣля 1891 г.

საქართველოს მთავრობის



Тип. И. Маргироевца, Орб. ул., д. № 1/2.



1891

2010

საქართველოს მთავრობის

დასრულებული

საქართველოს მთავრობის

საქართველოს მთავრობის

საქართველოს მთავრობის

102001

Հ Ի Ո Մ Ա Ն Ա Ի

# Տ. Տ. Մ Ա Կ Ա Ր Ա Յ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ընթերցեալ զայս գրքոյկ չգտի 'ի սմին հակառակ ինչ, ուստի թոյլատրի տպագրութիւն սորա: 19 մարտի 1891 ամի 'ի Ս. Էջմիածին:

Նախագ. Տպար. Ժող. Արհեստագործ. Եղեւնոպոլիս:



78207 - 22  
1396-87



## ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԿԵԼՈՒԹԻՒՆԸ

I.

§ 1.

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԻՐԸ:

ա.

Աւետուածն: Աստուած Գաբրիէլ Հրեշտակին ուղարկեց Նազարէթ, որ Գալիլիայի փոքր քաղաքներից մինն էր, մի կուսի մօտ, որ նշանուած էր Յովսէփի հետ՝ Դաւթի տանից և այն կուսի անունն էր Մարիամ:

Հրեշտակն եկաւ նրա մօտ և ասաց. «Ուրախացիր, Աստուած քեզ հետ է»: Երբ Մարիամը Հրեշտակին տեսաւ, շփոթուեց և մտածում էր, թէ ինչ կնշանակէ այս ողջոյնը: Հրեշտակն ասաց նրան. «Մի վախենար, Մարիամ, որովհետեւ Աստուածանից շնորհ գտար. դու մի որդի կծնես ու նրան Յիսուս կանուանես: Նա մեծ կլինի և Բարձրելոյ որդի կկոչուի. Տէր Աստուածը նրա հայր Դաւթի աթոռը նրան կտայ և նրա թագաւորութիւնը վերջ չի ունենայ»:

Մարիամը պատասխանեց. «Ահա ես Աստուծու աղախինն եմ. թող քո խօսքի համաձայն կատարուի»: Հրեշտակը հեռացաւ նրանից:

Բ.

Ծ Ն Ո Ւ Ն Դ: Այդ օրերում Օգոստոս կայսրից

Հրաման դուրս եկաւ՝ որ աշխարհիս բոլոր մարդկանցը Համարեն: Սրա Համար ամենքը գնում էին իրանց Հայրենի քաղաքը՝ ցուցակի մէջ գրուելու Համար:

Յովսէփն էլ վեր կացաւ և Նաղարէթից գնաց Յուզափ երկիրը՝ Դաւթի քաղաքը՝ Բեթղեհէմ, որովհետեւ նա այնտեղացի էր, որպէսզի Մարիամի Հետ իւր անունը գրել տայ ցուցակի մէջ:

Երբ Բեթղեհէմ Հասան՝ Մարիամը մի որդի ունեցաւ, պատեց խանձարուրով և դրաւ մուրի մէջ, որովհետեւ այն այրի մէջ ուրիշ տեղ չկար:

Այն երկրում հովիւները գիշեր ժամանակ դրսումն էին արածացնում իրանց ոչխարները: Հրեշտակը երեւաց նրանց և Աստուծու փառքը ծագեց նրանց մէջ:

Այս բանից շատ վախեցան նրանք: Այն ժամանակ Հրեշտակն ասաց նրանց. «Մի վախենաք, ես ձեզ և բոլոր ժողովրդեան մեծ ուրախութիւն եմ աւետում, որովհետեւ այսօր ծնաւ ձեզ Համար Փրկիչ՝ օծեալ Տէր՝ Դաւթի քաղաքում: Այս բանը թող ձեզ նշան լինի—դուք կգտնէք մանկանը խանձարուրի մէջ պատած և մուրի մէջ դրած»: Յանկարծ այն Հրեշտակի Հետ երկնաւոր զօրաց մի բաղմութիւն երևաց, որոնք Աստուծուն օրհնում էին և ասում. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ Հաճութիւն»—փառք Աստուծուն երկնքումը, երկրիս վրայ խաղաղութիւն և մարդկանց մէջ ուրախութիւն:

Երբ Հրեշտակը նրանցից Հեռացաւ և դէպի երկինք վերացաւ, հովիւներն ասացին միմեանց. «Եկէք գնանք մինչև Բեթղեհէմ և տեսնենք, թէ սա ինչ բան է, որ Աստուած մեզ ցոյց տուաւ»: Նրանք

շտապով եկան և դտան Մարիամին, Յովսէփին և մուրի մէջ դրած մանկանը: Տեսնելուց յետոյ վերադարձան և փառաբանում էին Աստուծուն իրանց լսած ու տեսած բոլոր բաների Համար և տարածում էին ամեն տեղ ինչ որ ասուել էր մանկան մասին:

Մարիամն այս բոլոր բաները պահում էր իւր մտքումը: Ութ օրից յետոյ մանկանը թլպատեցին և անունը դրին Յիսուս, ինչպէս ասել էր Հրեշտակը:

«Ձի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ. զի ամենայն որ հաւատայ ի նա՝ մի կորնիցէ, այլ ընկայցի զկեանս յաւիտենականս»: Յովհ. գ. 16. Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ իւր միածին Որդին տուաւ, որպէս զի ամեն նրան հաւատացողը Կորնի, այլ յաւիտենական կեանք ունենայ:

Եթէ Քրիստոս հազար անգամ էլ Բեթղեհէմում ծնի և ոչ մի անգամ քո մէջ, դու դարձեալ կորած ես:

§ 2.

ԱՐԵՒԵԼՔԻ ՄՈԳԵՐԸ ԵՒ ՅԻՍՈՒՍԻ ԵԳԻՊՏՈՍ ՓԱՆՉՈՒԼ:

Հերովդէս թագաւորի ժամանակ երբ Յիսուսը Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում ծնաւ, արևելքից մոզեր՝ իմաստուններ եկան Երուսաղէմ և Հարցնում էին, թէ ո՞ր է Հրէից նորածին թագաւորը, որովհետեւ մենք տեսանք նրա աստղն արևելքում և եկանք երկրպագութիւն տալու:

Հերովդէսն այս բանը լսելուն պէս՝ շփոթուեց, նրա Հետ էլ բոլոր Երուսաղէմը: Ուստի ժողովել տուաւ բոլոր քահանայապետներին և ժողովրդի

դպիրներին ու հարցնում էր նրանց, թէ՛ որտեղ պետք է ծնի Քրիստոսը: Նրանք պատասխանեցին. «Հրէաստանի Բեթղեհէմ քաղաքում, որովհետեւ մարգարէներն այսպէս են գրել — և դու Բեթղեհէմ՝ Յուդայի երկիր, ոչնչով փոքր չես Յուդայի իշխաններից, քեզնից կճնի ինձ համար մի իշխան և կհովուէ իմ խորայել ժողովուրդը»:

Այն ժամանակ Հերովդէսը մոզերին թագուն կանչեց և աստղի երևալու ժամանակն ստոյգ իմանալով նրանցից՝ ասաց. «Գնացէ՛ք Բեթղեհէմ և մանկան մասին ճիշտն իմացէ՛ք և երբ նրան գտնէ՛ք, ինձ էլ իմաց տուէ՛ք, որ գամ և երկրպագութիւն տամ նրան»:

Մոզերը գնացին: Եւ ահա այն աստղը, որին նրանք արևելքում տեսել էին, առաջնորդեց նրանց և եկաւ կանգնեց այն տան վրայ, ուր մանուկն էր: Նրանք չափից դուրս ուրախացան. ներս մտան տուն և գտան մանկանը՝ իւր մայր Մարիամի հետ. երկրպագութիւն տուին և իրանց գանձերը բաց անելով՝ ընծայ տուին ոսկի, կնտրուկ և զմուռս:

Աստուած երազում հրամայեց մոզերին, որ միևնոյն ճանապարհով չվերադառնան, ուստի ուրիշ տեղով գնացին իրանց երկիրը:

Երբ մոզերն այնտեղից գնացին, ահա Աստուծու հրեշտակը Յովսէփին երազում երևեցաւ և ասաց. «Վեր կաց, առ մանկանն ու նրա մօրը. փախիր Եգիպտոս և կաց այնտեղ մինչև ես քեզ կասեմ, որովհետեւ Հերովդէսը որոնում է մանկանը և կամենում է

տպանել նրան: Յովսէփը վեր կացաւ, առաւ մանկանն ու նրա մօրը և գիշերով փախաւ Եգիպտոս:

Հերովդէսը երբ տեսաւ, թէ մոզերն իրան խաբեցին, խիստ բարկացաւ, ուստի դահիճներ ուղարկեց և կոտորել տուաւ Բեթղեհէմի ու նրա շրջակայքի բոլոր մանուկներին՝ երկու տարեկանից սկսած՝ մոզերի որոշած ժամանակի համաձայն:

Հերովդէսի մահուանից յետոյ Աստուծու հրեշտակը երևեցաւ Յովսէփին Եգիպտոսում և ասաց. «Վեր կաց, առ մանկանն ու նրա մօրը և գնա՛ իսրայելի երկիրը, որովհետեւ մեռան նրանք, որոնք մանկան կեանքի ետևիցն էին ընկած»: Նա էլ վեր կացաւ, առաւ մանկանն ու նրա մօրը, եկաւ իսրայելի երկիրն ու բնակուեց Նազարէթ քաղաքում:

«Աստուած գամենայն մարդիկ կամի զի կեցցեն՝ եւ ի զիտութիւն ճշմարտութեան եկեացեն»: I. Տիմոթ. բ. 4.  
Աստուած կամենում է, որ բոլոր մարդիկ փրկուին և ճշմարտութեան գիտութեանը գան:

Յիսուսի տաճար տանուիլը, Սիմէօն աստուածընկալ եւ Աննա մարգարէուհի:

Քառասուն օրից յետոյ՝ Մովսիսի օրէնքին համաձայն, եթէ երեխան արու էր և անդրանիկ, ծրնողները տանում էին Երուսաղէմ, նուիրում տաճարին և յետոյ զոհով յետ էին գնում: Հարուստները բերում էին գառը, իսկ աղքատները մի զոյգ տատրակ կամ աղաւնի:

Յիսուսի ծնողները, որպէս աղքատ, մի զոյգ աղաւնի տարան:

Այդ միւսնոյն ժամանակ Երուսաղէմում բնակ-  
 ւում էր մի մարդ, որի անունն էր Սիմէօն: Այս  
 մարդն արդար էր և աստուածավախ ու սպասում էր  
 Իսրայէլի մխիթարութեանը: Սուրբ Հոգուց իրա-  
 ւունք ունէր չմեռնիլ, մինչև որ խոստացեալ Մես-  
 սիային տեսնէ: Երբ Յիսուս մանկանը տաճար բե-  
 րին, Սուրբ Հոգուոյ ազդմամբ նա ևս եկաւ այն-  
 տեղ, մանկանը գիրկն առաւ, օրհնեց և ասաց. «Տէր,  
 քո ծառային խաղաղութեամբ արձակիր, որովհետեւ  
 ես տեսայ այն Փրկիչը, որին դու պատրաստել ես  
 բոլոր ազգերի համար. ես տեսայ այն լոյսը, որ պիտի  
 լուսաւորէ հեթանոսներին, և այն փառքը, որ քո  
 Իսրայէլ ժողովրդի համար է»: Ծնողները զարմանում  
 էին ծերունու խօսքերի վրայ: Սիմէօնն օրհնեց նրան  
 և նրա մայր Մարիամին ու ասաց. «Սա Իսրայէլի  
 մէջ շատերի համար բնկնելու և կանգնելու պատ-  
 ճառ կլինի. նա շատ հակառակութեան առարկայ  
 կլինի. քո սիրտը կխոցուի և շատ սրտերի խորհուրդ-  
 ներ նրանով կյայտնուին»:

Այնտեղ էր և Աննա մարգարէուհին, որ 84  
 տարեկան մի այրի կին էր. տաճարիցը երբէք չէր  
 հեռացել. իւր օրերը ծոմով և աղօթքով էր անց  
 կացնում ու գիշեր ցերեկ ծառայում էր Աստուծուն:  
 Երբ սա Յիսուս մանկանը տեսաւ, վեր կացաւ, գո-  
 հացաւ Աստուածանից և պատմում էր այս բանն  
 այն ամենին, որոնք սպասում էին Մեսսիայի գա-  
 յրտեան:

§ 3.

ՏԱՆՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՅԻՍՈՒՍԸ ՏԱՃԱՐՈՒՄ:

Մանուկն աճում ու զօրանում էր իմաստութիւ-  
 նով լցուած և Աստուծու շնորհքը նրա վրայ էր:  
 Նրա ծնողներն ամենայն տարի Զատիկի տօնին Երու-  
 սաղէմ ուխտ էին գնում: Երբ Յիսուսը 12 տարեկան  
 դարձաւ, նրան էլ հետները Երուսաղէմ տարան:  
 Տօնի օրերն անցնելուց յետոյ՝ ծնողները վերադար-  
 ձան, իսկ Յիսուսը մնաց Երուսաղէմում: Այս բանը  
 չիմացան Յովսէփն ու Մարիամը:

Կարծելով թէ նա ուղեկիցների հետ գնացած  
 կլինի՝ մի օրուայ ճանապարհ յետ եկան և որոնում  
 էին ազգականների և ծանօթների մէջ: Բայց երբ  
 չգտան, դարձան Երուսաղէմ և այնտեղ էին որոնում:

Երեք օրից յետոյ նրան գտան տաճարում  
 վարդապետների մէջ նստած, ուր լսում էր նրանց  
 և հարցումներ էր առաջարկում: Բոլոր լսողները  
 զարմանում էին նրա իմաստուն պատասխանների  
 վրայ:

Երբ ծնողները տեսան նրան, սքանչացան: Մայրն  
 ասաց. «Ո՛րդեակ, այդ ինչ արիր մեզ, հայրդ և ես  
 ցաւելով որոնում էինք քեզ»: Նա պատասխանեց և  
 ասաց. «Մի՛թէ չգիտէք, որ ես իմ հօր տանը պէտք  
 է լինիմ»: Այս խօսքերը ոչ ոք չհասկացաւ:

Յիսուսը նրանց հետ Նազարէթ դարձաւ և հը-  
 նազանդ էր ծնողացը: Մայրն այս բոլոր բաները պա-  
 հում էր մտքումը: Յիսուսը զարդանում էր իմաստու-

Թիւնով, հասակով ու շնորհքով՝ Աստուծու և մարդկանց առջև:

„Ձի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ, եւ ձեզ էթող օրինակ՝ զի գնեա երթացէք հետոց նորա“: I. Թ. Պետ. բ. 21. Քրիստոսը ձեզ համար մեռաւ և օրինակ թողեց, որ նրան հետևէք:

„Տէր, սիրեցի զվայելչութիւն տան քո, եւ գտեղի յարկի՝ փառաց քոց. Սաղ. իե. 8.

Աստուած, ես սիրեցի քո տան գեղեցկութիւնը և քո փառքի բնակուելու տեղը:

§ 4.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՁԻ ԾՆՈՒՆԻԷ:

ա.

Ա և ե տ ու մ ն: Հրէից Հերովդէս թագաւորի օրերում մի քահանայ էր ապրում՝ անունը Զաքարիա: Նրա կնոջ անունը Եղիսաբէթ էր: Երկուսն էլ արդար էին և Աստուծու բոլոր պատուիրանները ճշտութեամբ էին կատարում: Նրանք զաւակ չունէին և երկուսն էլ ծերացած էին:

Մի անգամ՝ երբ քահանայական պարտքը կատարելու հերթը Զաքարիային հասաւ, Աստուծու տաճարը մտաւ ինկարկելու համար: Ժողովուրդը դուրսն աղօթում էր: Խնկարկելու ժամանակ Աստուծու հրեշտակը երևաց Զաքարիային. նա խիտ վախեցաւ:

Հրեշտակն ասաց. «Մի վախենար, Զաքարիա, քո աղօթքը լսելի եղաւ. Եղիսաբէթ կինդ մի որդի կունենայ և նրա անունը Յովհաննէս կդնես: Նա քեզ համար ցնծութիւն կլինի ու շատերը կուրախանան նրա ծննդեան վրայ. Աստուծու առաջ մեծ

կլինի և Իսրայէլի որդիներանցից շատերին դէպի ճշմարիտ Աստուածը կղարձնէ. նա առաջուց Եղիայի նման կքարոզէ և Աստուծու համար ժողովուրդ կպատրաստէ»:

Զաքարիան պատասխանեց հրեշտակին. «Ի՞նչով պիտի իմանամ ես այդ բանը, որովհետև ես էլ, կինս էլ ծերացած ենք»: Հրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ, որ կանգնում եմ Աստուծու առաջ. ես ուղարկուած եմ քեզ հետ խօսելու և աւետելու. դու համը կմնաս մինչև այն օրն, երբ այս բոլորը կկատարուի, որովհետև ինձ չհաւատացիր»:

Ժողովուրդն սպասում էր Զաքարիային և զարմանում, որ նա տաճարում այդքան ուշացաւ: Երբ տաճարից դուրս եկաւ, այլևս չէր կարողանում խօսել: Նրանք իսկոյն հասկացան, որ այնտեղ տեսիլ է տեսել: Զաքարիան նշաններով էր խօսում ժողովրդի հետ և մնաց պապանձուած: Պաշտօնի օրերն անցնելուց յետոյ վերադարձաւ տուն:

բ.

Ծ ն ու լ ն դ: Ժամանակը լրացաւ և Եղիսաբէթը մի որդի ունեցաւ: Երբ նրա դրացիները և ազգականները լսեցին, որ Աստուած մեծ ողորմութիւն է արել, շատ ուրախացան: Եօթն օրից յետոյ պէտք է մանկանը թլփատէին. նրա անունը կամենում էին Զաքարիա դնել, բայց մայրն արգելում էր և ասում, թէ «նրա անունը Յովհաննէս պէտք է լինի»: Բարեկամները պատասխանեցին նրան. «Քո ազգականների մէջ ոչ ոք այդպիսի անուն չունի»: Վերջն ամենքը հօրն ականարկեցին, թէ նա ինչ անուն կտայ:

Ջաքարիան մի տախտակ պահանջեց և նրա վրայ գրեց. «Յովհաննէս է սրա անունը»: Իսկոյն լեզուն բացուեց, խօսում և օրհնում էր Աստուծուն: Ամենքն էլ զարմանում էին այս բանի վրայ և ասում. «Ի՞նչ պէտք է լինի այս մանուկը»:

Ջաքարիան Հոգևով Սրբով լցուեց, մարգարէացաւ և ասաց. «Օրհնեալ է Իսրայէլի Տէր Աստուածը. նա այցելեց մեզ և իւր ժողովրդեան համար փրկութիւն պատրաստեց: Իսկ դու, մանուկ, Բարձրելոյ մարգարէ կլինիս, Տիրոջ առաջևից կգնաս և նրա ճանապարհը կպատրաստես»:

Մանուկն աճում էր և Հոգևով զօրանում: Նա անապատումն էր ապրում մինչև Իսրայէլի երևալու օրը:

„Ջինչ էն հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանգիմանութիւն որոց ոչն երեւին“: Թ. ա. Եբբ. Ժա. 1.

Հաւատքն է յուսացած բաների հաստատութիւնը և չերեցածների ապացոյցը:

§ 5.

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՊԱՂԵՍՏՐՈՒԹԻՒՆ Է ՔՐՈՂՈՒՄ ԵՒ ՄԿԻՏՈՒՄ:

Տիբերիոս կայսեր իշխանութեան տասնևհինգերորդ տարում, երբ Պոնտացի Պիղատոսը կառավարիչ էր Յուդայի երկրում և Հերովդէսը Գալիլիայում չորրորդապետ՝ Աստուած հրամայեց անապատում ապրող Ջաքարիայի որդի Յովհաննէսին Յորդանանի կողմերը գնալ և քարոզել: «Ապաշխարեցէք, զի

մերձեալ է արքայութիւն երկնից», ասում էր ամենքին Յովհաննէսը: Նրա շորերն ուղտի բրդից էին, գօտիկը կաշիից, իսկ կերակուրը մարախ և վայրենի մեղր էր: Յովհաննէսի մօտ էին գնում Երուսաղէմացիները, Հրէաստանի բոլոր ժողովուրդը, Յորդանանի կողմերից, խոստովանում էին իրանց մեղքերը և մկրտում նրանից:

Երբ Յովհաննէսը տեսաւ, որ սագուկեցիներից և փարիսեցիներից ևս շատերը գալիս են իւր մկրտութիւնը տեսնելու, ասաց նրանց. «Ի՞ժի ծնունդներ, ձեզ ո՞վ ցոյց տուաւ փախչել այն բարկութիւնից, որ գալու է. այսուհետև ապաշխարութեան արժանի պտուղներ բերէք: Դուք մի ասէք, թէ մենք հայր Աբրահամ ունինք. ես ասում եմ ձեզ, որ Աստուած կարող է այս քարերիցն էլ Աբրահամի որդիք յարուցանել: Արդէն կացինը ծառի արմատին է գրած. այն ծառը, որ բարի պտուղ չի բերիլ, կկտրուի և կրակը կձգուի»:

Մաքսաւորները ևս եկան Յովհաննէսի մօտ մկրտուելու: Նրանք ասում էին. «Ի՞նչ պէտք է անենք, վարդապետ»: Յովհաննէսը պատասխանեց. «Օրէնքով սահմանածից աւելի մի պահանջէք»: Ջիւուորները ևս հարցնում էին. «Հապա մենք ի՞նչ անենք»: Նա պատասխան տուաւ և ասաց. «Ոչ ոքի մի հարստահարէք և մի զրկարտէք. ձեր թոշակովը բաւականացէք»: Ժողովուրդը ևս հարցնում էր և ասում. «Մենք ինչ անենք»: «Ով երկու հանդերձ ունի, թող մինը չունեցողին տայ. ով կերակուր ունի, թող նոյնպէս վարուի»:

Երբ ժողովուրդը մտածում էր Յովհաննէսի վրայ, թէ մի գուցէ սա լինի Քրիստոսը, այն ժամանակ Յովհաննէսը պատասխանեց և ասաց. «Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ինձնից յետոյ կգայ Հոգորգոյնը, որի կօշիկների կապերն արձակելու ես արժանի չեմ և ձեզ կմկրտէ Հոգևով Սրբով և կրակով: Նա Հեծանոցը ձեռին ունի բռնած, կալը կսրբէ, ցորենը կհաւաքէ շտեմարանում, իսկ յարդն անշէջ կրակով կայրէ»:

Այս և ուրիշ շատ այս տեսակ մխիթարական բաներ էր ակետարանում ժողովրդին:

„Պատրաստ արարէք զճանապարհս տեառն“: Եզայի խ. 3.  
Տիրոջ ճանապարհը պատրաստեցէք:

II.

§ 6.

III) ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ:

Յիսուսը Գալիլիայից Յովհաննէսի մօտ եկաւ մկրտուելու համար, բայց Յովհաննէսն արգելեց նրան և ասաց. «Ես պէտք է քեզնից մկրտուիմ, դո՞ւ ես ինձ մօտ գայիս»: Յիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Թո՛ղ տուր այժմ, որովհետև այսպէս է վայել մեզ, որ ամեն արդարութիւն կատարենք»: Այս խօսքից յետոյ Յովհաննէսն այլևս արգելք չգրաւ և մկրտեց Յիսուսին:

Մկրտութիւնից յետոյ՝ Յիսուսը ջրից շուտով դուրս եկաւ և ահա երկինքը բացուեց և Յովհան-

նէսը տեսաւ, որ Հոգին՝ Սուրբն աղաւնու կերպարանքով վայր էր իջնում նրա վրայ, իսկ երկնքից ձայն էր գալիս, որ ասում էր. «Գա է իմ սիրելի Որդին, որին ես հաւանեցի»:

„Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ“: Յովհ. գ. 69.

Մենք հաւատացինք և ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ Աստուծու որդին:


§ 7.

ՅԻՍՈՒՍԻ ԲՆՏՐՈՒՄ Է ՍԻՄՕՆԻՆ ԵՒ ՆՐԱ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԱՌԱՔԵԱԼՆԵՐ:

Յիսուսը Գալիլիա եկաւ և այնտեղ քարոզում էր երկնից արքայութեան ակետարանն ու ասում. «Փամանակը լրացել է, Աստուծու արքայութիւնը մօտեցել է, ապաշխարեցէք և հաւատացէք ակետարանին»: Ժողովուրդը հաւաքուած էր նրա շուրջը՝ Աստուծու խօսքը լսելու համար: Նա եկաւ Գեննեսարեթի լճակի ափն և տեսաւ երկու նաւակներ ծովի մօտ կանգնած: Դրանք ձկնորսներ էին, որոնք դուրս էին եկել ծովափն և իրանց ուռկաններն էին լուանում: Յիսուսը մտաւ նաւերից մինի մէջ, որ Սիմօնին էր պատկանում և խնդրեց նրան ցամաքից փոքր ինչ հեռացնել: Յիսուսը նստեց նաւակի մէջ և ծովի վրայից քարոզում էր ժողովրդին:

Երբ քարոզը վերջացրեց, ասաց Սիմօնին և նրա եղբայր Անդրէասին. «Նաւակը ծովի խորը տար և ուռկանը ձգիր»: Սիմօնը պատասխանեց և ասաց. «Տէ՛ր, ամբողջ գիշերն աշխատել եմք և ոչինչ չենք բռնել, բայց քո խօսքի համար ուռկանը կձգենք»:

1396-87



Եւ երբ նրանք այս արին, ուռկանք ձկնով լցուեց՝  
այնպէս որ քիչ մնաց պատառուէր: Նրանք նշան  
տուին միւս նաւի մէջ եղողներին, որ գան և իրանց  
օգնեն ուռկանք դուրս քաշելու: Եկան և երկու նա-  
ւերն էլ ընկղմելու չափ ձկնով լցրին:

Երբ Սիմօնն այս բանը տեսաւ, Յիսուսի ոտ-  
ներն ընկաւ ու ասաց. «Ինձնից Հեռու կաց, Տէր».  
վասնզի ես մի մեղաւոր մարդ եմ»: Ահը պատեց  
նրան. նոյնպէս նրա մօտ եղողներին, այն է Անդրէ-  
ասին և Զբեթթիայի երկու որդւոցը՝ Յակովբոսին և  
Յովհաննէսին, որոնք Սիմօնի ընկերներն էին: Յի-  
սուսն ասաց Սիմօնին. «Մի վախենար, դու այսու-  
Հետև մարդիկ որսող կլինիս»:

Նրանք նաւերն ափը հանեցին, թողին իրանց  
գործիները և գնացին Յիսուսի Հետ:

«Եկալք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք,  
եւ ես հանգուցից զձեզ»: Մտթ. Ժա. 29.

Ինձ մօտ եկէք, վաստակածներ և բեռնաւորներ, ես  
ձեզ հանգստութիւն կտամ:

§ 8.

ՅԻՍՈՒՍԸ ԿԱՆՁՈՒՄ Է ՄԱՏԹԷՍԻՆ:

Յիսուսը մի մաքսաւոր տեսաւ՝ Մատթէոս անու-  
նով, որ նստած էր մաքսատանը և ասաց նրան.  
«Հետևիր ինձ»: Նա էլ վեր կացաւ և գնաց նրա յե-  
տևից:

Մի անգամ, երբ Յիսուսը Մատթէոսի տանը հա-  
ցի էր, եկան այնտեղ շատ մաքսաւորներ ու մեղա-  
ւորներ և նստեցին Յիսուսի ու նրա աշակերտնե-

րի Հետ: Երբ այս բանը տեսան փարիսեցիները, ասա-  
ցին աշակերտներին. «Ի՞նչու է ձեր վարդապետը  
մաքսաւորների և մեղաւորների Հետ ուտում»: Երբ  
Յիսուսն այս բանը լսեց, ասաց նրանց. «Առողջները  
բժշկի կարօտութիւն չունին, այլ՝ հիւանդները. ես  
չեմ եկել արդարներին կանչելու, այլ մեղաւորներին»:

«Եկալք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք  
եւ ես հանգուցից զձեզ»: Մտթ. Ժա. 29.

§ 9.

ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ:

Յիսուսի մօտ մանուկներ բերին, որպէսզի ձեռք  
նրանց վրայ դնէ և աղօթէ, իսկ աշակերտներն  
արգելում էին բերողներին և յանդիմանում: Յիսուսը  
երբ այս բանը տեսաւ, բարկացաւ և ասաց. «Թողէք  
մանուկներին և մի արգելէք դրանց ինձ մօտ գալու,  
որովհետև երկնքի արքայութիւնն այդպիսիներին է  
պատկանում: Այժմարիտն եմ ասում ձեզ, ով որ Աս-  
տուծու արքայութիւնն ինչպէս երեխայ չի ընդունի,  
չի կարող այնտեղ մտնել»: Յիսուսը գրկեց նրանց, ձե-  
ռքը դրաներին դրաւ և օրհնեց:

«Թող տուք մանկուոցդ գալ առ իս, եւ մի արգելուք  
զդրոսս. զի այդպիսեացդ է արքայութիւն Աստուծոց»:

Մրկ. Ժ. 14.

Թող տուէք երեխաներին, որ ինձ մօտ գան և մի ար-  
գելէք դրանց, որովհետև այդպիսիներին է Աստուծու  
արքայութիւնը:

§ 10.

ԱՂԱՎԵՐՏՆԵՐԸ ՎԻՃՈՒՄ ԵՆ, ԹԻ Ո՛Վ Է ՄԵՐ ԵՐԿՆԻՑ  
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՄԻՋ:

Աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին. «Երկնքի արքայութեան մէջ ո՞վ է մեզանից մեծը»: Այս խնդրի մասին ճանապարհին շարունակ վիճում էին միմեանց հետ: Յիսուսն իմանալով նրանց միտքը, մի մանուկ կանչեց, կանգնացրեց աշակերտների առաջ և ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, մինչև օրանց նման մանուկներ չգառնաք, չէք կարող երկնքի արքայութիւնը մտնել: Արդ՝ ով իւր անձը կխոնարհեցնէ այս մանկան նման, նա մեծ կլինի երկնքի արքայութեան մէջ: Ով մի այսպիսի մանուկ կրնդունի իմ անունով, կնշանակէ ինձ է ընդունում: Ով այս փոքրերից մինին կգալթակղեցնէ, այնպիսին լաւ կանէ, եթէ իշի երկան կախ անէ վզից և ծովի անդունդի մէջ խեղդուի: Ուրեմն զգոյշ կացէք, որ այս փոքրերից ոչ մինին չարհամարհէք և չանարդէք, որովհետև, ճշմարիտն եմ ասում ձեզ, նրանց հրեշտակներն ամենայն օր իմ Հօր երեսը տեսնում են, որ երկնքումն է: Մարդու Որդին եկել է կորածներին փրկելու»:

«Որ խոնարհեցնուցանէ զանձն իբրև զմանուկս զայս, նա մեծ է չարքայութեան երկնից»: Մտթ. փր. 4.  
Ով իւր անձն այս երեխայի նման կխոնարհեցնէ, նա է մեծը երկնքի արքայութեան մէջ:

§ 11.

ԿԱՆԱՅԻ ՀՐԹԱՆԻՔԸ:

Կանա քաղաքում հարսանիք էր: Յիսուսի մայր

Մարիամն էլ այնտեղ էր: Յիսուսն ևս իւր աշակերտներով հարսանիք հրաւիրուեց: Այնտեղ գինին պակասեց: Մարիամն ասաց Յիսուսին. «Գինի չունին»: Յիսուսը պատասխանեց. «Իմ ժամանակը դեռ չէ հասել»: Մայրը պատուիրեց ծառաներին և ասաց. «Ինչ որ նա ձեզ ասէ, կատարեցէք»:

Հրէից լուացման սովորութեան համաձայն վեց քարէ սափորներ կային այնտեղ, որոնցից իւրաքանչիւրը տանում էր երկու կամ երեք մար: Յիսուսն ասաց սպասաւորներին. «Սափորները ջրով լցրէք»: Նրանք էլ մինչև բերանը լցրին: Յիսուսը կրկին անգամ ասաց նրանց. «Հիմա առէք և մառանապետին տարէք»: Նրանք էլ տարան:

Մառանապետը՝ երբ գինի դարձած ջրի համը տեսաւ, չկարողացաւ իմանալ, թէ ո՞րտեղից է, ուստի դարձաւ փեսային և ասաց. «Ամենայն մարդ՝ սովորաբար առաջ լաւ գինին է բերում, չեստոյ վատը, իսկ դու լաւ գինին մինչև հիմա պահել ես»:

Այսպէս յայտնեց Յիսուսն իւր փառքը և նրա աշակերտները հաւատացին նրան:

Նոքին իսկ գործքն զոր գործեմ՝ վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց զիս: Յովհ. ե. 36.

Այն գործերը, որ ես գործում եմ, վկայում են, որ Հայրն է ուղարկել ինձ:

«Ճշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր»: Սաղ. 19. 9.  
Ճշակեցէք և տեսէք, որ Տէրը քաղցր է:

§ 12.

ԿԱՓԱՆԱՅՈՒՄԻ ՀԱՐԻԻՐԱՊԵՏԸ:

Երբ Յիսուսը կափառնայում քաղաքը մտաւ, մի Հարիւրապետ եկաւ նրա մօտ, աղաչում և ասում էր.

«Տէր, իմ ծառան անդամալուծ ընկած է տանը և չարաչար տանջուում է»: Յիսուսը պատասխանեց. «Ես կգամ և կբժշկեմ նրան»: Հարիւրապետն ասաց. «Տէր, ես արժանի չեմ, որ դու իմ յարկի տակ մտնես, այլ ասո՛ւ մի խօսք և իմ ծառան կբժշկուի, որովհետև ես էլ իշխանութեան ներքոյ գտանուող մարդ եմ, իմ ձեռի տակ ունիմ զինուորներ, եթէ ես մինին ասում եմ, գնա՛, գնում է, և միւսին՝ եկ, գալիս է, կամ ծառայիս՝ այս բանն արա՛, անում է»:

Երբ Յիսուսն այս խօսքերը լսեց, զարմացաւ և իրան յետևողներին ասաց. «Ճշմարիտն եմ ասում, իսրայէլի մէջն էլ այսպիսի հաւատ չգտայ. բայց ասում եմ ձեզ, շատերը կգան արևելքից, արևմուտքից և Աբրահամի, Իսահակի ու Յակովբի հետ արքայութեան մէջ կբազմեն»: Յիսուսն ասաց հարիւրապետին. «Գնա՛, ինչպէս որ հաւատացիր, թող այնպէս էլ կատարուի»: Նրա ծառան հէնց այն ժամին էլ առողջացաւ:

«Երանի որոց ոչիցէ տեսալ՝ եւ հաւատացեն»: Յովհ. ի. 29.  
Երանի նրանց, որոնք չեն տեսիլ, բայց հաւատում են:

«Մերձ է Տէր ամենեսեան որ կարդան առ նա, առ ամենեսեան որ կարդան առ նա՝ ճշմարտութեամբ»: Սաղ. ճխդ. 18.

§ 13.

ՏԱՍՆ ԲՈՐՈՏՆԵՐԻ ԲՅՁԿՈՒԻԼԸ:

Յիսուսը՝ Երուսաղէմ գնալիս, Սամարիայի և Գալիլիայի սահմանի վրայ պատահեց տառն բորոտների, որոնք հեռու կանգնած ազդարակում էին և ասում. «Յիսուս վարդապետ, ողորմիր մեզ»: Երբ Յիսուսը

նրանց տեսաւ, ասաց. «Գնացէ՛ք և ձեր անձը քահանային ցոյց տուէ՛ք»: Նրանք գնացին և իսկոյն բժշկուեցան:

Իրանցից միայն մինը լետ դարձաւ և բարձր ձայնով փառաբանում էր Աստուծուն: Նա Յիսուսի ոտներն ընկաւ և շնորհակալութիւն արաւ նրան: Իսկ սամարացի էր:

Այն ժամանակ Յիսուսը պատասխան տուաւ և ասաց. «Զէ՛ որ տառն հողի բժշկուեցան, հապա ո՞ր են միւսները»: Միւսները չեկան Աստուծուն շնորհակալութիւն անելու՝ բացի այդ այլազգուց: Յիսուսն ասաց նրան. «Ղեր կաց և գնա՛, քո հաւատը քեզ փրկեց»:

«Օրհնես անձն իմ զՏէր եւ մի մոռանար զամենայն տուրս նորա»: Սաղ. ճբ. 2:

Աստուծուն օրհնիր, ով իմ անձն, և մի մոռանար նրա բարիքները:

§ 14.

ՓԱՐԻՍԵՅԻՆ ԵՒ ՄԱՐԿՍԱՆՈՐԸ:

Այն մարդիկը, որ իրանք են իրանց արժանաւորութիւնը չափում, բարեպաշտ համարում, իսկ ուրիշներին արհամարհում, այդպիսիների համար Յիսուսն այս առակը պատմեց.

«Երկու մարդիկ տաճար գնացին աղօթք անելու. նրանցից մինը փարիսեցի էր, իսկ միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին առանձին կանգնած՝ այսպէս էր աղօթում — շնորհակալ եմ քեզնից, Աստուած, որ ես ուրիշ մարդկանց նման յափշտակող, անիրաւ կամ շնացող չեմ, ինչպէս այս մաքսաւորն է. շաբաթը

երկու անգամ ծոմ եմ պահում և իմ բոլոր ստացուածներէից տասանորդ եմ տալիս»:

Իսկ մաքսաւորը հեռու կանգնած՝ աչքերը երկինք բարձրացնել չէր կամենում, այլ իւր կուրծքն էր ծեծում և ասում. «Աստուած, քաւիր մեղաւորիս»:

Ասում եմ ձեզ, սա արդարացած վերագարձաւ իւր տուն, որովհետեւ՝ ով իրան կբարձրացնէ, կխոնարհի, իսկ ով կխոնարհեցնէ, կբարձրանայ»:

«Որ բարձրացուցանէ զանձն իւր՝ խոնարհեցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրացի»: Ղուկ. Ժբ. 14.

§ 15.

ԱՆԱԹԱԿ ՈՐԴՈՒ ԱԹԱԿ:

Մի մարդ ունէր երկու որդի: Փոքրն ասաց հօրը. «Հայր, տուր ինձ իմ բաժինը քո ունեցածից»: Հայրը բաժանեց նրան իւր ունեցածը: Զատ օր չանցած՝ փոքր որդին առաւ իւր բաժինը և գնաց հեռու աշխարհ ու այնտեղ իւր ունեցածը վատնեց՝ անառակ կեանք վարելով:

Երբ բոլորը կերաւ, վերջացրեց, հէնց այն ժամանակ այն երկրումն էլ սաստիկ սով ընկաւ: Նա սկսեց մուրացկանութեամբ ապրել: Վերջը գնաց այն երկրի քաղաքացիներից մինի մօտ ծառայութեան մտաւ: Նա էլ ուղարկեց իւր հանգը, որ խոզեր աւրածացնէ: Փոքր որդին ցանկանում էր իւր փորը լցնել խոզերի կերած եղջիւրով, բայց այդ էլ չկար:

Նա սկսաւ մտածել և ինքն իրան ասել. «Քանի վարձկաններ իմ հօր տանը հաց են ուտում,

իսկ ես այստեղ սովամահ կորչում եմ. կգնամ հօրս մօտ և կասեմ նրան—հայր, ես մեղք գործեցի քո և Աստուծու առաջ. այլևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու, ընդունիր ինձ իբրև քո վարձկաններից մինը»:

Փոքր որդին վեր կացաւ և եկաւ հօր մօտ: Հայրը նկատեց նրան հեռուից. գթաշարժուեց. առաջ վագեց. վզովն ընկաւ և համբուրեց: Որդին ասաց. «Ես մեղք գործեցի քո և Աստուծու առաջ, այլևս արժանի չեմ քեզ որդի կոչուելու»: Հայրն ասաց իւր ծառաներին. «Հանէք սրա հին շորերը և նորը հագցրէք. մատանին դրէք մատին. ոտներին կօշիկներ հագցրէք. մտացու եզր մորթեցէք. ուտենք և ուրախանանք, որովհետև իմ այս որդին մեռած էր, կենդանացաւ, կորած էր գտնուեց»: Ամենքն սկսան զուարճանալ:

Մեծ որդին հանդումն էր: Երբ տուն դարձաւ՝ երգելու և պարելու ձայներ լսեց: Ծառաններից մինին կանչեց իւր մօտ և հարցրեց, թէ այդ ինչ է: Նա էլ պատասխանեց. «Եղբայրդ դարձել է. քո հայրը մտացու եզր մորթել տուաւ նրա գալստեան պատճառով և ահա ամենքն ուրախանում են»:

Սա բարկացաւ և ներս չէր կամենում մտնել, բայց հայրը դուրս եկաւ և աղաչում էր նրան տուն գալ: Նա բարկացած պատասխան տուաւ հօրն ու ասաց. «Ահա այս քանի տարի է քեզ ծառայում եմ, քո պատուէրից երբէք դուրս չեմ եկել, բայց ինձ մի ուլ էլ չտուիր, որ իմ բարեկամների հետ ուրախանամ, իսկ այդ որդիդ, որ քո կաշքը պոռնիկների հետ կերաւ, նրա համար մտացու եզն ես մորթել»:

Հայրն ասաց նրան. «Որդեանկ, դու ամեն ժամանակ ինձ մօտ ես և այն ամենն՝ ինչ որ լիմ է, քոնն է. դու պէտք է ուրախանայիր, որովհետև քո եղբայրը մեռած էր, կենդանացաւ, կորած էր գտնուեց»:

«Եթէ ասիցեմք՝ եթէ մեզս ինչ մեք ոչ ունիմք, զան՝ ձինս խաբեմք. եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ: Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեզս մեր, հաւատարիմ է նա եւ արդար՝ առ ի թողուլ զմեզս մեր, եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ»: I. Թ. Յովհ. ա. 8. 9.

Եթէ ասենք թէ մեղք չունինք, մեզ կխաբենք և մեզնում ճշմարտութիւն չի լինիլ, իսկ եթէ մեր մեղքերը խոստովանենք, Աստուած արդարադատ է, նա մեր մեղքերը կներէ և ամեն տեսակ անիրաւութիւնից կմաքէ կհեռացնէ:

«Ապաշխարեցէք եւ հաւատացէք յաւետարանն»: Մրկ. ա. 15.

Ապաշխարեցէք և աւետարանին հաւատացէք: Թէև մեր մեղքը շատ է, բայց Աստուծու ողորմածութիւնը և՛ս աւելի է:

§ 16.

ՅԻՍՈՒՍԸ ԲԺՉՎՈՒՄ Է ԿՈՅՐԻՆ ԵՐԻՔՈՎԻ ՄՕՏ:

Յիսուսն անցնում էր Երիքովի մօտով: Մի կուր ճանապարհի վրայ նստած մուրում էր: Եւ երբ նա ժողովրդի անցնելը լսեց, Հարցրեց, թէ այդ ինչ է: Նրան պատասխանեցին, որ Յիսուս նազովրեցիին է անցնում: Կուրն սկսաւ բարձր ձայնով աղաղակել և ասել. «Դաւթի որդի Յիսուս, ողորմիր ինձ»: Առաջևից գնացողները յանդիմանում էին, որ լռէ, իսկ նա և՛ս աւելի բարձր ձայնով էր աղաղակում. «Դաւթի որդի Յիսուս, ողորմիր ինձ»:

Յիսուսը կանգնեց և Հրամայեց, որ նրան իւր մօտ բերեն: Կուրը մօտ եկաւ: Յիսուսը Հարցրեց. «Ի՞նչ ես ուզում, որ անեմ քեզ»: Նա էլ պատասխանեց. «Տէր, ուզում եմ որ տեսնեմ»: Յիսուսը պատասխանեց նրան. «Տես, քո հաւատը քեզ փրկեց»: Նա սկսաւ այն ըստին տեսնել, գնում էր նրա յետևից և փառաբանում Աստուծուն: Ժողովուրդն այս որ տեսաւ, սկսաւ Աստուծուն օրհնել:

«Եկայք առ իս ամենայն վաստակեալք»: Մտթ. Ժա. 28.

§ 17.

ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ԶԱԿՔԷՍՈՒՑ:

Յիսուսը մտաւ Երիքով և անցնում էր քաղաքի միջովը: Այնտեղ մի մարդ կար՝ անունը Զակքէոս, որ մաքսապետ էր և Հարուստ: Նա սրտով ցանկանում էր Յիսուսին տեսնել, բայց բազմութեան պատճառով չէր կարողանում, որովհետև կարճահասակ էր: Ուստի առաջ վազեց և բարձրացաւ ժանտաթղենու վրայ, որպէսզի Յիսուսն այնտեղովն անցնելիս, կարողանայ տեսնել:

Երբ Յիսուսն այնտեղ հասաւ, վեր նայեց և ասաց նրան. «Զակքէ, շնորհ արա, իջիր, այսօր պէտք է քո տանն իջևանեմ»: Զակքէոսն շտապով վայր իջաւ և ուրախութեամբ ընդունեց նրան:

Բոլոր տեսնողները տրտնջում և ասում էին, թէ մեղաւոր մարդու մօտ գնաց Հանգստանալու: Զակքէոսը լառաջ եկաւ և ասաց. «Տէր, իմ հարստութեան կէսը կտամ աղքատներին. եթէ մինին զրկել եմ, չորեքպատիկ կվճարեմ»:

Յիսուսն ասաց. «Այսօր փրկութիւն եղաւ այս տանը, որովհետեւ սա էլ Աբրահամի որդի է. մարդու Որդին եկաւ, որ կեանք պարգևէ կորածներին»:

«Իսկ այց եթէ ինչ է Քրիստոս, նոր արարած իցէ, զի հինն անց եւ արդ նոր եղեւ ամենայն»: II. Թ. ա. Կրթն. ե. 17.  
Եթէ մինի մէջ Քրիստոսի սէր կայ, աշակտին նոր է ծնունդ. մի այդ տեսակ մարդու մօտ հինն անցնում է և ամեն բան նոր է դառնում:

§ 18.

ՅԻՍՈՒՍԸ ԲՃՉԿՈՒՄ Է ԽՈՒՂՈՒՆԱՄՐԻՆ:

Մի անգամ Յիսուսի մօտ մի խուլուհամբ բերին և աղաչում էին, որ ձեռք նրա վրայ դնէ: Յիսուսն ամբոխից հեռացրեց հիւանդին. մատներն ականջի մէջ դրաւ. թքից այնտեղ լեզուն շօշափեց. վերև նայեց, յոգևոց հանեց և ասաց. «Եփփատայ», որ նշանակում է բացուիր: Իսկոյն նրա ականջները բացուեցան. լեզուի կապանքները քանդուեցան և սկսեց ուղիղ խօսել:

Պատուիրեց ոչ ոքի չասել. բայց որքան նա արգելում էր, նրանք ևս առաւել քարոզում, տարածում էին:

«Երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն»: Ղուկ. Ժա. 28.

Երանի նրանց, ովքեր Աստուծու խօսքը լսում և կատարում են:

§ 19.

ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՅՈՒ ԱՌԱՎԸ:

Յիսուսը մի օրինականի հետևեալ առակը պատմեց:

«Մի մարդ Երուսաղէմից գնում էր Երելքով և աւազակների ձեռն ընկաւ: Աւազակները մերկացրին անծանօթին. խոցոտեցին. կիսամահ թողին և գնացին:

Պատահմամբ մի քահանայ այդ ճանապարհովն անցաւ. տեսաւ նրան, բայց անց կացաւ: Նոյն տեղովն անցաւ մի ղևտացի: Նա ևս տեսաւ և անց կացաւ:

Եկաւ մի սամարացի ճանապարհորդ. տեսաւ նրան և խղճաց. իջաւ գրաստից. մօտ եկաւ. վերքերը փաթաթեց. վրան ձէթ և զինի ածեց. զբրաստի վրայ դրաւ. իջևան տարաւ և հոգ տարաւ նրա վրայ: Հետևեալ օրը, երբ պէտք է հեռանար, երկու դահեկան հանեց, իջևանի տիրոջը տուաւ և ասաց. «Խնամք տար սրա վրայ և ինչ ծախս դրա համար անես, վերադարձին կվճարեմ»: Հիմա այն երեքից ո՞րն է երկում քեզ՝ թէ ընկեր է եղել աւազակների ձեռն ընկած մարդուն»: Օրինականն ասաց. «Նա՛ որ ողորմութիւն արաւ»: Այն ժամանակ Յիսուսն ասաց. «Ինձ, դու էլ այնպէս արա՛»:

«Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո»: Մտթ. իբ. 39.  
«Քո ընկերին պէտք է քեզ պէս սիրես»:

«Որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ, մեղք են նմա»: Թ. Յակ. դ. 17.

Ով ճանաչում է բարին, բայց չի գործում, մեղանջում է:

§ 20.

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ:

Յիսուսը տաճարում ուսուցանում էր: Նայեց և տեսաւ, որ հարուստներն իրանց տուրքը գանձանակն են ձգում: Տեսաւ նաև մի այրի աղքատ կին,

որ երկու լուծա ձգեց այնտեղ: Յիսուսն ասաց. «Արշմարիտն եմ ասում ձեզ, այս որբեւայրին ամենից աւելի տուաւ, որովհետեւ նրանք ամենքն էլ իրանց աւելորդ ունեցածից Աստուծու Համար զոհ մատուցին, իսկ սա իւր աղքատ տեղովը բոլոր ունեցածը ձգեց»:

«Որչափ եւ իցէ քո՝ ըստ սմին բազմութեան արասցես «ողորմութիւնսն, եթէ սակաւ իցէ քո՝ ըստ սակաւին»: Տողբիթ. 7. 9.

«Քո կարողութեան համեմատ ողորմութիւն արա՛, քիչ ունիս՝ քիչ տուր»:

§ 21.

ՉԱՐ ԾԱՌԱՅՅԻ ԱՌԱՅՐ:

Յիսուսն ասաց Հետեւեալ առակը: «Մի թագաւոր կամենում է իւր ծառաների Հետ Հաշիւ տեսնել: Երբ Հաշիւն սկսաւ՝ նրա մօտ բերին բիւր քանքարի մի պարտապան: Բայց որովհետեւ նա չկարողացաւ վճարել, ուստի տէրը Հրամայեց նրա կինն ու որդիքը և ամենն՝ ինչ որ ունէր, ծախել պարտքի փոխարէն: Ծառան տիրոջ ոտերն ընկաւ. երկրպագութիւն էր տալիս և ասում. «Համբերի՛ր, տէր, բոլորը կվճարեմ»: Տէրը խղճաց ծառային, արձակեց նրան և պարտքն էլ իրան ընծայեց:

Երբ այդ ծառան դուրս եկաւ, գտաւ իւր ծառայակիցներէն մինին, որ իրան Հարիւր դահեկան էր պարտ: Նրան բռնեց, խեղդում էր և ասում. «Վճարի՛ր, ինչ որ ինձ պարտական ես»: Ծառայակիցը նրա ոտքերն ընկաւ. աղաչում էր և ասում. «Համբերի՛ր, բոլորը կհատուցանեմ քեզ»: Բայց նա չկամեցաւ, այլ

գնաց և նրան բանտը ձգեց՝ մինչև որ պարտքը վճարէ:

Ծառակիցները երբ այս բանը տեսան, շատ տրտմեցան, եկան և իրանց տիրոջը յայտնեցին եղելութիւնը: Այն ժամանակ տէրը նրան իւր մօտ կանչեց և ասաց. «Չար ծառայ, ես քո բոլոր պարտքը ներեցի, որովհետեւ դու ինձ աղաչեցիր, միթէ պէտք չէր, որ դու էլ քո ծառայակցին ողորմէիր, ինչպէս որ քեզ ողորմեցիր»: Տէրը բարկացաւ և ծառային մատնեց դահիճներին՝ մինչև որ պարտքն ամբողջապէս վճարէ:

Իմ երկնաւոր Հայրն էլ ձեզ Հետ այդպէս կվարուի, եթէ ձեզնից իւրաքանչիւրը սրտանց կներէ իւր եղբօրը յանցանքները»:

Այն ժամանակ մօտ եկաւ Սիմօն Պետրոսն և ասաց. «Տէր, մինչև քանի անգամ ներեմ իմ եղբօրը, եթէ նա իմ դէմ մեղանչէ: Եօթն անգամ բաւական չէ»: Յիսուսը պատասխանեց և ասաց. «Ոչ թէ եօթն անգամ, այլ և եօթնասուն եօթն անգամ»:

«Ձի եթէ թողուցուք մարդկանց զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկնաւոր, ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր երկնաւոր թողցէ զյանցանս ձեր»: Մտթ. գ. 14, 15.

Եթէ դուք մարդկանց սխալները ներէք, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեզ կներէ, իսկ եթէ մարդկանց սխալները չէք ներել, ձեր երկնաւոր Հայրն էլ ձեր յանցանքները չի ներել: «Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն»: Մտթ. ե. 7.

Երանի ողորմածներին, որովհետեւ նրանք ողորմութեան կարժանանան:

§ 22.

ՀԻՆԻ ՀԱՋՍՐԻ ԿԵՐՍԿՐԵԼԸ:

Յիսուսն իւր աշակերտներին հետ զնաց մի անապատ տեղ, որ գտանուում էր Բեթսայիցա քաղաքի մօտ: Ժողովուրդն իմացաւ այս բանը և մեծ բազմութեամբ գնում էր նրա յետևից: Երբ Յիսուսը ժողովրդին տեսաւ, խիստ ցաւեց, որովհետև նրանք նման էին անհովիւ հօտի: Նա քարոզում էր նրանց Աստուծու արքայութեան մասին և բժշկում հիւանդներին: Օրն սկսել էր տարաժամել:

Այն ժամանակ Յիսուսի աշակերտները մօտ եկան և ասացին. «Արձակիր ժողովրդին, որ զնան մերձակայ գիւղերը հանգստանալու և կերակուր գտնելու, որովհետև ոչինչ չունին ուտելու. մենք էլ անապատումն ենք»: Յիսուսը պատասխանեց նրանց. «Դուք կերակրեցէք զրանց»: Աշակերտներն ասացին. «Մենք հինգ հացից և երկու ձկնից աւելի ոչինչ չունինք, դա քնչալէս կբաւականացնէ այդ բազմութեանը»:

Յիսուսն ասաց աշակերտներին. «Նստացրէք ժողովրդին կարգ-կարգ՝ յիսուն-յիսուն»:

Այդպէս էլ արին: Այնտեղ հինգ հազարը կարգ-կարգ նստեցան: Յիսուսը վեր առաւ հինգ հացը և երկու ձուկը, զոհացաւ, կտրեց և աշակերտներին տուաւ, իսկ նրանք էլ բազմականներին: Ամենքը կերան, կշտացան, իսկ երբ վեր կացան, Յիսուսն ասաց աշակերտներին. «Հաւաքեցէք փշրանքները»: Տասն երկու զամբիւղ փշրանք վեր առան:

Ժողովուրդը երբ տեսաւ Յիսուսի այս նշանը,

ասաց. «Սա է ճշմարիտ մարգարէն, որ աշխարհ պէտք է դար»: Յիսուսը նկատեց որ իրան թագաւորի տեղ են ընդունում, հեռացաւ լեռը:

Հետևեալ օրը որոնում էր նրան ժողովուրդը և գտաւ ծովի միւս ափում: Այն ժամանակ Յիսուսն ասաց. «Ճշմարիտն եմ ասում ձեզ, դուք ինձ ոչ թէ նրա համար էք որոնում, որ նշաններ տեսաք, այլ որ հացիցը կերաք և կշտացաք. ճշմարիտն եմ ասում ձեզ՝ իմ Հայրը երկնային, ճշմարիտ հաց կտայ ձեզ»: Նրանք պատասխանեցին. «Տուր մեզ այդ յաւիտենական հացը»:

Յիսուսը պատասխանեց նրանց. «Ես եմ կենաց հացը, ով ինձ մօտ կգայ, նա չի սովածանայ. ով ինձ կհաւատայ, երբէք չի ծարաւիլ: Չեր նախնիները անապատում մանանան կերան և մեռան, իսկ ով այս հացիցը կուտէ, յաւիտեան կապրի»:

«Մի այսուհետև հոգացէք եւ ասիցէք զինչ կերցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք. զի այդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զարքայութիւնն Աստուծոյ եւ զարգարութիւնն նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ»: Մտթ. գ. 31, 33:

Այսուհետև հոգս մի անէք ասելով, թէ ինչ պիտի ուտենք, կամ ինչ պիտի խմենք, կամ ինչ պիտի հագնենք, որովհետև այդ տեսակ խնդրուածներ հեթանոսներն են անում. ձեր երկնաւոր Հայրը գիտէ որ այդ բաները ձեզ հարկաւոր են: Բայց դուք առաջ նրա արքայութիւնը խնդրեցէք, իսկ միւսներն առանց խնդրելու կտրուի ձեզ:

«Իրեալ է՝ թէ ոչ միայն հացիւ կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»: Մտթ. գ. 4. Իրեալ է, որ մարդս ոչ միայն հացով է ապրում, այլ այն ամեն խօսքով, որ Աստուծու բերանիցն է դուրս գալիս:

§ 23.

ՔՆՆԱՆՅԻ ԿԻՆԷ:

Յիսուսը զնաց Տիւրոսի և Սիդոնի կողմերը: Եւ ահա մի քանանացի կին աղաղակում էր նրա ետեւից և ասում. «Ողորմիր ինձ, Տէր, որքի Դաւթի, իմ աղջիկը չարաչար դիւահարւում է»: Յիսուսը ոչինչ պատասխան չտուաւ նրան:

Այն ժամանակ մօտ եկան նրա աշակերտները, աղաչում էին և ասում. «Արձակիր սրան, որովհետև մեր ետեւիցն աղաղակում է»: Նա պատասխան տուաւ և ասաց. «Ես ուղարկուել եմ Իսրայէլի տան ոչխարների մօտ»: Կինը մօտ եկաւ, Յիսուսի ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, օգնիր ինձ»:

Յիսուսը պատասխանեց և ասաց. «Լաւ չէ երեսխաների ձեռիցը հացն առնել և շներին ձգել»: Կինը պատասխանեց. «Այո, Տէր, բայց շներն էլ իրանց տէրերի սեղանիցն ընկած փշրանքովն են կերակրւում»:

Յիսուսը պատասխան տուաւ և ասաց. «Ով կին, քո հաւատը մեծ է, թող այնպէս լինի, ինչպէս որ դու ես կամենում»: Նրա գուստը նոյն ժամում բժշկուեց:

Ձի գոր սիրէ Տէր, խրատ<sup>4</sup>: Թ. ա. Եբբ. Ժբ. 6.  
Աստուած ումը որ սիրում է, խրատում է:  
«Եթէ որոց սիրենն զԱստուած, չամենայնի գործակից լինի ի բարիս»: Թ. ա. Հոմ. բ. 28.  
Նոքա, որոնք Աստուծուն սիրում են, ամեն բարի գործերում օգնում է Աստուած:

§ 24.

ՅԻՍՈՒՍԸ ԲԱՐՈՅՈՒՄ Ի ՆԱԶԱՐԷԹՈՒՄ:

Յիսուսը Հոգևով գորացած՝ դարձաւ Դաւիթի: Նրա

համբաւը տարածուեց շրջակայ բոլոր երկրները: Նա քարոզում, ուսուցանում էր նրանց ժողովրդանոցներում: Ամենքը յարգում էին նրան:

Յիսուսը դարձաւ Նազարէթ, ուր մեծացել էր և իւր սովորութեան համեմատ շաբաթ օրը ժողովրդանոց մտաւ և կամեցաւ կարդալ: Նրան տուին Եսայեայ մարգարէի գիրքը և երբ բաց արաւ, գտաւ այն տեղը, որ գրուած էր. «Տիրոջ հոգին իմ վրայ է, որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է սուղբատներին աւետիք տալու, որտով կոտորուածներին բժշկելու, գերիներին թողութիւն քարոզելու, կոյրերին տեսութիւն տալու և Տիրոջ ընդունելի տարին քարոզելու»:

Երբ գիրքը խփեց՝ սպասաւորին տուաւ և նստեց ժողովրդանոցի մէջ, բոլորի աչքերը նրան էին մտիկ տալիս: Յիսուսն ասաց. «Այսօր այս գիրքը կատարուեց ձեր ներկայութեամբ»: Ամենքը վկայում էին այս բանին և զարմանում այն շնորհալի խօսքերի վրայ, որ գուրա էին գալիս նրա բերանից և ասում էին—չէ՞ որ սա Յովսէփի որդին է: Յիսուսն ասաց նրանց. «Ի հարկէ գուք ինձ այս առակը կասէք—բժիշկ, քո անձը բժշկիր. սրբան բաներ ենք լսել, որոնք Կափառնայումի մէջ են կատարուել, այստեղ քո հայրենիքումն էլ արն, որ տեսնենք: Աշմարիտն եմ ասում ձեզ, Եղիայի ժամանակ Իսրայէլի մէջ շատ որբւալրի կանայք կային, երբ երկինքը երեք տարի և վեց ամիս փակուեց, այնպէս որ բոլոր երկրի վրայ մեծ սով ընկաւ, սակայն Եղիան նրանցից ոչ ոքի մօտ չուղարկուեց, բացի սիդոնացոց Սարեպթա՝ մի որբւալրի կնոջ մօտ: Դարձեալ

շատ բորտոներ կալին Իսրայէլի մէջ Եղիսէ մարգա-  
րէի ժամանակ, բայց նրանցից ոչ ոք չսրբուեց՝ բա-  
ցի Նէեման ասորուց»:

Ամենքը բարկութեանով յղուեցան ժողովրդանոցի  
մէջ: Յիսուսին քաղաքից դուրս հանեցին և տարան  
մինչև այն լեռան գլուխը, որի վրայ քաղաքն էր  
շինած, որպէսզի այն բարձր տեղից վայր ձգեն,  
իսկ Յիսուսը նրանց միջովն անցաւ և զնաց:

«Յիսուս եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան. իսկ որք ըն-  
կալանն զնա ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ  
լինել»: Յովհ. ա. 11, 12.  
Իւր ազգի մէջն եկաւ, բայց իւր ազգի որդիքն իրան  
չընդունեցին, իսկ որոնք ընդունեցին, նրանց իրաւունք  
տուաւ Աստուծու որդիք լինել:

§ 25.

ՀԱՐՈՒՍ ԵՐԻՏԱՍԱՐԻԷ:

Մի երիտասարդ մօտեցաւ Յիսուսին և ասաց.  
«Քարի վարդապետ, ինչ բարի բան զործեմ, որ յա-  
ւիտենական կեանքը ժառանգեմ»: Յիսուսն ասաց  
նրան. «Եթէ կամենում ես յաւիտենական կեանք ու-  
նենալ, պահիր պատուիրանները»: Երիտասարդը հարց-  
րեց. «Ո՞ր պատուիրանները»: Յիսուսը պատասխանեց.  
«Մի սպանաներ, մի զողանար, մի տուտ վկայեր, պա-  
տուիր քո հօրն ու մօրը և քո ընկերին քո անձի  
չափ սիրիր»:

Երիտասարդը պատասխանեց. «Այդ ամենն իմ  
երեխայութիւնիցն սկսած պահել եմ, էլ ինչ բան է  
պակաս ինձ»: Այն ժամանակ Յիսուսը նայեց նրան և  
ասաց. «Մի բան պակաս է քեզ. եթէ կամենում ես

կատարեալ լինել, զնա և ծախիր ունեցածդ. տուր աղ-  
քատներին. կունենաս երկնքումը գանձ ու հետևիր ինձ»:

Երբ պատանին այս խօսքերը լսեց, տխուր և  
տրտում հեռացաւ, որովհետև շատ ստացուած ու-  
նէր: Յիսուսն ասաց իւր աշակերտներին. «Ճշմարիտն  
եմ ասում ձեզ, մալուխը հեշտութեամբ ասեղի ծա-  
կովը կանցնի՝ քան թէ մի հարուստ՝ Աստուծու ար-  
քայութիւնը կմտնէ»: Երբ այս բանն աշակերտները  
լսեցին, շատ զարմացան և ասացին. «Հապա էլ ո՞վ  
կարող է փրկուել»: Յիսուսը մտիկ տալով նրանց՝  
ասաց. «Մարդկանց կողմանէ անկարելի է դա, իսկ  
Աստուծու կողմանէ ամեն բան հնարաւոր է»:

«Եւ մեծութիւն թէ առ ով գայտ, մի յօժարեցին  
սիրտք ձեր»: Սաղ. կա. 11.  
«Ձեր հարստութեան վրայ չուս մի դնէք:  
«Եթէ ոք կամի զկ»ի գալ իմ, ուրասցի գանձն իւր եւ  
բարձցէ զխաչ իւր եւ եկեցէ զկնի իմ»: Մրկ. ր. 34.  
Ով ուզում է իմ ետևից գալ, պէտք է իւր անձն ուրա-  
նայ, վեր առնէ իւր խաչը և ետևիցս գայ:

§ 26.

ԱՆՄԻՏ ՀՐՄՍԻ ԱՌԱԿԷ:

Յիսուսը հետևեալ առակն ասաց — Մի հարուստ  
մարդու արտերն առատ պտուղ տուին: Նա մտա-  
ծում և ասում էր. «Ի՞նչ անեմ. տեղ չունիմ արտե-  
րիս պտուղները հաւաքելու. շտեմարաններս կքան-  
դեմ. աւելի մեծերը կշինեմ և բոլոր բերքերն այն-  
տեղ կհաւաքեմ. յետոյ կասեմ ինձ — ո՞վ անձն, շատ  
բարիքներ ունիս՝ շատ տարիների համար ամբա-  
րուած, կեր, խմիր և զուարճացիր»:

հայ Աստուած ասաց նրան: «Ամբիտ, այս գիշեր քո հոգին քեզնից կպահանջեն, այսքան պատրաստածներդ ինչ պիտի անես»:

Այսպէս էլ ամենայն մարդու վիճակն է— ով միայն իւր անձի համար է գտնւմ հաւաքում, Աստուծոն մօտ հարուստ չէ:

«Մի գտնէք ձեզ գանձս չերկրի, ուր չեց եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական հատանեն եւ գողանան: Այլ գտնէցէք ձեզ գանձս չերկինս. ուր ոչ զողք եւ ուտիճ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան. զի ուր գտնէք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եզից յին»: Մտթ. գ. 19—21.

Ձեզ համար հարստութիւն մի գիզէք երկրիս վրայ, ուր զեցն ու ուտիճն ապականում են, ուր գողերը պատր ծակում են և գողանում: Այլ ձեր հարստութիւնը երկրնքում գիզեցէք, ուր ոչ զողք կայ և ոչ ուտիճը կապականէ և ուր գողերը պատր չեն ծակում և չեն գողանում, որովհետեւ ինչ տեղ ձեր գտններն են, այնտեղ էլ ձեր սիրտն է:

§ 27.

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՈՉԽԱՐԻ ԵՒ ԴՐԱՄԻ ԱՌԱՎԸ:

Յիսուսի մօտ լսելու նպատակով շատ մաքսաւորներ և մեղաւորներ եկան: Փարիսեցիները և դրպիրները տրտնջում էին ու ասում. «Սա ընդունում է մեղաւորներին և նրանց հետևում է»:

Սրա համար Յիսուսն այս առակն ասաց նրանց: «Այն ո՞ր մարդն է ձեզանից, որ հարիւր ոչխար ունենայ և նրանցից մինը կորցնէ, արդե՞օք չի թողնիլ իննսունիններ և այն կորածի ետևիցը գնալ, մինչև որ գտնէ նրան: Եւ երբ գտնէ, ուրախանալով իբր ուսերի վրայ կգնէ և տուն գալով բարեկամներին և

դրացիներին կկանչէ ու կասէ. «Ուրախացէք ինձ հետ, վասնզի իմ կորած ոչխարը գտայ»: Ասում եմ ձեզ, այսպէս էլ ուրախութիւն կլինի երկնքումը մէկ մեղաւորի համար, որ կապաշխարէ, քան թէ իննսունինն արդարների համար, որոնք ապաշխարութեան պէտք չունին»:

«Կամ ո՞վ է այն կինը, որ տասն դրամ ունենայ և դրամներից մինը կորցնէ, արդե՞օք ճրագ չի վառիլ, տունը չի աւելիլ ու խիտտ սրճնիլ՝ մինչև որ գտնէ: Եւ երբ գտնէ, բարեկամներին և դրացիներին կկանչէ ու կասէ— ուրախացէք ինձ հետ, վասնզի կորուսած դրամս գտայ: Ասում եմ ձեզ, այսպէս էլ Աստուծու հրեշտակների մօտ ուրախութիւն կլինի մէկ մեղաւորի համար, որ կապաշխարէ»:

„Ձի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև... Յովհ. գ. 16.

§ 28.

ՅԱՅԻՐՈՍԻ ԴՈՒՍՏՐԸ ԵՒ ՆԱՅԻՆԻ ՊԵՏԱՆԻՆ:

Յայրոս անունով մի մարդ, որ ժողովրդի իշխաններից մինն էր, եկաւ Յիսուսի մօտ. ընկաւ նրա ոտքերը. աղաչում և ասում էր. «Իմ աղջիկը մահամերձ է, եթէ գաս և ձեռք նրա վրայ դնես՝ կառողջանայ»: Յիսուսը զնաց նրա հետ. մեծ բազմութիւն հետևում էր նրան. իշխանի ծառաներից մինն եկաւ և ասաց. «Քո աղջիկը մեռաւ, վարդապետին անհասն գիտ մի անիլը»: Երբ այս բանը Յիսուսը լսեց, ասաց իշխանին. «Մի վախենար, հաւատո՞ւ միայն»:

Յիսուսը տուն եկաւ. աեսաւ փողհարներին ու ժողովրդին. ոչ ոքի թալ չտուաւ, որ իւր հետ գընայ՝ բացի Սիմօնից (Պետրոս), Յակովբոսից և Յովհաննէսից: Ամենքը լալիս և սղբում էին: Յիսուսն ասաց. «Մի՛ լաք, նա չէ մեռել, այլ քնած է»: Նրա վրայ ծիծաղեցին, որովհետև ամենքը գիտէին, որ մեռած է:

Յիսուսը բոլորին էլ տանից դուրս հանել տուաւ. առաւ իւր հետ երեխայի հօրն ու մօրը և նրանց, որոնք իւր հետն էին ու մտաւ այնտեղ, ուր երեխան պառկած էր: Բռնեց նրա ձեռից և ասաց. «Տախթա կու՛մի», այսինքն՝ աղջիկ, վեր կաց:

Իսկոյն՝ վեր կացաւ աղջիկը և ման եկաւ: Յիսուսը հրամայեց, որ նրան բան տան ուտելու: Ամենքը զարմացան այս բանի վրայ:

Բ.

Նրանից յետոյ Յիսուսն եկաւ Նալին քաղաքը: Նրա հետ գնում էին աշակերտները և բազմաթիւ ժողովուրդ: Երբ քաղաքի դռան մօտեցաւ, տեսաւ մի մեռեալ էին տանում, որ այրի միամօր որդի էր: Դագաղի ետեւից մեծ բազմութիւն էր գնում: Յիսուսը մօտ գնաց և ասաց. «Մի՛ լար»: Յետոյ մօտ եկաւ, դագաղը շօշափեց. տանողները կանգնեցին: Յիսուսն ասաց. «Պատանի, քեզ եմ ասում, վեր կաց»:

Մեռեալը վեր կացաւ, նստեց և սկսաւ իրօսել: Պատանուն մօրը լանձնեց:

Ամենքին երկիւղ պատեց: Աստուծան փառք էին տալիս և ասում. «Մեծ մարգարէ է վեր կացել մեր մէջ. Աստուած իւր ժողովրդին այցելել է»:

«Բաց չայտնեցաւ աշխիկ՝ լերելի Փրկչին մերոյ Յիսուսի Գրիստոսի, որ խափանեաց զմահ՝ եւ լուսաւոր առար զկեանս»: 11. Տիմոթ. ա. 10.  
Այժմ մեր Տէր Յիսուս Գրիստոսի երևալովը չայտնուեց, որ նա մահը խափանեց և կեանքը լուսաւորեց:

§ 29.

**ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏՉԻ ԻԵՍՊԱՆՆԵՐԸ ԵՐ ՊԵՏՐՈՍԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ:**  
ա.

Երբ Յովհաննէսը բանտի մէջ Յիսուսի գործերը լսեց, իւր աշակերտներից երկուսին ուղարկեց նրա մօտ հարցնելու. «Դու ես սոյն, որ գալու էր, թէ ուրիշին սպասե՞ք»:

Յիսուսը պատասխանեց նրանց և ասաց. «Գնացէ՛ք Յովհաննէսին պատմեցէ՛ք, ինչ որ լսեցիք և տեսաք—կոյրերը տեսնում են, կաղերը գնում են, բորոտները սրբում են, խուլները լսում են, մեռելները յարութիւն են առնում և աղքատներին աւետարանն է քարոզում, երանելի է նա, որ ինձ վրայ չի դալթակողուի»:

Բ.

Քիչ ժամանակից յետոյ Յիսուսն եկաւ Փիլիպպեայ կեսարիայի կողմերը, իւր աշակերտներին հարցնում էր և ասում. «Մարդիկ ինձ համար ինչ են ասում, ո՞վ է մարդու որդին»: Նրանք էլ ասացին. «Ոմանք ասում են՝ թէ Յովհաննէս Մկրտիչն է, միւսները՝ Եղիան և ուրիշներն էլ՝ Երեմիան կամ մարգարէներից մինը»:

Յիսուսը հարցրեց. «Իսկ դուք ինչ էք ասում, ո՞վ եմ ես»: Սիմօնը պատասխանեց և ասաց. «Դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծո՞ւ որդին»:

Յիսուսն ասաց. «Երանի՛ քեզ, Միծօն՝ որդի Յովհաննի, որովհետև մարմին և արիւն չչայտնեց քեզ այդ, այլ իմ երկնաւոր Հայրը. ես ասում եմ քեզ, որ դու ես վէժը և այդ վէժի վրայ կշինեմ իմ եկեղեցին, որին դժոխքի դռներն էլ չեն կարող շարժել: Քեզ կտամ երկնքի արքայութեան բանալիները և ինչ որ երկրիս վրայ կկապես, կապուած կլինի երկնքումը և ինչ որ կարձակես երկրիս վրայ, երկնքումն էլ արձակուած կլինի»: Արդեւեց իւր աշակերտներին, որ ոչ ոքի չասեն, թէ նա Յիսուս Քրիստոսն է:

«Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ»: Յովհ. դ. 69.

Մենք հաւատացինք և ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսն՝ Աստուծու որդին:

«Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեան»: Թ. ա. Եբր. Ժգ. 7.

Յիսուս Քրիստոսը նոյն է՝ երեկ, այսօր և յաւիտեան:

§ 30.

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԿՐՏԻ ՄԱՆԸ:

Հերովդէսը բռնեց Յովհաննէսին. կապեց և բանար զբաւ՝ իւր եղբայր Փիլիպպոսի կնոջ՝ Հերովդիայի համար, որովհետև Յովհաննէսը նրան ասում էր. «Վայել չէ քեզ, որ զբան կին ունենաս»: Հերովդէսն ուղում էր նրան սպանել, բայց ժողովրդից վախենում էր, որովհետև նրան ընդունում էր որպէս մարգարէ, որպէս բարեպաշտ մարդ, զրա համար էլ պաշտպանում էր:

Մի շարժար առիթ պատահեց—Թագաւորի ծրարնդեան օրն էր. մեծ խնջոյք տուաւ, ուր ներ-

կայ էին նախարարները, զօրապետները և Գալիլիայի բոլոր մեծամեծները: Այդտեղ էր և Հերովդիայի աղջիկը, որ կաքաւեց և շատ դուր եկաւ թէ թագաւորին և թէ բոլոր սեղանակիցներին:

Թագաւորն ասաց աղջկան. «Խնդրիր ինձնից ինչ որ ուզում ես և ես կտամ քեզ»: Թագաւորն երգուեց և ասաց. «Ինչ բան որ դու խնդրես ինձնից, կտամ քեզ, մինչև անդամ իմ թագաւորութեան կէսը»: Նա դուրս զնաց և տոաց մօրը. «Խնջ խնդրեմ»: Նա էլ ասաց. «Յովհաննէս Մկրտչի գլուխը»:

Աղջիկը շտապով թագաւորի մօտ եկաւ և ասաց. «Ես կամենում եմ, որ մի սկուտղի վրայ Յովհաննէս Մկրտչի գլուխն ինձ տաս»:

Թագաւորը շատ տրտմեցաւ, բայց որովհետև երգուել էր հիւրերի առաջ՝ չուզեց խօսքը լետ առնել: Իսկոյն դահիճ ուղարկեց և հրամայեց նրա գլուխը բերել: Գահիճը գնաց ու բանտի մէջ գլխատեց Յովհաննէսին. մի սկուտղի մէջ դրաւ գլուխը և աղջկան տուաւ. նա էլ իւր մօրը տարաւ:

Երբ այս բանը նրա աշակերտներն իմացան, եկան վեր առան նրա գլխակը. տարան թաղեցին ու եկան Յիսուսին յայտնեցին:

«Ան հաւատարիմ մինչև ՚ի մահ եւ տաց քեզ զպսակն կենաց»: Յայտ. Յովհ. բ. 10.

Հաւատարիմ եղիր մինչև ՚ի մահ, կեանքի պսակը քեզ կրամ:

§ 31.

ՍԵՐՄԱՆԱՅԱՆԻ ԼՈՒԱԿ:

Յիսուսը նստած էր ծովի ափում: Նրա մօտ հա-

ւաքուեց մեծ բազմութիւն: Նա իջաւ և նաւ նըստեց, իսկ ժողովուրդը կանգնած էր ափի վրայ:

Յիսուսն սկսեց նրանց հետ շատ բաների վրայ առականերով խօսել և ասել. «Ահա դուրս եկաւ սերմացանը ցանելու ու երբ նա ցանում էր, սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի վրայ, եկան երկնից թռչուններն ու կերան: Մի քանիսն էլ ընկան քարքարոտ տեղերում, որոնք շուտով բուսան հող չլինելու պատճառով, բայց երբ արևը ծագեց, տաքացան, և որովհետև արմատ չունէին՝ չորացան: Մի քանիսն էլ ընկան փշոտ տեղ, փշերը դուրս եկան և խեղդեցին նրանց: Մի քանիսն էլ ընկան լաւ հողի մէջ և պրտուղ տուին, որը հարիւր, որը վաթսուս և սրը երեսուս: Ով որ լսելու ականջ ունի, թո՛ղ լսէ:

«Երանի այնոցիկ է, որ լսեն զբանն Աստուծոյ եւ առնեն»: Դուկ. Ժա. 28.

Երանի է նրանց, որոնք Աստուծու խօսքը լսում են և կատարում:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»: Մտթ. Ե. 8.

Երանի սուրբ սիրտ ունեցողներին, որովհետև նրանք Աստուծուն պիտի տեսնեն:

§ 32.

ՈՐՈՍԻ ԱՌԱՎԷ:

Յիսուսը մի ուրիշ առակ էլ ասաց—Երկնքի արքայութիւնը նման է մի մարդու, որ իւր արտումը բարի սերմը ցանեց. բայց երբ մարդիկ քուն եղան, թշնամին եկաւ ցորենի մէջ որոմներ ցանեց ու գնաց: Երբ խոտը բուսաւ, պտուղ տուաւ, այն ժամանակ որոմներն էլ երևեցան:

Տեսնա՞լիք ծառաները մօտ եկան և ասացին. «Տէր, մի՞թէ գու քո արտումը բարի սերմը չցանեցիր, որոմները որտեղից են»: Նա պատասխանեց և ասաց. «Այդ թշնամի մարդու արած է»: Ծառաներն ասացին. «Կամենո՞ւմ ես, որ գնանք և գուրս հանենք»:

Նա պատասխանեց. «Այ, մի գուցէ որոմները քաղելիս, ցորենն էլ նրանց հետ արմատախիլ անէք, թողէք որ երկուսն էլ միասին մեծանան մինչև հունձը, իսկ հնձի ժամանակ կասեմ հնձողներին՝ առաջ որոմները քաղեցէք և խուրձ կապեցէք՝ այրելու, իսկ ցորենը ժողովեցէք իմ ամբարի մէջ:

«Եւ գոր օրինակ կալ մնայ մարդկան մի անգամ մեռանել, եւ չես այնորիկ դատաստան»: Թ. ա. Երբ. Թ. 27.

Մարդկանց համար սահմանուած է, որ մի անգամ պիտի մեռնեն, իսկ նրանից յետոյ դատաստան կլինի:

Մի գատէք ուրիշներին, որ ձեզ էլ ուրիշները չդատեն: Մի գատէք ուրիշներին, որ ձեզ էլ ուրիշները չդատեն:

§ 33.

ԱԳԱՐԱՎԻ ԳԱՆՁԻ ԵՒ ՄԱՐԳԱՐՏԻ ԱՌԱՎԷ:

Երկնքի արքայութիւնը նման է ազարակում թաքցրած գանձին, որ մի մարդ գտաւ. թաքկացրեց. ուրախութիւնից գնաց ծախեց իւր բոլոր ստացուածը և գնեց այն ազարակը: Դարձեալ նման է երկնքի արքայութիւնը մի վաճառականի, որ գեղեցիկ մարգարիտ էր որոնում և երբ մի թանկագին մարգարիտ գտաւ, գնաց վաճառեց ունեցած չունեցածը և գնեց այն մարգարիտը:

«Զի ամենայն սուրբ բարիք եւ ամենայն պարգևք  
«կատարեալք ի վերուստ են իջեալ առ ՚ի Հօրէն լուսոյ»:  
Թ. Յակ. ա. 17.

Բոլոր բարի սուրբքերը և կատարեալ պարգևները վերե-  
ւոյն են իջեալ: Լուսոյ Հօրիցը:

«Զինչ կայ իմ բնաւ յերկինս կամ ՚ի քէն զինչ եւս  
«խնդրեցից յերկրի»: Սաղ. հբ. 25.

Ո՛վ ունիմ ես երկսքումը կամ քեզնից էլ ինչ խնդրեմ  
երկրիս վրայ:

§ 34.

ՄԵՏ ԸՆԹՐԻՔԻ ԱՌԱՎԸ:

«Մի մարդ մեծ ընթրիք պատրաստեց և շատե-  
րին հացի հրաւիրեց: Ընթրիքի ժամանակ ուղարկեց  
իւր ծառան, որ հրաւիրուածներին ասէ. «Սկէք, որով-  
հետեւ ամեն բան պատրաստ է»:

Հրաւիրեալներն ամենքն էլ հրաժարուեցան գա-  
լու—առաջինն ասաց. «Սգարակ գնեցի, պէտք է  
գնամ տեսնեմ, աղաչում եմ քեզ, ինձ հրաժարուած  
համարիլ»: Միւսն ասաց. «Հինգ լուծ եզն եմ գնել,  
գնում եմ փորձելու, աղաչում եմ քեզ, ինձ հրաժա-  
րուած համարիլ»: Երրորդն էլ ասաց. «Աին եմ ա-  
ռել, ուստի և չեմ կարող զալ»:

Ծառան եկաւ և այս բոլորը պատմեց տիրոջը:  
Տանտէրը բարկացած ասաց ծառային. «Դուքս գնա  
քաղաքի հրապարակներն, ու փողոցները և այտտեղ  
բեր աղքատներին, խեղերին, կաղերին և կոյրերին»:  
Ծառան ասաց. «Տէր, կատարեցի այնպէս, ինչպէս հրա-  
մայեցիլք, բայց տանն էլի տեղ կայ»: Տէրն ասաց ծառա-  
յին. «Դուքս գնա ճանապարհները և քաղաքի ցանկից  
դուրս ու ստիպիլք ամենին, որ այտտեղ գան, որպէսզի

իմ տունը լցուի»: Աշմարիտն եմ ասում, այն հրաւիրուած  
մարդկանցից ոչ մէկն իմ ընթրիքը չի ճաշակիլ»:

«Մի սիրեք զաշխարհս, եւ մի որ ինչ չաշխարհի է. եթէ  
«ք սիրէ զաշխարհ, ոչ է ի նմա սէր Հօր: Աշխարհս ան-  
«ցանէ եւ ցանկուծիւն, իսկ որ առնէ զկամս Աստուծոյ,  
«մնայ ՚ի յաւիտեան»: Ի. Թ. Յովհ. բ. 15. 17.

Մի սիրեք աշխարհը և այն ամենը, ինչ որ աշխարհի  
մէջն է. եթէ մինն աշխարհը սիրէ, կնշանակէ նրա մէջ  
Հօր սէր չկայ: Որովհետեւ աշխարհս անցուորական է, նրա  
ցանկուծիւնները նոյնպէս. իսկ ով Աստուծու կամքը  
կատարէ, յաւիտեան կմնայ:

§ 35.

ԱՆԿՈՒՄԱՆ ԵՒ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՎԵՆՅՈՒՄ ԳՆԱԿ-  
ՔՈՒՄ ԵՒ ԿԱՆԻ ԲՈՂՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՎԵՆՅՈՒՄ ԵՒ  
ՆԵՂՆԱՆՆԵՐԻ ՄՈՍ:

ա.

Յիսուսը քարոզում էր իւր քաղաքում Գափառ-  
նայումում: Այնտեղ ներկայ էին բազմաթիւ փարի-  
սեցիներ և օրինաց վարդապետներ, որոնք եկած էին  
Գալիլիայից և Հրէաստանից: Յիսուսը նրանց ամենին  
էլ օղնում էր:

Այդ բոլորին մահճի վրայ դրած մի անդամա-  
լոյծ բերին և աշխատում էին, որ մի կերպով ներս  
տանեն և Յիսուսի առաջը դնեն: Բայց ամբողջ պատ-  
ճառով չկարողացան ներս մտնել. կտուրը բարձրա-  
ցան. տան առաստաղը բացին և մահճով կախ արին  
հիւանդին Յիսուսի ոտների մօտ: Յիսուսը նրանց հա-  
ւատը տեսնելով ասաց հիւանդին. «Որդեանկ, քո չան-  
ցանքը ներում է քեզ»:

Դպիրները և փարիսեցիներն սկսեցին մտածել և

ասել. «Ո՛վ է սա՛ որ հայհոյանք է խօսում. ո՞վ կարող է յանցանքը ներել՝ բացի Աստուծուց»:

Յիսուսը՝ նրանց խորհուրդն իմանալով պատասխանեց և ասաց. «Ի՞նչ էք մտածում ձեր սրբտերում. ո՞րն է աւելի հեշտ—ասել քո յանցանքը ներում է քեզ, թէ՛ վեր կաց և ման եկ: Իմացէք որ մարդու Որդին իշխանութիւն ունի երկրի վրայ մեզքեր ներելու: Յետոյ դարձաւ անդամալոյճին և ասաց. «Քեզ եմ ասում, վեր կաց, մահիճդ առ և գնա՛ քո տուն»: Հիւանդն իսկոյն վեր կացաւ, առաւ իւր մահիճը, գնաց տուն և փառարանում էր Աստուծու անունը:

Զարմանքն ամենին պատեց: Փառք էին տալիս Աստուծուն և ահով լցուած ասում էին, թէ նորանշան բաներ տեսանք այսօր:

Սրանից յետոյ տօն էր: Յիսուսն Երուսաղէմ եկաւ: Քաղաքի մէջ Պրօպատիկէ աւագանի մօտ, որ երբայցեքէն Բեդհէզդա է կոչուում, հինգ օրահ կար, ուր պառկած էին շատ հիւանդներ—կոյրեր, կաղեր, գօսացածներ և սպասում էին ջրի յուզուելուն, որովհետեւ Տիրոջ հրեշտակը ժամանակ-ժամանակ իջնում էր և աւագանի ջուրը յուզում: Ջրի յուզուելուց յետոյ՝ ով առաջինն էր ընկնում նրա մէջ՝ բժշկուում էր՝ ինչ հիւանդութիւն էլ որ ունենար:

Այնտեղ մի մարդ կար, որ երեսունևութը տարի հիւանդ էր: Երբ Յիսուսը նրան տեսաւ և իմացաւ թէ քանի տարի այնտեղ պառկած է, ասաց. «Կամենում ես բժշկուել»: Հիւանդը պատասխանեց.

«Տէր, ես ոչ ոք չունիմ, որ ջրի յուզման ժամանակն ինձ աւագանը ձգէ, իսկ ես մինչև որ տեղիցս կշարժուեմ, ուրիշն ինձնից առաջ է իջնում»: Յիսուսն ասաց. «Վեր կաց, մահիճդ առ և գնա՛»: Այն թարդն իսկոյն առողջացաւ. վեր կացաւ, առաւ իւր մահիճն և գնաց:

Այդ օրը շաբաթ էր: Հրէաներն ասացին բրժկուածին. «Այսօր շաբաթ է, ինչպէս կարելի է որ մահիճդ տանում ես»: «Ինձ բժշկողն ասաց—վեր առ մահիճդ և գնա՛»: Այն ժամանակ հարցրին նրան. «Ո՛վ է այն մարդը, որ քեզ ասաց—մահիճդ առ և գնա՛»: Բայց բժշկուածը չէր ճանաչում Յիսուսին, որովհետեւ ամբօխի պատճառով խոյս էր տուել այնտեղից:

Սրանից յետոյ Յիսուսը հանդիպեց նրան տաճարում և ասաց. «Ահա՛ դու առողջացար, այլևս չբժեղանչես, որպէսզի աւելի վատ բան չլինի քեզ»: Այն մարդը գնաց և հրէաներին պատմեց, որ իրան բժշկողը Յիսուսն է եղել: Սրա համար հրէաները հալածում էին նրան, որ նա շաբաթ օրն էր այդ բանն արել: Յիսուսը պատասխանեց նրանց և ասաց. «Իմ Հայրը մինչև այժմ դործել է, ես էլ դործուեմ»: Հրէաներն աւելի սկսեցին հալածել, որովհետեւ նա ոչ թէ միայն շաբաթն էր քանդում, այլ Աստուծուն իւր հայրն էր անուանում և իւր անձը նրան հաւասար դարձնում:

«Հաւատարիմ է բանս, եւ ամենայն ընդունելութեան արժանի է, զի Յիսուս Քրիստոս եկն յաշխարհ փրկել զմեզաւորս»: I. Թ. ա. Տիմոթ. ա. 15.  
Աճմարիտ է այս խօսքը և ամէն ընդունելութեան ար-

ժանի, որ Յիսուս Քրիստոսն աշխարհ եկաւ մեղաւորներին փրկելու համար:

«Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ»: Մտթ. ժա. 29.

Ինձ մօտ եկէ՛ք, ո՛վ դադրածներ և բեռնաւորուածներ, ես ձեզ հանգստութիւն կտամ:

§ 35. ա.

ՅԱՆՅԱՒՈՐ ԿԻՆԷ:

Փարիսեցիներէց մէկն աղաչում էր Յիսուսին, որ իւր հետ հաց ուտէ: Յիսուսը չմերժեց նրա խնդիրը—գնաց փարիսեցու տունը և սեղան նստաւ: Այն քաղաքումը մի մեղաւոր կին կար. սա երբ իմացաւ որ Յիսուսը փարիսեցու տանն է, վեր առաւ մի շիշ անուշահոտ իւզ. եկաւ Յիսուսի մօտ. լաց էր լինում. արտասուքով ոտները թրջում էր. գլխի մազերովը սրբում էր. համբուրում էր ոտները և բերած իւզովն օծում: Փարիսեցին այս բանից գայթակղուեց և մտքումն ասաց. «Եթէ սա մարգարէ լինէր, անշուշտ կիմանար, թէ իրան մերձեցողն ո՞վ է կամ ինչպիսի կին է»: Յիսուսը նրա սրտինն իմացաւ, ուստի և ասաց. «Սիմօն, քեզ մի բան ունի՞մ ասելու»: Նա էլ ասաց. «Ասա, վարդապետ»: Յիսուսն ասաց. «Մի մարդ երկու պարտական ունէր—առաջինը հինգ հարիւր դահեկան էր պարտ, իսկ երկրորդը՝ յետուին: Պարտատէրերն աղքատ էին և անկարող տիրոջ պարտքը վճարելու, ուստի տէրը երկուսին էլ ներեց: Ասա Սիմօն, այդ երկուսից ո՞րն աւելի կրտսիր էր տիրոջը»: Սիմօնը պատասխանեց. «Նա, որի պարտքն աւելի էր»: «Աւղիղ դատեցիր, Սիմօն» և դառնալով դէպի կինը՝ Սիմօնին ասաց. «Տեսնո՞ւմ ես այս կնոջ վարմունքը, երբ ես քո տունն եկայ, ջուր էլ չտուիր ոտներս լուանալու համար, իսկ սա իւր արտասուքով թրջում է ոտներս և մազերով էլ սրբում: Դու ինձ սովորական համբուր չտուիր, իսկ սա՝ քանի տուն եմ եկել՝ ոտներս համբուրելուց չէ դադարում: Դու հասարակ իւզով չօծեցիր գլուխս, իսկ սա անուշահոտ

իւզով օծեց ոտներս: Սրա համար էլ ասում եմ, որ սրա շատ մեղքերը կներուին, որովհետև շատ սիրեց, իսկ որին քիչ կներուի, նա քիչ էլ կսիրէ»: Այս խօսքերից չետոյ դառնալով կնոջն ասաց. «Քո մեղքերը ներում են»: Սեղան նստողներին զարմացք պատճառեց Յիսուսի վարմունքը, ուստի միմեանց երեսին նայելով ասում էին. «Ո՞վ է սա, որ մեղք էլ է ներում»: Յիսուսն ասաց կնոջը. «Քո հաւատը փրկեց քեզ, զնա խաղաղութիւնով»:

§ 35. բ.

ՉԱՅՅՈՂ ԿԻՆԷ:

Դպիրները և փարիսեցիները մի կին բերին Յիսուսի մօտ: Կնոջը կանգնացրին ներկայ եղողների մէջտեղն ու հարցրին Յիսուսին. «Վարդապետ, այս կինը յայտնի կերպով բռնուել է շնութիւն անելիս: Մովսէսն իւր օրէնքում հրամայում է քարկոծ անել այդպիսիներին, դու ի՞նչ ես ասում»: Այս բանը Յիսուսին փորձելու համար էին անում, որ տեսնեն Մովսէսի օրէնքի համաձայն վճիռ կտայ, թէ ուրիշ բան կասէ, որպէսզի վերջը ժողովրդի առաջ չար խօսեն նրա մասին: Յիսուսը փոխանակ իւր հակառակորդներին պատասխան տալու, կուացաւ և սկսեց մատով գրել գետնի վրայ: Դպիրները և փարիսեցիները նորից հարցրին: Յիսուսը վեր նայեց և ասաց. «Ո՞վ ձեզանից իրան աւելի անմեղ է զգում, թող առաջին քարը նա ձգէ սրա վրայ»: Յիսուսը նորից կուացաւ և շարունակեց գետնի վրայ գրելու: Որովհետև ներկայ եղողներից ոչ ոք իրան աւելի արդար չհամարեց, իրանց խղճից չանդիմանութիւն ստանալով՝ մէկը միւսի ետեից հեռացան՝ առաջինից սկսած մինչև վերջինը: Յիսուսը միայնակ մնաց, կինը դեռ ևս մէջտեղում կանգնած էր: Յիսուսը վեր նայեց և բացի կնոջից ոչ ոքի չտեսաւ, դարձաւ դէպի նա և ասաց. «Ո՞վ կին, ո՞ր ես քեզնից գանգատողները, քեզ ոչ ոք չդատապարտեց»: «Ո՛չ, տէ՛ր»: Յիսուսն աւելացրեց. «Ես ևս չեմ դատապարտում քեզ, զնա և այսուհետև այլևս չմեղանչես»:

✓ § 36.

ՅԻՍՈՒՍԸ ՍՍՍՏՈՒՄ Է ՄՐՐԿԿԻՆ:

Յիսուսը վերստին Գալիլիա դարձաւ. կամեցաւ գնալ ծովի միւս կողմը և քարոզել: Նաւ մտաւ. աշակերտներն էլ հետևեցին նրան: Եւ ահա ծովի մէջ մեծ փոթորիկ բարձրացաւ, այնպէս որ ալիքները նաւը ծածկում էին, իսկ Յիսուսը քնած էր նաւի յետևում:

Աշակերտները մօտ եկան, զարթեցրին նրան և ասացին. «Տէր, փրկիր մեզ, կորչում ենք»: Յիսուսն ասաց. «Ի՛նչ վախկոտներ էք, թերահաւատներ»: Սաստեց քամիներին և մեծ խաղաղութիւն տիրեց:

Մարդիկ զարմացան այս բանի վրայ և ասում էին. «Սա ի՛նչպիսի անձն է, որ քամիներն էլ, ծովն էլ հնազանդում են սրան»:

«Եթէ Աստուած ՚ի մեր կոյս է, ո՞վ էցէ մեր հակառակ»:  
Թ. ա. Հոռմ. ը. 31.

Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կարող է մեզ հակառակ վիճել:

«Եւ այս է յաղթութիւնն՝ որ յազթէ աշխարհի, հաւատքն մեր»: Թ. Յովհ. է. 4.

Մեր հաւատքն է, որ աշխարհին յաղթում է:

§ 36. ա.

✓ ՅԻՍՈՒՍԸ ԳՆՈՒՄ Է ԾՈՎԻ ՎՐԱՅՈՎ:

Բեթսաիդա քաղաքի մօտ գտանուող անապատում 5,000 ին կերակրելուց յետոյ, Յիսուսն արձակեց նրանց, իսկ աշակերտներին պատուիրեց, որ նաւ մտնեն և իրանից առաջ ծովի միւս ափն անցնեն: Յիսուսը լեռու բարձրացաւ և առանձին աղօթք էր անում մինչև երեկոյ: Աշա-

կերտներն արդէն ծովի մէջտեղն էին. նաև արեկոծում էր, որովհետև քամին հակառակ կողմից էր փչում: Գիշերուան մէջ՝ Յիսուսը ծովի վրայ ման գալով՝ եկաւ նրանց մօտ: Աշակերտները շփոթուեցան, երբ նրան ծովի վրայ ման գալիս տեսան: Այս բանը երևոյթ էին համարում, իրանց աչքերին չէին հաւատում, ուստի երկիւղից աղաղակել սկսեցին: Յիսուսը նրանց հետ խօսեց և ասաց. «Քնջ եղէք, մի վախենաք, ես եմ»: Պետրոսը պատասխան տուաւ նրան և ասաց. «Տէր, եթէ դու ես, հրամայիր ինձ, որ ջրի երեսով քեզ մօտ գամ»: Յիսուսն ասաց. «Ե՛կ», Պետրոսը նաւից իջնելով՝ ջրի վրայով գնում էր Յիսուսի մօտ: Առաքեալը, երբ տեսաւ, որ քամին սաստիկ է, վախեցաւ. սկսեց ընկզմել. ուստի աղաղակեց և ասաց. «Տէր, փրկիր ինձ»: Յիսուսը մեկնեց ձեռք բռնեց նրան և ասաց. «Թերահաւատ, ի՛նչու երկմտեցիր»: Յիսուսն և Պետրոսը երբ նաւը մտան, քամին իսկոյն հանդարտեց: Նաւի մէջ եղողները մօտ եկան, երկրպագութիւն տուին Յիսուսին և ասացին. «Ճշմարիտ որ՝ դու Աստուծու որդի ես»:

Անցան ծովի միւս կողմն և եկան Կեննեսարեթի երկիրը: Այնտեղի մարդիկն իսկոյն ճանաչեցին նրան. մարդ ուղարկեցին շրջակայքը յայտնելու Յիսուսի գալուստը, որպէսզի հիւանդները և կարիք ունեցողները զան բժշկուելու: Իսկոյն անթիւ հիւանդներ նրա մօտ հաւաքուեցան: Բազմութիւնն այնքան մեծ էր, որ շատերը դռն կլինէին, եթէ նրա հանդերձն անգամ շօշափէին և նրանք, որոնք շօշափեցին, փրկուեցան:

§ 37.

ԿՈՅՐ ԾՆՈՒՄԾԻ ԲԺՃԿՈՒԹԻՒՆԸ:

Յիսուսը մի անգամ տաղաւարահարաց տօնին եկաւ Երուսաղէմ: Այնտեղ նա մի մարդ տեսաւ, որ իժնէ կոյր էր: Աշակերտները հարցրին Յիսուսին և ասացին. «Ռաբբի, ո՞վ է մեղանչել. սա՞ թէ սրա

ճնողները, որ կոյր է ծնուել: «Յիսուսը պատասխանեց. «Ոչ դա է մեղանչել և ոչ զրա ճնողները. այլ որ Աստուծու գործերը յայտնի լինին զրանով. ես պէտք է իմ առաքողի գործերը գործեմ՝ քանի որ օր է, երբ զիշերը կգալ, այն ժամանակ ոչ ոք չէ կարող գործել»: Այս ասելով՝ թքեց դետնի վրայ. ցելս շինեց. քսեց կոյրի աչքերին ու ասաց. «Գնա և Աելովամայ աւաղանում լուացուիր»: Նա դնաց լուացուեց. չետ դարձաւ և տեսնում էր:

Գրացիները և նրան առաջուց տեսնողներն ասում էին. «Սա նա չէ, որ նստած մուրում էր»: Մի քանիսներն ասում էին. «Նա է», իսկ մի քանիսները՝ «Նրան նման է», իսկ ինքն ասում էր, «ես եմ»: Այն ժամանակ ասացին նրան. «Հապա աչքերդ ինչպէս բացուեց»: Նա պատմեց, ինչ որ Յիսուսն արել էր: Նրան տարան փարիսեցիների մօտ: Օրը շաբաթ էր, երբ Յիսուսը նրա աչքերը բժշկեց: Փարիսեցիները Հարցրին, թէ ինչպէս է նրա աչքերը բացուել և նա էլ պատմեց: Փարիսեցիներից մի քանիսն ասացին. «Այն մարդը Աստուածանից չէ, որովհետև շաբաթը չէ պահում»: Իսկ միւսներն ասում էին. «Մի մեղաւոր մարդ ինչպէս կարող է այդպիսի նշաններ անել»: Ներկայ եղողները կուսակցութեան բաժանուեցան: Նրանք դարձեալ ասացին կոյրին. «Գու ինչ կասես նրա մասին, որ աչքերդ բաց արաւ»: Նա պատասխանեց և ասաց. «Մարդարէ է նա»:

Հրէաները չէին հաւատում, թէ նա կոյր է եղել և բժշկուել է, ուստի նրա ճնողներին կանչեցին և Հարցրին. «Սա է ձեր որդին, որի հա-

մար ասում էիք, թէ կոյր ծնուեց, Հապա ինչպէս է որ Հիմա տեսնում է»: Ծնողները պատասխանեցին. «Այո, սա մեր որդին է, նա կոյր ծնուեց, բայց թէ Հիմա ինչպէս է որ տեսնում է՝ չգիտենք, ինքը չափահաս է, իրան Հարցրէք»: Ծնողներն այսպէս խօսեցին. նրանք վախենում էին հրէաներից, որովհետև վերջինները որոշել էին, եթէ մինը Յիսուսին Քրիստոս դաւանէ, ժողովրդանոցիցը դուրս անեն:

Երկրորդ անգամ կանչեցին կոյր ծնած և բժշկուածին ու ասացին. «Աստուծուն փառք տուր, մենք գիտենք, որ այն մարդը մեղաւոր է»: Նա պատասխանեց. «Թէ նա յանցաւոր է, այդ չգիտեմ ես, բայց այսքանը Հաստատ գիտեմ, որ ես կոյր էի, իսկ այժմ տեսնում եմ»: Դարձեալ Հարցրին նրան. «Ի՞նչ արաւ նա քեզ, ինչպէս բացեց քո աչքերը»: Նա պատասխանեց. «Արդէն ձեզ ասացի, չլսեցիք. միթէ դուք էլ էք կամենում նրան աշակերտ լինել»: Այն ժամանակ նրանք Հալհուցեցին և ասացին. «Գու ես նրա աշակերտը, իսկ մենք Մովսէսի աշակերտներն ենք. մենք գիտինք, որ Աստուած Մովսէսի Հետ խօսեց, իսկ սրան չգիտենք, թէ որտեղից է»: Բժշկուածը պատասխանեց նրանց և ասաց. «Հէնց դա է զարմանալուն, որ դուք չէք իմանում, թէ որտեղից է նա, որ իմ աչքերը բաց արաւ: Մենք գիտենք, որ Աստուած մեղաւորներին չէ լսում, այլ եթէ մէկը աստուածալաշտ է և նրա կամքը կատարում է, նրան լսում է: Մինչև այսօր դեռ չէ լսուած, որ մինը կոյր ծնանի աչքերը բաց արած լինի. եթէ սա Աստուածանից չլինէր, ոչինչ

չէր կարող անել»: Այն ժամանակ պատասխանեցին. «Գու ինքզ մեղքի մէջ ես ծնուել և կամենում ես մեզ բան սովորցնել»: Նրան դուրս արին:

Յիսուսն իմացաւ այս բանը: Երբ բժշկուածին տեսաւ, ասաց. «Գու Հաւատո՞ւմ ես Աստուծու Որդուն»: Նա պատասխանեց և ասաց. «Տէր, ո՞վ է նա, որ ես Հաւատամ նրան»: Յիսուսը պատասխանեց. «Գու ինքզ նրան տեսար, քեզ Հետ խօսողն էլ նա ինքն է»: Կոյրը պատասխանեց. «Հաւատում եմ, Տէր» և երկրպագեց նրան»:

»Նրանեվ է այր, որ համբերիցէ փորձանաց, զի եթէ ընտիր եւս՝ գտանիցի, առցէ զպսակն կենաց»: Թ. Յակ. ա. 12.

Երանելի է այն մարդը, որ փորձութեանը համբերում է, որովհետեւ եթէ փորձուելով ընտիր դուրս գալ, կենաց պսակին կարժանանայ:

»Ձի գոր սիրէ Տէր, խրատէ»: Թ. ա. Եբր. ժա. 6.

Աստուած ումը որ սիրում է, խրատում է:

»Ես եմ լոյս աշխարհի, որ գալ զկնի իմ՝ ընդ խաւար մի գնացէ, ալ ընկալցի զլոյսն կենաց»: Յովհ. բ. 12.

Աշխարհի լոյսը ես եմ, ով ինձ կհետեւէ, խաւարի մէջ չի գնալ, ալ կենաց լոյսը կընդունէ:

§ 38.

ԱՅԳՈՒ ՄՂԱԿՆԵՐԻ ԱՌԱԿԸ:

Երկնքի արքայութիւնը նման է մի տանուտէր մարդու, որ առաւօտանց կանուխ դուրս եկաւ այգու Համար մշակներ վարձելու: Մշակները Հետ օրը մի դահեկանի խօսելով՝ ուղարկեց իւր այգին: Փամբ երեքի մօտ դուրս եկաւ, տեսաւ ուրիշ մշակներ, որոնք հրապարակում անգործ կանգնել էին և ասաց

նրանց. «Գուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժան է, կտամ»: Նրանք էլ գնացին: Գարձեալ հրապարակ դուրս եկաւ ժամը վեցին և իննին ու նոյնպէս արաւ: Փամբ տասն և մէկին մօտ՝ դուրս գալով՝ ուրիշ մշակներ գտաւ պարապ կանգնած և ասաց. «Ինչո՞ւ էք այստեղ ամբողջ օրը պարապ կանգնել»: Ասացին նրան. «Որովհետեւ մեզ ոչ ոք չվարձեց»: Այն ժամանակ ասաց. «Գուք էլ գնացէք իմ այգին և ինչ որ արժանէ, կառնէք»:

Երեկոյեան այգու տէրը տան վերակացուին ասաց. «Մշակներին կանչիր և վարձ տո՛ւր նրանց՝ յետիններեցն սկսած մինչև առաջինները»: Փամբ տասն և մէկին եկողները մօտեցան և մի մի դահեկան ստացան: Առաջին մշակներն էլ եկան և կարծում էին, թէ աւելի կստանան, բայց նրանք էլ մի դահեկան ընդունեցին: Բայց երբ ստացան, տանտիրոջից տրտնջացին և ասացին. «Այդ յետինները մի ժամ գործեցին և դրանց էլ մեզ Հետ Հաւատար վարձատրեցիր, մենք ենք օրուայ տաքութիւնը և ծանրութիւնը քաշել»: Նա էլ նրանցից մինին պատասխանեց և ասաց. «Ընկեր, չեմ գրկում քեզ, չէ՞ որ դու ինձ Հետ մի դահեկանով համաձայնեցար, քո վարձն ա՞ռ և գնա՛, ես կամենում եմ որ այն յետինին էլ քեզ չափ տամ, կամ միթէ ես իշխանութիւն չունիմ իմ ստացուածքի Հետ այնպէս վարուելու, ինչպէս իմ ցանկութիւնն է, ինչու ես նախանձում իմ առատաձեռնութեան վրայ»:

Այսպէս յետիններն առաջին կլինին, իսկ առաջինները՝ յետին:

«Ասպէս եղիցին յետինք առաջինք եւ առաջինք չե-  
տինք»: Մտթ. Ի. 16.

§ 39.

ՔԱՆՔԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՎԸ:

Մի մարդ օտար երկիր էր գնում: Կանչեց ծա-  
ռաներին և իւր ունեցածը նրանց յանձնեց — մէկին  
Հինգ քանքար տուաւ, միւսին՝ երկու, իսկ երրորդին՝  
մի — իւրաքանչիւրին իւր կարողութեան համեմատ և  
շտապով հեռացաւ:

Հինգ քանքար ստացողը գործ դրաւ փողը և  
նրանով ուրիշ Հինգ քանքար և ս շահուեց. նույնպէս  
և երկու քանքար ստացողը գործ դրաւ և երկու  
քանքար և ս շահեցրեց: Իսկ մի քանքար ստացողը  
գնաց գետինը փորեց ու տիրոջ քանքարը թաքկացրեց:

Մի քանի ժամանակից յետոյ վերադարձաւ ծա-  
ռաների տէրը և նրանցից հաշիւ պահանջեց: Հինգ  
քանքար ստացողը յառաջ եկաւ և Հինգ նոր քան-  
քար և ս տիրոջը տարով՝ ասաց. «Տէր, դու ինձ Հինգ  
քանքար տուիր, ահա Հինգ ուրիշ քանքար և ս աշ-  
խատել եմ դրանով»: Տէրն ասաց նրան. «Չա՛տ լաւ,  
բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ քիչ բանի  
մէջ հաւատարիմ գտնուեցար, շատ բաների վրայ  
կառավարիչ կնշանակեմ քեզ — եկ, մասնակից եղիր  
քո տիրոջ ուրախութեանը»: Մօտ եկաւ երկու քան-  
քար ստացողն և ասաց. «Ինձ երկու քանքար տուիր,  
տէր, ահա ուրիշ երկուսն և ս շահել եմ դրանով»: Տէրն  
ասաց նրան. «Չա՛տ լաւ, բարի և հաւատարիմ  
ծառայ, որովհետեւ դու քիչ բանի մէջ հաւատարիմ  
գտնուեցար, շատ բաների վրայ կառավարիչ կնշանա-

կեմ — եկ, մասնակից եղիր քո տիրոջ ուրախութեանը»:

Մօտ եկաւ մի քանքար ստացողն և ասաց. «Տէր,  
ես գիտէի, որ դու խիստ մարդ ես, հնձում ես այն-  
տեղից, ուր չես ցանել և հաւաքում ես, ուր չես  
փռել. ուստի վախեցայ քեզնից, գնացի և քո քան-  
քարը գետնի մէջ թաքկացրի — ահա քեզ քո տուածը».  
«Չա՛ր և վատ ծառայ, երբ դու գիտէիր, որ ես հրն-  
ձում եմ այնտեղից, ուր չեմ ցանել և հաւաքում,  
ուր չեմ փռել, ինչու չցանձնեցիր իմ արծաթը սե-  
ղանաւորին, որ ես այժմ տոկոսով ստանայի նրան-  
ցից: Աւրեմն առէ՛ք դրանից այդ քանքարը և տուէ՛ք  
տառն քանքար ունեցողին, իսկ այս անպիտան ծա-  
ռային հանէ՛ք դրսի խաւարը, այնտեղ կլինի լացը  
և ատամների կրճտելը»:

«Արդ ինչպիսի է ի մէջ հազարապետաց, եթէ ոք հաւա-  
տարիմ գտցի»: I Թ. ա. Կրնթ. դ. 2.

Տնտեսների մէջ այն է պահանջուում, որ մինը հաւա-  
տարիմ գտնուի:

«Մեծատուն եւ աղքատ միմեանց պատահեցին, երկր-  
ցունց այցելութիւն առնէ Տէր»: Առակք. Մող. Իբ. 2.

Հարուստը և աղքատը՝ երկուսը ևս միասին պիտի ապ-  
րեն, այդ Աստուծու կամքովն է:

§ 39. ա.

ԱՆԻՐԱՆԻ ԴԱՍԱՆՈՐԻ ԱՌԱՎԸ:

Յիսուսը մի առակ ասաց այն բանի մասին, թէ միշտ  
պէտք է աղօթել և չձանձրանալ: Մի դատար որ կար մի  
քաղաքում: Եւ Աստուածանից չէր վախենում և մարդ-  
կանցից էլ չէր ամաչում: Այն քաղաքումը մի որբեակցի  
էլ կար, որ նրա մօտ շատ անգամ էր գալիս և ասում.  
«Ազատիր ինձ իմ հակառակորդի ձեռից — մի ձանապարհ

ցոյց տուր, որ նրանից կարողանամ ազատուել»։ Դատաւորն առժամանակ ուշադրութիւն չդարձրեց նրա խնդրին ր բաց չետոյ մտքումն ասաց. «Թէև Աստուածանից չեմ վախենում և մարդկանցից չեմ ամաչում, բաց որովհետև այս որբեւորին ինձ ձանձրացնում է, ուստի նրա խնդիրը կլնեմ, որպէսզի միւս անգամ չգայ և անհանգիստ չանէ ինձ»։

Այն ժամանակ Յիսուսն ասաց. «Լաւ լսեցէք անիրաւ դատաւորին — եթէ նա իրան դիմող որբեւորու խընդիրը կատարեց, միթէ Աստուած իւր սիրելիների խնդիրը չի կատարիլ, որոնք գիշեր ու ցերեկ աղաղակում են դէպի նա։ Ես ձեզ ասում եմ, որ Աստուած նրանց խնդիրն անշուշտ կլսէ»։

§ 40.

ՄԵԾԱՏԱՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻ ԱՌԱՎԷ:

Հարուստի մէկը հագնում է ծիրանի և բեհեզ և ամենայն օր փառաւոր կեանք էր վարում։ Մի աղքատ մարդ էլ կար՝ Ղազարոս անուով, որ հարստի դռանն էր ընկած, վերքերով լիքը և կերակրւում էր նրա սեղանից թափուած փշրանքներով։ Զները գալիս էին և նրա վերքերը լիզում էին։

Աղքատը մեռաւ։ Հրեշտակները տարան նրան Աբրահամի գոգը։ Հարուստն էլ մեռաւ ու թաղուեց։ Երբ սա դժոխքում տանջանքների մէջ աչքերը բաց արաւ և հեռուից տեսաւ Ղազարոսին Աբրահամի գոգում նստած, աղաղակեց ու ասաց. «Հայր Աբրահամ, ողորմիր ինձ, ուղարկիր Ղազարոսին, որ մատի ծայրը ջրով թաց անէ ու պապակած լեզուս հովացնէ, որովհետև այս կրակի բոցի մէջ տանջւում եմ»։ Աբրահամը պատասխանեց և ասաց. «Յիշիր, որդեակ, որ դու քո կենդանութեան ժամանակ վայելում էիր

քոյր երկրային բարութիւնները, իսկ Ղազարոսը չարչարում էր. այժմ նա այստեղ մխլթարւում է, իսկ դու տանջւում ես։ Բացի զրանից մեր և ձեր մէջ մեծ անդունդ կայ, այնպէս որ՝ ոչ մեր մօտից ձեր մօտ կարելի է անցնել և ոչ ձեր մօտից մեզ մօտ գալ»։

Հարուստն ասաց. «Աղաչում եմ, Հայր, ուղարկիր Ղազարոսին մեր տուն, ես ուրիշ հինգ եղբայր ևս ունիմ, թող գնայ նրանց զուշացնէ, որպէսզի նրանք էլ չգան այս տանջանքի տեղը»։ Աբրահամը պատասխանեց. «Նրանք ունին Մովսէս և մարգարէներ, թող նրանց լսեն»։ Հարուստը պատասխանեց. «Ոչ, Հայր Աբրահամ, եթէ մեռելներից մինը երթայ, նրանք անպատճառ կապաշխարեն»։ Աբրահամը կրկնեց. «Երբ Մովսէսին և մարգարէներին չեն լսում, եթէ մեռելներից մինը յարութիւն առնէ և նրանց մօտ գնայ, դարձեալ չեն հաւատալ»։

«Երանի սգաւորաց, զի նոքա մխլթարեցին»։ Մտթ. ե. 4  
 Երանի սգաւորներին, որովհետև նրանք պէտք է մխլթարուեն։

«Մի խաբէք, Աստուած ոչ արհամարհի, զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն եւ հնձեցէ. որ սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեցէ ապականութիւն, եւ որ սերմանէ ի հողին, ի հողոյ անտի հնձեցէ զկեանս չափտեանից»։ Թ. ա. Գաղ. դ. 7. 8.

Մի խաբէք ինքներդ ձեզ. մի կարծէք թէ Աստուած թույլ կտայ իւր պատուիրանները արհամարհել, որովհետև մարդս ինչ որ սերմանէ, նոյնն էլ կհնձէ։ Ով իւր մարմնի մէջն է ցանում, մարմնիցն էլ ապականութիւն կհնձէ, իսկ ով հողու մէջ կսերմանէ, հողուցն էլ չաւտեանական կեանք կընձէ։

§ 41.

ՏԱՍՆ ԿՈՅՍԵՐԻ ԱՌԱՎԸ:

Տասն կոյսեր իրանց լապտերները վեր առան և զնացին փեսային դիմաւորելու: Նրանցից Հինգը լիմար էին, իսկ Հինգն իմաստուն: Յիմարներն իրանց լապտերները Հետները տարան, բայց մուացան ձէթ վերցնել: իսկ իմաստունները լապտերների Հետ ձէթ ևս վեր առան: Փեսան ուշացաւ—ամենքի քունը տարաւ:

Կէս գիշերին աղաղակ բարձրացաւ—ահա փետան գալիս է, դուրս եկէք նրան դիմաւորելու: Յոլոր կոյսերը վերկացան և լապտերները պատրաստեցին: Յիմարներն ասացին իմաստուններին. «Ձեր ձէթիցը մեզ էլ տուէք, որովհետև մեր լապտերները հանգչում են»: Իմաստունները պատասխանեցին և ասացին. «Մի գուցէ մեզ և ձեզ բաւական չլինի, աւելի լաւ է ծախողների մօտ գնացէք և գնեցէք ձեզ համար»:

Եւ երբ նրանք ձէթ գնելու գնացին, փետան եկաւ և պատրաստները նրա Հետ հարսանիք մտան և դուռը փակուեց: Յետոյ միւս կոյսերն էլ եկան և ասացին. «Տէր, տէր, բաց մեզ»: Փետան պատասխանեց և ասաց. «Ճշմարիտն եմ ասում, որ ես ձեզ չեմ ճանաչում»:

Աւրեմն արթուն կացէք, որովհետև չգիտէք, թէ մարդու Որդին ո՞ր օրը և ո՞ր ժամին կգայ»:

«Արթուն կացէք եւ աղօթս արէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն»: Մտթ. իզ. 41.

Արթուն մնացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք:

§ 42.

ՎԵՐՔԻՆ ԴՍԱՍՍԱՆ:

Երբ մարդու Որդին իրան փառքովը կգայ ու բոլոր հրեշտակները նրա Հետ, այն ժամանակ կնստի փառաց աթոռի վրայ: Յետոյ բոլոր ազգերը կժողովուին նրա առաջ և նա կջուկէ միմեանցից, ինչպէս հովիւը ջուկում է ոչխարներին այծերից: Ոչխարները կկանգնացնէ իւր աջ կողմը, իսկ այծերը՝ ձախ:

Այն ժամանակ թագաւորը կասէ աջ կողմը կանգնողներին. «Եկէք իմ հօր օրհնուածներ, ժառանգեցէք այն արքայութիւնը, որ աշխարհի սկզբիցը պատրաստուած է ձեզ համար, որովհետև սոված էի՝ կերակրեցիք ինձ. ծարաւ էի՝ խմացրիք. օտար էի՝ ձեր տուն ընդունեցիք. մերկ էի՝ հագցրիք. հիւանդ էի՝ ինամեցիք. բանտում էի՝ տեսութեան եկաք»: Այն ժամանակ արդարները կպատասխանեն և կասեն. «Մենք քեզ երբ սոված տեսանք և կերակրեցինք, կամ ծարաւ և խմացրինք. երբ տեսանք քեզ օտար և մեր տուն ընդունեցինք, կամ մերկ և հագցրինք. երբ տեսանք քեզ հիւանդ կամ բանտի մէջ ու տեսութեան եկանք»: «Ճշմարիտն եմ ասում ձեզ, ինչ որ իմ փոքր եղբայրներից մինին արիք, ինձ արիք»:

Յետոյ կասէ ձախ կողմում կանգնածներին. «Հեռացէք ինձանից, անիծածներ, դէպի լաւիտեանական կրակը, որ պատրաստուած է սատանայի և նրա հրեշտակների համար, որովհետև սոված էի չկերակրեցիք. ծարաւ էի՝ չխմացրիք. օտար էի՝ ձեր տուն

չընդունեցիք. մերկ էի՝ չհագցրիք. հիւանդ և բան-  
տումն էի, չաչցեցիք»։ Նրանք էլ կպատասխանեն  
ու կասեն. «Տէր, քեզ երբ տեսանք սոված, կամ ծա-  
րաւ, կամ օտար, կամ մերկ, կամ հիւանդ, կամ բան-  
տի մէջ և չճառայեցինք»։ Այն ժամանակ պատաս-  
խան կտայ և կասէ նրանց. «Ճմարիտն եմ ասում  
ձեզ, ինչ որ իմ փոքրիկ եղբայրներից մինին չարիք,  
ինձ չարիք»։

Սեղաւորներ կգնան դէպի յաւիտեանական տան-  
ջանքը, իսկ արդարները՝ դէպի յաւիտեանական կեանքը։

«Ոչ ամենայն որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ չարքայու-  
թիւն երկնից, այլ որ ասնէ զկամս Հօր իմոյ, որ չեր-  
կինս է»։ Մտթ. է. 21.

Երկնքի արքայութիւն նրանք կգնան, որոնք իմ երկ-  
նաւոր Հօր կամքը կկատարեն և ոչ նրանք, որոնք ինձ  
տէր, տէր կկանչեն։

§ 43.

ԼԵՐԱՆ ՔԱՐՈՋԸ ԵՒ ԻՆՆԵՐ ԵՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

Յիսուսի յետեից մեծ բազմութիւն էր գնում։  
Փրկիչը ժողովրդի բազմութիւնը տեսնելուն պէս՝  
լեաւոր բարձրացաւ և երբ այնտեղ նստաւ, աշակերտ-  
ները մօտ եկան։ Այն ժամանակ Յիսուսը բաց արաւ  
բերանը, ուսուցանում էր և ասում.

«Երանի հոգւով աղքատներին, որովհետեւ եր-  
կնքի թագաւորութիւնը նրանցն է. երանի սգաւոր-  
ներին, որովհետեւ նրանք պէտք է մխիթարուեն.  
Երանի հեղահոգիներին, որովհետեւ երկիրս նրանք

պէտք է ժառանգեն. երանի նրանց՝ ուլքեր արդա-  
րութեան համար սոված և ծարաւ են, որովհետեւ  
նրանք պէտք է կշտանան. երանի ողորմածներին,  
որովհետեւ նրանք պէտք է ողորմութիւն ղանեն.  
Երանի նրանց՝ ուլքեր սրտով սուրբ են, որովհետեւ  
նրանք պէտք է Աստուծուն տեսնեն. երանի խաղա-  
ղութիւն անողներին, որովհետեւ Աստուծու որդիք  
պիտի կոչուեն»։

«Չկարծէք թէ ես եկել եմ օրէնքը կամ մար-  
գարէութիւնը քանդելու. ես չեմ եկել քանդելու՝ այլ  
լրացնելու։ Բայց ասում եմ ձեզ, եթէ ձեր արդարու-  
թիւնը դպիրների և փարիսեցիների արդարութիւնից  
աւելի չլինի, չէք կարող երկնքի արքայութիւնը մտնել»։

«Լսեցէք, առաջին մարդկանցն ասուեց, թէ  
սուտ մի երդուիր, այլ Աստուծուն տուած երդումդ  
կատարիր։ Բայց ես ասում եմ ձեզ՝ բնաւ մի երդուէք  
ոչ երկնքի անունով, որ Աստուծու աթոռն է. ոչ  
երկրիս անունով, որ նրա պատուանդանն է. ոչ Ե-  
րուսաղէմի անունով, որ մեծ թագաւորի քաղաքն  
է։ Չեր խօսքը թող լինի—այոն՝ այո՛ և ոչը՝ ոչ—  
սրանից աւելին չարիցն է»։

«Դուք լսել էք, որ ասուեց, թէ աչքի տեղ  
աչք և ատամի տեղ ատամ։ Բայց ես ասում եմ ձեզ՝  
չարին հակառակ մի կենաք, այլ՝ եթէ մինը քո աջ  
ճնօտին ապտակէ, շուռ տուր միւսն էլ և եթէ մինը  
կամենայ կռիւ անել և քո շապիկն առնել, այդպիսի  
մարդուն վերարկուդ էլ տուր»։

«Դուք լսել էք, որ ասուեց, թէ քո ընկերին

պէտք է սիրես, իսկ թշնամուն՝ ատես: Բայց ես ասում եմ ձեզ.— սիրեցէք ձեր թշնամիներին. օրհնեցէք ձեզ անիժողներին. բարի արէք ձեզ ատողներին և աղօթք արէք նրանց համար, որոնք ձեզ չարչարում և հալածում են, որպէսզի կարող լինիք ձեր երկնաւոր Հօր որդիքը լինել, որի արեգակը ծագում է և՛ չար և՛ բարի մարդկանց վրայ և անձրև է թափում թէ՛ արդարների և թէ՛ մեղաւորների վրայ: Եթէ դուք սիրէք միայն նրանց, որոնք ձեզ են սիրում, ինչ վարձ պիտի ստանաք, չէ՛ որ մաքսաւորներն էլ նոյնն են անում: Եթէ որ միայն ձեր բարեկամներին ողջունէք, ինչ աւելի բան արած կլինիք, չէ՛ որ մաքսաւորները և մեղաւորներն էլ նոյնն են անում: Աւրեմն եղէք կատարեալ, ինչպէս, ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

4.

«Ջգոյշ կացէք ձեր տալիք ողորմութեան մասին, որ մարդկանց առաջ չանէք՝ ցոյց տալու համար, մի՛ դուցէ վարձ չստանաք ձեր երկնաւոր Հօրիցը: Երբ որ դու ուզենաս ողորմութիւն տալ, փող փչել մի՛ տար քո առաջը, ինչպէս կեղծաւորներն են ասում ժողովրդանոցներումը և հրապարակներումը՝ մարդկանցից փառաւորուելու համար: Աշմարիտն եմ ասում ձեզ, որ նրանց վարձը հէնց այդ է: Բայց երբ դու ողորմութիւն տաս, թո՛ղ քո աջ ձեռը չիմանայ, թէ ձախն ինչ գործեց. թո՛ղ քո ողորմութիւնը ծածուկ լինի և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ»:

«Երբ դու աղօթես, կեղծաւորների նման մի՛

վարուիր, որոնք սիրում են ժողովրդանոցներումը և հրապարակներումը կանգնել և աղօթել, որպէսզի մարդիկ նրանց գործը տեսնեն: Աշմարիտն եմ ասում, որ նրանց վարձը հէնց այդ է: Բայց դու երբ աղօթք անես, մտի՛ր քո սենեակը. դռները փակիր և ծածուկ աղօթի՛ր քո Հօրը, և քո Հայրը, որ ծածուկն էլ տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ: Ինչ ժամանակ դու աղօթք անես, շատ մի խօսիր Հեթանոսների նման, որոնք կարծում են, եթէ շատ խօսեն, Աստուած կլսէ: Աւրեմն դուք այսպէս աղօթք կանէք — մեր Հայր, որ երկնքումն էս, քո անունը սուրբ լինի. քո թագաւորութիւնը գայ. քո կամքը լինի՝ ինչպէս երկնքումը, այնպէս էլ երկրիս վրայ. մեր ամենօրեայ Հացը այսօր տո՛ւր մեզ. մեր պարտքը թո՛ղ մեզ, ինչպէս որ մենք էլ մեր պարտապաններին ենք թողնում. մի՛ ձգիր մեզ փորձանքի մէջ, այլ չարիցն ազատիր, որովհետև թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը քոնն է՝ յաւիտեանս՝ ամէն»:

«Երբ դուք պաս պահէք կեղծաւորների նման մի՛ տրտմէք, որոնք իրանց տխուր դէմքովը կամենում են ցոյց տալ մարդկանց, թէ պահում են: Արշմարիտն եմ ասում ձեզ, հէնց այդ է նրանց վարձը: Բայց երբ դու պահես, օճի՛ր գլուխդ իւղով. լուս երեսդ, և քո Հայրը, որ ծածուկը տեսնում է, յայտնի կհատուցանէ քեզ»:

7.

«Երկրիս վրայ ձեզ համար գանձ մի՛ հաւաքէք, ուր ցեցն ու ուտիճն ասպականում են և ուր գողերը գետնի տակը փորում են և գողանում: Ձեր գանձերը

երկնքումը հաւաքեցէք, ուր ոչ ցեց կայ, ոչ ուտիճ  
և ոչ գողերը գետնի տակը կփորեն և կգողանան:  
Որովհետև ուր ձեր գանձերն են հաւաքած, այնտեղ  
էլ ձեր սիրտը կլինի»:

«Ոչ ոք չի կարող երկու տիրոջ ծառայել—կամ  
մինին կատէ, միւսին կսիրէ, և կամ մինին կպատուէ,  
միւսին կարհամարհէ: Դուք չէք կարող և Աստու-  
ծուն և մամոնային ծառայել»:

«Իրա համար էլ ասում եմ, ձեր հոգւոյ համար  
հոգ մի անէք, թէ ինչ պէտք է ուտէք կամ ինչ  
պիտի հագնէք: Չէ որ ոգին կերակրիցը և մարմինը  
շորիցը բարձր է: Մտիկ արէք երկնքի թռչուններին՝  
ոչ վարում են, ոչ հնձում և ոչ ամբարներումը ժո-  
ղովում, բայց ձեր երկնաւոր Հայրը կերակրում է նր-  
բանց: չէ որ դուք նրանցից աւելի էք: Չեղնից սրբ  
հիմա հոգս անելով իւր հասակի վրայ մի կտնդուն  
կարող է աւելացնել: Եւ ինչու էք դուք հոգս անում  
շորերի համար. մտիկ արէք վայրի շուշանին, թէ  
ինչպէս է աճում՝ ոչ աշխատում է և ոչ մանում է:  
Սողոմոնն անգամ իւր բոլոր փառքերի մէջ նրանց մինի  
նման չհաղաւ: Եթէ վայրի խոտը, որ այսօր կայ և  
վաղը կրակը պիտի ձգուի, Աստուած այնպէս է հաղ-  
ցնում, հապա սրբան աւելի ձեզ համար կհոգայ, թե-  
րահաւատներ: Սրա համար էլ հոգ մի անէք, թէ  
ինչ ուտենք, ինչ խմենք կամ ինչ հագնենք: Այդ  
տեսակ բաները հեթանոսներն են խնդրում, ո-  
րովհետև ձեր երկնաւոր Հայրը զիտէ այն ամե-  
նը, ինչ որ ձեզ հարկաւոր է: Դուք խնդրեցէք նախ  
Աստուծու արքայութիւնը և նրա արդարութիւ-

նը, իսկ մնացածն առանց խնդրելու կստանաք»:

«Մի դատէք ուրիշներին, որ նրանք էլ ձեզ  
չգատեն, որովհետև ինչ գատաստանով ուրիշին դա-  
տէք, նրանով էլ պիտի դատուիք. ինչ չափով որ  
չափէք, նրանով էլ կչափուիք: Ի՞նչու եղբորդ աչքի  
շիւղը տեսնեմ ես, իսկ քո աչքի գերանը՝ ոչ: Կամ  
ինչպէս ես ասում եղբորդ, թող քո աչքի շիւղը հա-  
նեմ, այն ինչ քո աչքումը գերան կայ: Կեղծաւոր,  
առաջ քո աչքի գերանը հանիր և յետոյ նայիր  
եղբորդ աչքի շիւղը հանելու»:

Խնդրեցէք՝ կստանաք. աղաչեցէք՝ կգտնէք. ծե-  
ծեցէք դուռը՝ բաց կանեն: Ո՞վ է այն մարդը, որից  
իւր որդին հաց խնդրէ, միթէ քար կտայ, կամ ձու-  
կըն ուղէ, միթէ օձ կտայ նրան: Աւրեմն դուք որ չար  
էք, գիտէք ձեր որդիներին բարի պարգևներ տալ,  
հապա սրբան աւելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բարի  
բաներ կտայ նրանց, որոնք խնդրում են իրանցից»:

«Այն ամենը՝ ինչ որ կամենում էք, որ մարդիկն  
անեն ձեզ, այնպէս էլ դուք արէք նրանց. իսկ սա  
է օրէնքը և մարգարէքը»:

«Նեղ գունդը ներս մտէք, որովհետև լայն դու-  
ռը և ընդարձակ ճանապարհն է, որ դէպի կորուստ  
է տանում, դրա համար էլ այդ ճանապարհով գնա-  
ցողների թիւը շատ է: Իրա հակառակ նեղ է այն  
դուռը և ճանապարհը, որ դէպի կեանք է տանում  
և քչերն են նրան գտնում»:

«Զգո՛յշ եղէք սուտ մարգարէներէիցը, որոնք ոչ-  
խարի շորերով ձեզ մօտ են գալիս, իսկ ներսից յա-

փշտակող գալլեր են: Իրանց պտղիցը պիտի ճանա-  
 չէք նրանց—միթէ կարելի է որ փշեցը խաղող քա-  
 դեն, կամ տատակիցը՝ թուզ: Այսպէս ամենայն բարի  
 ծառ բարի պտուղ է բերում, իսկ չար ծառը չար  
 պտուղ է բերում: Ուրեմն նրանց պտղիցը ճանաչեցէք  
 նրանց: Ամեն մարդ, որ ինձ կանչում է՝ տէր, տէր,  
 երկնքի արքայութիւն չի մտնիլ, այլ նա միայն, որ  
 կատարում է երկնաւոր Հօրս կամքը»:

Գ.

«Իրա Համար էլ նա՝ ով իմ խօսքերը լսում և  
 կատարում է, նման է այն իմաստուն մարդուն, որ  
 իւր տունը քարի վրայ շինեց: Եկան անձրևները.  
 վարարեցին՝ զետեբը. փչեցին քամիները. խփեցին  
 տանը, և տունը չկործանուեց, որովհետև քարի վրայ  
 էր հաստատուած: Իսկ նա՝ ով իմ խօսքերը լսում  
 է, բայց չէ կատարում, նման է անխելք մարդուն,  
 որ իւր տունը աւազի վրայ շինեց: Եկան անձրևները.  
 վարարեցին՝ զետեբը. փչեցին քամիները. խփեցին  
 տանը, և տունն ընկաւ—նրա կործանումը մեծ էր»:

Երբ Յիսուսն այս բոլորը վերջացրեց, ժողովուրդը  
 զարմացաւ նրա վարդապետութեան վրայ, որովհետև  
 նա իշխանութիւն ունեցողի նման էր ուսուցանում  
 և ոչ թէ ինչպէս դպիրները:

«Չայն խորեցի իւրաքանչիւր ոք ի ձեռք, որ եւ ի  
 «Քրիստոս Յիսուս»: Թ. ա. Փիլ. բ. 5.

«Չեզնից ամեն միւր թող այն մտածէ, ինչ որ Յիսուս  
 Քրիստոսն էր խորհում»:

«Ըս եմ ճանապարհն, ճշմարտութիւն եւ կեանք, ոչ  
 ոք գայ առ Հայր, եթէ ոչ ինեւ»: Յովհ. ԺԳ. 6.

«Ըս եմ ճանապարհն, ճշմարտութիւնը և կեանքը, ոչ ոք  
 չի գալիս Հօր մօտ, եթէ ոչ ինձնով»:

§ 41.

ՅԻՍՈՒՍԻ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԼՈՒՆՅՄԱՆ, ԿԵՐԱԿԻԻ, ՊԱՆՔԻ  
 ԵՒ ՉԲԱԹԸ ՍՐԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ա.

Երուսաղէմից եկած դպիրները և փարիսեցիները  
 Յիսուսի մօտ եկան և ասացին. «Ի՞նչու քո աշա-  
 կերտները ծերերի աւանդութիւնիցն անցնում են—  
 ինչու հաց ուտելիս ձեռները չեն լուանում»: Նա էլ  
 պատասխան տուաւ նրանց և ասաց. «Կեղծաւորներ,  
 Եսայի մարգարէն շատ լաւ է մարգարէացել ձեզ  
 վրայ—այս ժողովուրդը շրթունքով է պատուում ինձ,  
 իսկ սրտով ինձնից հեռացել է: Զուր տեղն են պաշ-  
 տում ինձ. վարդապետութիւններ են սովորցնում,  
 որոնք մարդկանց պատուէրներ են»: Նա կանչեց ժո-  
 դովրդին իւր մօտ և ասաց. «Լսեցէք և իմացէք, ոչ  
 թէ այն է պղծում մարդուս, ինչ որ բերանն է մըտ-  
 նում, այլ այն՝ ինչ որ բերանիցն է դուրս գալիս,  
 որովհետև ինչ որ բերանիցն է դուրս գալիս, սրտիցն  
 է, ահա այն է պղծում մարդուս: Սրտիցն են դուրս  
 գալիս չար խորհուրդներ, սպանութիւններ, շու-  
 թիւններ, զոգութիւններ, սուտ վկայութիւններ: Ահա  
 սրանք են մարդուն պղծողը, իսկ անյուայ ձեռքով  
 ուտելը մարդուս չէ պղծում»:

Սի փարիսեցի աղաչում էր Յիսուսին, որ իւր  
 մօտ ճաշ ուտէ: Յիսուսը չմերժեց նրա խնդիրը՝ զը-  
 նաց և սեղան նստեց: Փարիսեցին տեսնելով, որ ճա-  
 շիցն առաջ չլուացուեց, զարմացաւ: Յիսուսն ասաց.  
 «Դուք փարիսեցիներդ բաժակի և պնակի դրսի կողմը  
 սրբում էք, այն ինչ ձեր ներքինը լիքն է յափշտա-

կութիւնով և չարութիւնով: Անմիտներ, կարծում էք ինչ որ դրսիցը մաքուր է, ներսիցն էլ մաքուր կլինի»: Երբ Յիսուսն այս բաններն ասում էր նրանց, դպիրները և փարիսեցիներն սկսեցին բարկանալ, յարձակոււմ էին նրա վրայ զանազան հարցերով, որ պէսզի բերանիցը մի խօսք լսեն և ամբաստանեն:

Բ.

Յովհաննէսի աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին. «Ի՞նչու մենք և փարիսեցիները յաճախ ենք ծոմ պահում, իսկ քո աշակերտները՝ ոչ»: Յիսուսը պատասխանեց նրանց. «Մի՞թէ կարող են հարսանքաւորները սուգ առնել, քանի որ փեսան նրանց մօտն է: Բայց կզան օրեր, երբ փեսան նրանցից կը հեռանայ, այն ժամանակ կպահեն: Նոր գինին Հին տկերի մէջ չեն ածիլ, ապաթէ ոչ տկերը կպատառուին և գինին կթափուի, այլ նոր գինին նոր տկերի մէջ կածեն, այն ժամանակ երկուսն էլ միմեանց կպահեն»:

Գ.

Մի անգամ Յիսուսն անցնում էր արտերի միջով, աշակերտները սովեցան, սկսեցին հասկ պոկել և ուտել: Երբ փարիսեցիներն այս բաները տեսան, ասացին. «Ահա քո աշակերտներն այն են անում, ինչ որ արժան չէ շաբաթ օրն անել»: Նա պատասխանեց նրանց և ասաց. «Իուք չէք կարդացել, թէ ինչ արաւ Գաւթի, երբ սովեց. ինչպէս մտաւ նա Աստուծու տունը և առաջաւորութեան հացը կերաւ, որ ոչ ոք իրաւունք չունէր ուտելու՝ բացի քահանաներից: Կամ չէք կարդացել օրէնքումը, որ քահանաները շաբաթ օրերում տաճարի մէջ շաբաթը պղղ-

ծում են և անմեղ են համարոււմ: Բայց ասում եմ ձեզ, տաճարիցն էլ մեծ է այստեղ: Մարդու Որդին նաև շաբաթի տէրն է:

Յիսուսը հեռացաւ այնտեղից և գնաց նրանց ժողովրդանոցը: Այնտեղ մի մարդ կար, որի ձեռը չորացած էր: Յիսուսին հարցրին. «Արդե՞ք շաբաթ օրը կարելի է բժշկել»: Այս նրա համար ասացին, որ նրանից մի պատասխան ստանան և սկսեն չարախօսել: Նա պատասխանեց և ասաց. «Ո՞վ է ձեզնից այն մարդը, որ եթէ մի ոչխար ունենայ, շաբաթ օրը փոսի մէջ ընկնի, մի՞թէ նրան չի բռնիլ և փոսիցը չի հանիլ: Բայց մարդը ոչխարից սրբան բարձր է, ապա ուրեմն շաբաթ օրն արժան է բարի գործել»: Դարձաւ այն մարդուն և ասաց. «Ձեռդ մեկնիլ»: Նա մեկնեց և ձեռը ողջացաւ միւսի նման: Փարիսեցիները գուրս գնացին և խորհուրդ էին անում, թէ ինչպէս նրան կորցնեն:

«Մարդ հայի կերեսս և Աստուած հայի ի սիրոս»: I. Թագ. 44. 7.  
 «Գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ»: II. Թ. ա: Կրնթ. 7. 6.  
 Գիրն սպանում է, իսկ հոգին կենդանացնում է:  
 «Պարտ է ի շաբաթու բարիս գործել»: Մտթ. փբ. 12.

§ 45.

ՅԻՍՈՒՍԸ ԵՒ ՍԱՄԱՐԻՏԻ ԿԻՆԸ:

Երբ Յիսուսը Հրէաստանից Գալիլիա էր գառնում, պէտք է որ Սամարիայի միջովն անցնէր: Նա եկաւ Սամարիայի Սիւքեար քաղաքը: Այստեղ էր Յակովբէ

Ջրհորը: Յիսուսը դադարել էր, ուստի նստեց այդ ջրհորի վրայ: Մօտաւորապէս ժամը վեցն էր: Ահա այդ միջոցին Սամարիա քաղաքից մի կին եկաւ ջուր հանելու: Յիսուսն ասաց նրան. «Ջուր տ՛ուր ինձ որ խմեմ»: Նրա աշակերտները քաղաք էին գնացել կերակուր գնելու: Սամարացի կինն ասաց Յիսուսին. «Գու որ հրէայ ես, ինչպէս ես ինձնից՝ սամարացի կնոջիցս ջուր ուզում, որովհետեւ հրէաները չեն խառնուում սամարացիներին հետ»: Յիսուսը պատասխանեց նրան. «Եթէ դու գիտենայիր Աստուծու պարզելը և թէ ո՞վ է նա, որ քեզ ասում է՝ տուր ինձ խմել, դու նրանից կհնդրէիր և նա կենդանի ջուր կտար քեզ»: Կինն ասաց. «Տէր, դույլ չունիս, այս ջրհորն էլ խորն է, ո՞րտեղից կտաս կենդանի ջուրը. միթէ դու մեծ ես մեր հայր Յակովբից, որ այս հորը տուաւ մեզ. ինքն այստեղից խմեց, նոյնպէս նրա որդիքը՝ և անասունները»: Յիսուսը պատասխանեց. «Ով այս ջրիցը խմում է, ծարաւանում է, իսկ ով իմ տուած ջրիցը կխմէ, յաւիտեան չի ծարաւիլ: Այն ջուրը, որ ես կտամ, ջրի աղբիւր կլինի նրանում, որ յաւիտեանական կեանքի մէջ կբղխէ: Կինն ասաց նրան, «Տէր, տուր ինձ այն ջուրը, որպէսզի միւս անգամ չգամ այստեղ ջուր հանելու»:

Յիսուսն ասաց նրան. «Գնա՛, կանչիր քո մարդուն և եկ սոյստեղ»: Կինը պատասխանեց և ասաց. «Ես մարդ չունիմ»: Յիսուսն ասաց նրան. «Աշմարիտ ասացիր թէ մարդ չունիմ, որովհետեւ դու հինգ մարդ ես ունեցել և նա՛ որ հիմա ունիս, քոնը չէ»: Կինն ասաց նրան. «Տէր, ես տեսնում եմ, որ դու մարդարէ

ես, մեկնիր ինձ այս մութը կէտը—մեր հայրերն այս սարերում երկրպագութիւն արին, իսկ դուք՝ ասում էք, թէ Երուսաղէմում միայն կարելի է երկրպագութիւն անել»: Յիսուսն ասաց նրան. «Գուք երկրպագութիւն էք անում նրան, որին չէք ճանաչում, իսկ մենք երկրպագում ենք նրան, որին ճանաչում ենք, որովհետեւ փրկութիւնը հրէաներիցն է: Կին, հաւատա՛ ինձ, որ ժամանակ կգայ, երբ ոչ այդ լեռներումը կերկրպագանէք Հօրը և ոչ էլ Երուսաղէմումը. կգայ ժամանակ և այդ ժամանակը հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգւով և ճշմարտութիւնով կերկրպագանեն Հօրը: Աստուած հոգի է և նրան երկրպագողները պէտք է հոգւով և ճշմարտութիւնով երկրպագանեն»: Կինն ասաց. «Գիտեմ որ Մեսիան պիտի գայ, որ Քրիստոս է կոչուում և երբ նա կգայ, ամեն բան կպատմէ մեզ»: Յիսուսն ասաց նրան. «Ես եմ այն, որ խօսում եմ քեզ հետ»:

Այս խօսքի վրայ եկան աշակերտները և զարմանում էին, որ կնոջ հետ խօսում էր: Կինը թողեց իւր կուժը, գնաց քաղաք և մարդկանց ասաց. «Եկէք տեսէք մի մարդ, որ ինձ ասաց այն բոլորը, ինչ որ գործել եմ. արդե՞ք նա չէ Քրիստոսը»: Չատ սամարացիներ գուրս վնացին քաղաքից տեսնելու նրան, որովհետեւ նրանք հաւատացին կնոջ խօսքին: Այն ժամանակ աշակերտները խնդրեցին Յիսուսին և ասացին. «Ռաբբի, հաց կեր»: Նա պատասխանեց. «Ես այնպիսի կերակուր ունիմ ուտելու, որ դուք չգիտէք»: Աշակերտներն ասում էին միմեանց, «Արդե՞ք ով սրա համար ուտելու բան բերաւ»: Յիսուսն ասաց. «Իմ

կերակուրն այն է, որ իմ ուղարկողի կամքը կատարեն»։ Սամարացիներն եկան և աղաչեցին, որպէսզի մի քանի օր իրանց մօտ մնայ, և մնաց այնտեղ երկու օր։ Այտեղ շատերը հաւատացին նրան և այն կնոջն ասում էին. «Այլևս քո խօսքերով չենք հաւատում, այժմ մենք ինքներս լսեցինք մեր ականջներով այդ բոլորը և զիտենք ճշմարտապէս, որ սա է աշխարհիս փրկիչը՝ Քրիստոսը»։

«Հոգի է Աստուած եւ երկրպագուացն նորա հոգևոյ եւ ճշմարտութեամբ պարտ է երկրպագանիլ»։ Յովհ. դ. 24.

«Աստուած հոգի է և նրան երկրպագողները պէտք է հոգևոյ և ճշմարտութիւնով երկրպագեն»։

«Աստուած սէր է եւ որ գայ ի սէրն՝ բնակեալ է Աստուած եւ Աստուած ի նմա բնակէ»։ I. Թ. Յովհ. դ. 16.

«Աստուած սէր է և ոյ մնում է սիրոյ մէջ, Աստուծու մէջ է բնակում և Աստուած նրա մէջ»։

§ 46.

ՄԱՐԻԱՄ ԵՒ ՄԱՐԹԱ:

Յիսուսը շրջելով եկաւ Բեթանիա գիւղը։ Այնտեղ կենում էր մի կին՝ Մարթա անունով։ Սա Յիսուսին իւր տուն ընդունեց։ Մարթան մի քոյր ևս ունէր՝ անունը Մարիամ։ Սա տիրոջ մօտ նստեց և լսում էր նրա խօսքերը։ Մարթան, Յիսուսին պատուելու համար, մեծ պատրաստութեան մէջ էր։

Մարթան ասաց Յիսուսին. «Տէր, հոգդ չէ, որ քոյրս ինձ մենակ է թողել ծառայելու, ասն նրան, որ ինձ օգնէ»։ Յիսուսը պատասխանեց նրան և ասաց. «Մարթա, Մարթա, դու շատ բաներով ես զբաղուած, բայց մէկ բան է պէտք։ Մարիամը բարեմասն ընտրեց, որ ոչ ոք չի խլի նրանից»։

Աղօթիւր և աշխատիւր:  
 «Բայց աստ սակաւ ինչ պիտոյ է»։ Դուկ. Ժ. 24.  
 «Բայց մէկ բան է պէտք»։

§ 47.

ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ:

Բեթանիայում մի հիւանդ կար՝ անունը Ղազարոս։ Նրա քոյրերը՝ Մարիամն ու Մարթան՝ մարդուղարկեցին Յիսուսի մօտ փոխելու. «Տէր, նա՛ որին դու սիրում էիր, հիւանդ է»։ Յիսուսն երբ լսեց, ասաց. «Այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ, այլ Աստուծու փառքի համար, որպէսզի նրա որդին փառաւորուի»։ Յիսուսը սիրում էր Մարթային, նրա քրոջը և Ղազարոսին։ Երբ լսեց թէ նա հիւանդ է, երկու օր մնաց այնտեղ, ուր որ էր։ Նրանցից յետոյ ասաց աշակերտներին. «Եկէք զարձեալ գնանք Հրէաստան, մեր բարեկամ Ղազարոսը քնեց, պէտք է գնամ, որ զարթեցնեմ նրան»։ Աշակերտներն ասացին. «Տէր, թէ որ քնել է, կառողջանայ»։ Այն ժամանակ Յիսուսը պարզ կերպով ասաց. «Ղազարոսը մեռաւ. ես այնտեղ չէի, բայց ուրախ եմ ձեզ համար, որովհետեւ դուք պիտի հաւատաք ինձ։ Գնանք նրա մօտ»։

Յիսուսը դարձաւ. արդէն չորս օր էր՝ ինչ գերեզմանի մէջ էին դրել։ Հրէաներից շատերն եկել էին Մարիամի և Մարթայի մօտ՝ մխիթարելու համար։ Երբ Մարթան լսեց, թէ Յիսուսը գալիս է, գրնաց դիմաւորելու, իսկ Մարիամը տանը նստած էր։ Մարթան ասաց Յիսուսին. «Տէր, եթէ այտեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ։ Բայց հաւատացած եմ, հիմա էլ ինչ որ Աստուածանից խնդրես, կտայ»։

քեզ»։ Յիսուսն ասաց նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնէ»։ Մարթան ասաց. «Գիտեմ որ յարութիւն կառնէ վերջին յարութեան ժամանակ»։ Յիսուսը կրրկնեց. «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ինձ հաւատացողը եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի։ Ով կենդանի է և ինձ հաւատում է, չաւիտեան չի մեռնիլ. հաւատում ես այս բանին»։ Մարթան պատասխանեց. «Այո՛, տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Քրիստոսն՝ Աստուծու որդին, որ պէտք է աշխարհ գալիր»։

Եւ երբ այս ասաց, գնաց և թագուն կանչեց Մարիամին ասելով. «Վարդապետն եկել է և կանչում է քեզ»։ Նա երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և եկաւ նրա մօտ։ Յիսուսը գեռ գիւղը չէր մտել։ Այն հրէաները, որոնք տանն էին և նրանց միոթարում էին, երբ տեսան որ Մարիամը վերկացաւ և գնաց, իրանք էլ նրա յետևից գնացին, կարծելով թէ զերեզմանն է գնում լաց լինելու։ Մարիամը երբ Յիսուսին տեսաւ, ոտներն ընկաւ և ասաց. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնիլ»։ Երբ Յիսուսը Մարիամին և նրա հետ եկած հրէաներին տեսաւ լաց լինելիս՝ սաստիկ յուզուեց և ասաց. «Ո՛ւր դրիք նրան»։ Նրանք պատասխանեցին. «Տէր, եկ և տես»։ Յիսուսն արտասուեց։ Հրէաներն ասում էին. «Տեսէք, ինչպէս էր սիրում նրան»։ Ոմանք էլ ասում էին. «Մի՞թէ սա, որ կոյրի աչքերը բաց արաւ, չէր կարող այնպէս անել, որ Ղազարոսը չմեռնէր»։

Յիսուսը գերեզմանի մօտ գնաց և ասաց. «Վերառէք այդ քարը»։ Մեռածի քոյր Մարթան ասաց.

«Տէր, արդէն հոտած կլինի, որովհետև չորս օրուան է»։ Յիսուսն ասաց. «Չասացի՞ քեզ, եթէ հաւատաս, Աստուծու փառքը կտեսնես»։ Քարը վեր առան. Յիսուսն աչքերը բարձրացրեց և ասաց. «Հայր, գոհանում եմ քեզնից, որ ինձ լսեցիր։ Ես գիտէի, որ ինձ միշտ լսում ես, բայց այս շրջապատող ժողովրդի համար եմ անում, որ ինձ հաւատան, թէ դու ուղարկեցիր ինձ»։ Այս ասաց և բարձր ձայնով աղաղակեց. «Ղազարէ, արի՛, եկ արտաքս»։ Մեռելը դուրս եկաւ ոտներն ու ձեռները պատանով կապած, իսկ երեսը վարշամակով պատած։ Յիսուսն ասաց. «Արձակեցէ՛ք զրան և թողէ՛ք գնայ»։ Հրէաներից շատերը, որ Մարիամի մօտն էին եկել, տեսան ինչ որ Յիսուսն արաւ և հաւատացին նրան։

«Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք, որ հաւատաց լիս, թէպէտ եւ մեռանի՛ կեցցէ։ Եւ ամենայն որ կենդանի է եւ հաւատաց լիս, մի մեռցի ի չաւիտեան»։ Յովհ. Ժա. 25.  
 «Զի ինձ կեանք Քրիստոս է եւ մեռանել շահ»։ Թ. ա. Փիլպ. ա. 21.  
 ինձ համար կեանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ։

### III.

#### § 48.

#### ՅԻՍՈՒՍԻ ԹՂՆԱՄԻՆԵՐԸ։

ա.

Իպիւրներից և փարիսեցիներից ոմանք Յիսուսի մօտ եկան և ասացին. «Վարդապետ, ուզում ենք մինչան տեսնել քեզնից»։ Նա էլ պատասխան տուաւ և ասաց. «Չար և շնացող ազգը նշան է խնդրում. նրան ուրիշ նշան չի տրուիլ՝ բացի Յովնան մարգա-

րէի նշանից: Նինուէացիները դատատանի օրը վեր կկենան այս ազգի հետ և կդատապարտեն նրան, վասնդի նրանք Յովնանու քարոզութիւնովն անպաշխարեցին, բայց այստեղ Յովնանից մեծը կայ: Հարաւի թագուհին վեր կկենայ այս ազգի հետ: դատատանի օրը և կդատէ սրան, որովհետև նա երկրի ծայրերից եկաւ Սողոմոնի իմաստութիւնը լսելու և ահա Սողոմոնիցն էլ մեծն է այստեղ»: և բառն այն «Հնչցցիցիս զայս» և այսպէս ըստ յովնայ «Եւ այսպէս ըստ յովնայ» Յիսուսի մօտ մի կոյր և համար դեռահար բերին: Եւ Յիսուսը բժշկեց նրան, այնպէս որ նա և խօսում և տեսնում էր: Բայց ժողովուրդը զարմացաւ և աւսում էր: «Միթէ սա է Կաւթի որդին»: Բայց փարիսեցիները, որոնք Երուսաղէմիցն էին եկել, ասացին. «Կա գեւերին հալածում է Բեեղզէբուղի՝ գեւերի իշխանի ձեռքով»: Յիսուսն իմանալով նրանց միտքըն՝ ասաց. «Ամենայն մի թագաւորութիւն, որ իր մէջ բաժանուած է՝ չի մնալ և ուրեմն եթէ սատանան սատանային հանում է, առել է թէ իւր մէջ բաժանուեց, էլ ինչպէս կարող է նրա թագաւորութիւնը գոյութիւն ունենալ: Եւ եթէ ես Բեեղզէբուղով եմ հանում գեւերին, հապա ձեր որդիքն ինչով են հանում, դրա համար նրանք կլինին ձեր դատաւորները: Բայց եթէ ես Աստուծու հոգւովն եմ հանում գեւերին, ուրեմն Աստուծու արքայութիւնը ձեզ վրայ հասել է»: և բառն այն «Եւ այսպէս ըստ յովնայ» Երբ Յիսուսը Կալիլիայումն էր, մի քանի փարիսեցիներ եկան նրա մօտ և ասացին. «Կուրս էկ և

դնան այստեղից, որովհետև Հերովդէսը կամենում է քեզ սպանել»: Նա պատասխանեց և ասաց. «Կնացէք, ասացէք այն աղուէսին. ահա գեւեր եմ հանում և բժշկութիւններ անում այսօր և վաղն, իսկ երբորդ օրն իմ մահը մօտեցած կլինի: Սակայն այսօր կամ վաղն և միւս օրը պէտք է գնամ, որովհետև անկարելի է, որ մարգարէն Երուսաղէմիցը դուրս մեռնի»: Դ.

Հրէաներից մի քանիսը փարիսեցիների մօտ գընացին և պատմեցին, թէ ինչպէս Յիսուսը Ղազարոսին յարութիւն տուաւ: Իսկոյն քահանայապետները և փարիսեցիները ժողով արին և ասացին. «Ի՞նչ անենք, այն մարդը շատ նշաններ է անում, եթէ այդպէս թոյլ տանք, ամենը կհաւատան դրան և հռովմայեցիները կդան ու կնուաճեն մեզ էլ, մեր երկիրն էլ»: Մինը նրանցից՝ Կաթիափա անուանով, որ այն տարուայ քահանայապետն էր, ասաց. «Կուք ոչինչ չգիտէք և հեռուն չէք էլ մտածում, աւելի լաւ է մի մարդ մեռնի ժողովրդի համար, քան թէ բոլոր ազգը կորչի»: Բայց նա այս խօսքերն իրանից չասաց, այլ որովհետև այն տարուայ քահանայապետըն էր, մարգարէացաւ, որ Յիսուսը պիտի մեռնէր ազգի համար: Այն օրից սկսած քահանայապետը և փարիսեցիները խորհուրդ արին, որ սպանեն նրան: Ուստի հրաման արձակեցին ամենուրեք, որ ով նրա տեղն իմանայ, իմաց տայ իրանց, որ բռնեն: Յիսուսն իւր աշակերտներով հեռացաւ այնտեղից: Հրէից գատիկը մօտ էր, դրա համար էլ շատերը գալիս էին Երուսաղէմ: Նրանք հարցնում էին

միմեանց Յիսուսի մասին և առճարում իրար հետ խօսում էին այն մասին, թէ տօնի օրն արդեօք Յիսուսը չի գայ Երուսաղէմ:

„Զի լոյս եկն յաշխարհ եւ սիրեցին մարդիկ զխաւար առաւել քան զլոյս, զի էին գործք իւրեանց չարութեան: „Զի ամենայն որ զչար գործէ՝ առեայ զլոյս“: Յովհ. գ. 19. 20.

Լոյսն աշխարհ եկաւ, բայց մարդիկ խաւարն աւելի սիրեցին, որովհետեւ նրանց գործերը չար էին: Չարութիւն գործողը լոյսն ատում է:

„Ար ոչ ընդիս է, հակառակ իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝ ցրուէ“: Մտթ. ժ. բ. 30.

Ով ինձ հետ չէ, ինձ հակառակ է և ով ինձ հետ չէ ժողովում, ցրում է:

§ 49.

ՅԻՍՈՒՍԻ ՕԾՈՒՄԸ ԲԵԹՆԵՆԻՍՅՈՒՄ:

Յիսուսը վեց օր առաջ եկաւ Բեթանիա, ուր կենում էր յարութիւն առած Ղազարոսը: Այնտեղ նրա համար ընթրիք պատրաստեցին — Մարթան ծառայում էր, Ղազարոսը սեղանակից էր, իսկ Մարիամը մի լիտր նարդոսի ազնիւ իւղ առաւ, նրանով Յիսուսի ոտներն օծեց և մազերովը սրբեց: Տունը լցուեց իւղի հոտովը: Յիսուսի աշակերտներից միւնը՝ Յուդա իսկարովտացին, որ նրանց գանձապահն էր և գողանում էր՝ ինչ որ արկղն էին ձգում, ասաց. «Ի՞նչու այդ իւղը երեք հարիւր զենարի չծախուեց և ազքատներին չտրուեց»:

Յիսուսն ասաց. «Թո՛ղ տուէք, ինչու էք նեղացնում նրան. դա մի բարի բան գործեց իմ վերաբերութեամբ: Ազքատներն ամեն ժամանակ ձեզ մօտ

են, երբ կամենաք, կարող էք նրանց բարութիւն անել, բայց ես միշտ ձեզ մօտ չեմ: Դա ինչ կարող էր, արաւ — առաջուց մարմինս օծեց՝ ի նշան իմ թաղման: Աճմարիտն եմ ասում ձեզ, ամբողջ աշխարհի մէջ, ուր որ էլ այս աւետարանը քարոզուի, սրա արածը չի մոռացուի, այլ կյիշուի սրա յիշատակի համար»:

„Լոյս փառաց բանդ Աստուած, որ ծագեցեր ի մեզ „զլոյս գիտութեան“: (Ձարական):

§ 50.

ՅԻՍՈՒՍԸ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱԿԻՄ:

Յիսուսը Բեթանիայից Երուսաղէմ դարձաւ: Երբ Զիթենեաց լերան մօտեցան, աշակերտներից երկուսին ուղարկեց և ասաց. «Գնացէք այդ դիւղը, որ ձեր առաջն է, այնտեղ կգտնէք մի կապած էջ և մի աւանակ էլ նրա մօտ, արձակեցէք և բերէք: Աշակերտները դնացին և այնպէս արին, ինչպէս Յիսուսը հրամայել էր — բերին էջն ու աւանակը և իրանց հանդերձները վրան ձգեցին: Յիսուսը նստեց նրանցից մինի վրայ: Ժողովրդից շատերն իրանց հանդերձները ճանապարհի վրայ փռեցին, շատերն էլ ծառից ճիւղեր էին կտրում ու ճանապարհի վրայ փռում: Երբ Յիսուսը Զիթենեաց լերան գառիվայրին մօտեցաւ, բոլոր աշակերտներն սկսեցին փառաբանել Աստուծուն այն ամենի համար, ինչ որ տեսել էին: Ժողովրդից շատերը, որոնք տօնի առթիւ էին եկել, երբ տեսան, որ Յիսուսն Երուսաղէմ է գնում, արմաւենու ճիւղեր վեր առան և դուրս եկան նրա առաջ: Երբ Յիսուսը

մօտեցաւ քաղաքին, ապաց. «Երանի՛ դու գոնէ այսօր զգայիր, թէ՛ որն է քո խաղաղութիւնը, բայց այդ բանը քո աչքերից ծածուկ է, դու չես տեսնում: Կգան օրեր, երբ քո թշնամիները չորս կողմդ պատնէշ կպատեն, կպաշարեն քեզ և ամեն կողմից կնեղացնեն. քեզ հիմնայատակ կանեն. որդիքդ քո մէջը կկոտորեն ու չեն թողնիլ, որ քո միջումը քարը քարի վրայ կանդնէ, որովհետև դու այցելութեանդ ժամանակը չիմացար»: Ժողովուրդը, որ առաջևից և ետևից զնում էր, աղաղակում էր և ասում. «Ովսաննա՛ Դաւթի որդուն, օրհնեալ է Տիրոջ անունով եկող թագաւորը. ովսաննա՛ բարձրումը»: Եւ երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դրդեցաւ և ամենայն ոք հարցնում էր. «Ո՞վ է սա»: Ժողովուրդը պատասխանեց. «Սա Յիսուսն է, Նազարէթի մարգարէն»:

Յիսուսը մտաւ տաճարը և դուրս արաւ բոլոր առևտուր անողներին. դուրս արաւ նոյնպէս աղանէվաճառներին և կօրծանեց հատավաճառների սեղաններն ու ասաց նրանց. «Գրած է, որ իմ տունը աղօթքի տուն պիտի լինի, իսկ դուք նրան փառակների այր էք դարձրել»: Նրա մօտ տաճարում գալիս էին շատ կաղեր և կոյրեր ու բժշկում էր նրանց: Երբ քահանայապետները և դպիրները տեսան այս հրաշքները և տաճարում եղողների աղաղակները, որոնք ասում էին. «Ովսաննա՛ Դաւթի որդուն», խիստ բարկացան և ասում էին նրան. «Ղսնում ես, թէ՛ դրանք ինչ են ասում»: Յիսուսն էլ ասաց նրանց. «Այո, մի՛թէ չէք կարդացել, որ մանուկների և կաթնակերների բերանով պիտի հաստատուի օրհնութիւնը»: Յի-

սուսը թողեց նրանց, զնաց քաղաքիցը դուրս՝ Բեթանիա և գիշերն այնտեղ մնաց:

«Պատրատտ արարէք զճանապարհս տեառն»: Եսայի խ. 3.  
Տիրոջ ճանապարհները պատրաստեցէք:

§ 51. *Աւսրթա*

ՅԻՍՈՒՍԸ ՎԻՃԱՍԵԱՆՈՒՄ Է ԹՂՆԱՄԻՆԵՐԻ ՀԵՏ:

ա.

Առաւօտեան՝ երբ Յիսուսը քաղաք եկաւ, մտաւ տաճարը: Քահանայապետները և ժողովրդի ծերերը մօտ եկան և երբ նա ուսուցանում էր, ասացին. «Ի՞նչ իշխանութիւնով ես անում այդ բաները և ո՞վ տուաւ քեզ այդ իշխանութիւնը»: Յիսուսը պատասխանեց և ասաց. «Ես ձեզ մի բան կհարցանեմ, եթէ ինձ պատասխանէք, ես էլ ձեզ կասեմ, թէ՛ ինչ իշխանութիւնով եմ այս բաներն անում:—Յովհաննէսի մկրտուութիւնը որտեղից էր, երկնքից, թէ՛ մարդկանցից»: Նրանք իրանց մէջ մտածում էին. «Եթէ՛ երկնքից ասենք, կասէ մեզ, հապա ինչո՞ւ չհաւատացիք նրան, իսկ եթէ՛ ասենք մարդկանցից, ժողովրդիցը վախենում ենք, վասնզի ամենքը Յովհաննէսին մարգարէ են ընդունում»: Այս համար էլ Յիսուսին պատասխանեցին. «Չգիտենք»: Նա էլ նրանց ասաց. «Ես էլ ձեզ չեմ ասի, թէ՛ ինչ իշխանութիւնով եմ անում այս բաները»:

բ.

Դրանցից յետոյ փարիսեցիները գնացին և խորհուրդ արին, թէ՛ ինչպէս խօսքով սրողայթ դնեն նրան: Փարիսեցիներն իրանց աշակերտներին Հերովդէ-

սեանները հետ միասին Յիսուսի մօտ ուղարկեցին և ասացին. «Վարդապետ, զիտենք, որ դու ճշմարիտ ես ուսուցանում. դու ոչ ոքից չես քաշում և ոչ երեսպաշտութիւն դիտես: Այժմ ասա՛ մեզ՝ կայսեր հարկ տալ պէտք է, թէ՛ ոչ»: Յիսուսը նրանց չարութիւնն իմանալով՝ ասաց. «Ի՞նչու էք փորձում ինձ, կեղծաւորներ, ցոյց տուէք ինձ հարկի դահեկանը»: Նրանք մի դահեկան բերին: Յիսուսը հարցրեց. «Ո՞ւր է այս պատկերը կամ գիրը»: Նրանք պատասխանեցին. «Վայսեր»: Յիսուսն ասաց. «Ուրեմն կայսրինը՝ կայսրին տուէք, իսկ Աստուծունը՝ Աստուծուն»: Երբ այս բանը լսեցին, խիստ զարմացան, թողին նրան և հեռուցանւ: X

Գ.

Յիսուսը փարիսեցիներին հետևեալ առակն ասաց. «Մի տանուէր այգի տնկեց. նրան ցանկով պատեց. մէջը հնձան փորեց. աշտարակ շինեց. յանձնեց մշակներին, իսկ ինքը դնաց ուրիշ աշխարհ: Երբ ժամանակը մօտեցաւ, ուղարկեց ծառաներին մշակներէ մօտ՝ ստուղն ստանալու: Մշակները ծառաներին բռնեցին. մէկին տանջեցին. միւսին սպանեցին և երրորդին էլ քարկոծեցին: Գարձեալ ուղարկեց ուրիշ ծառաներ առաջիններից շատ, բայց նրանց հետ էլ միևնոյն ձևով վարուեցան: Վերջապէս իւր որդուն ուղարկեց՝ ասելով թերևս նրանից ամաչեն: Մշակները որդուն տեսնելով՝ իրանք իրանց ասացին. «Սա ժառանգն է. եկէք սպանենք և ժառանգութեանը տիրանանք»: Իսկոյն բռնեցին նրան. այգուց դուրս հանեցին և սպանեցին: Երբ այգու տէրը գալ, ինչ կասէ մշակներին»:

Նրանք պատասխանեցին. «Չար մշակներին կը հեռացնէ և այգին ուրիշ մշակների կյանձնէ, որոնք իւր ժամանակին պտուղ կտան»: Յիսուսը պատասխանեց. «Այպէս էլ Աստու առքայութիւնը ձեզնից կառնուի և կտրուի հեթանոսներին, որոնք պտուղներ կտան»: Փարիսեցիները նկատեցին, որ իրանց վրայ է խօսում. այնուհետև յարմար ժամանակ էին որոնում, որ բռնեն Յիսուսին, բայց վախենում էին ժողովրդից, որովհետև նրան մարգարէի տեղ էին ընդունում:

Գ.

Յիսուսը խօսեց ժողովրդի և իւր աշակերտների հետ ու ասաց. «Մովսէսի աթոռի վրայ դպիրները և փարիսեցիները նստեցին: Ինչ էլ որ ասեն ձեզ, պահեցէք և արէք, բայց նրանց գործերի նման մի անէք, որովհետև ասում են և չեն կատարում: Ծանր և դժուարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերին, բայց իրանք մատով անգամ չեն ուզում շարժել: Նրանց բոլոր գործերը մարդկանց երևալու համար է— լայնացնում են իրանց գրապանակները և մեծացնում հանդերձի քղանցները: Միտում են ընթրիքներումն առաջին տեղն ունենալ. ժողովարաններումն առաջին կարգի աթոռներն են ընտրում, որ փողոցներումն իրանց ողջունեն և մարդկանցից՝ ռարբի, ռարբի կոչուեն: Բայց դուք այդպէս չպիտի լինիք: Չեզնից մեծը թող ձեր ծառան լինի, ով իւր անձը կբարձրացնէ՝ կիտնարհուի և ով կիտնարեցնէ՝ կբարձրանայ:

«Վայ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծա-

տրներ, երկնքի արքայութեան դռները փակում էք մարդոց առաջ. ինքներդ չէք մտնում, իսկ մտնողներին էլ արգելում էք: Այն ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, ուտում էք որբւայրիների տները և պատճառանքով երկար աղօթք էք անում, զրա համար էլ աւելի գատապարտութիւն կտանաք: Այն ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, տասանորդում էք անանուխ, սամիթ և չաման, բայց մոռանում էք օրէնքի ծանր-ծանր կողմերը՝ դատաստանը, ողորմածութիւնը և հաւատքը — այս պէտք է անել և այն չմոռանալ: Կոյր առաջնորդներ, մտեղները քամում էք, բայց ուղտերը կուլ էք տալիս: Այն ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, բաժակի և սկաւառակի արտաքին կողմը մաքրում էք, բայց ներքուստ լի էք յափըշտակութեամբ և անիրաւութեամբ: Այն ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, նման էք ծեփած գերեզմանների, որոնք արտաքուստ գեղեցիկ են երևում, բայց ներքուստ լի են մեռելների ոսկորներով և ամեն տեսակ պղծութիւնով: Այսպէս էլ դուք, թէև արտաքուստ արգար էք երևում, բայց ներքուստ լի էք կեղծաւորութիւնով և անօրէնութիւնով: Այն ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծաւորներ, դուք մարգարէների շրթիմները շինում էք և արգարների գերեզմանները զարգարում էք և ասում, եթէ մեր հայրերի ժամանակներում ապրէինք, մասնակից չէինք լինի մարգարէների սպանման: Ուրեմն դուք ձեր մասին վկայում էք, թէ մարգարէների սպանողների որդիքն էք: Դուք՝ օձեր, իժերի

զաւակներ, ինչպէս կարող էք փախել գեհէնի դատաստանիցը»:

«Նրուսաղէմ, Նրուսաղէմ, դու որ մարգարէներին կոտորում էիր և քեզ մօտ ուղարկուածներին քարկոծ անում, քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել այնպէս, ինչպէս հաւը ժողովում է իւր ձագերին թւերի տակ, բայց չկամեցաք: Ահա ձեր տունը աւերակ կ'ընդունի ձեզ»:

„Նդերուք այսուհետեւ խորպէտք իբրեւ զօճս եւ միաիտք իբրեւ զաղաւնիս“: Մտթ. Ժ. 16.

Նդէք խորպէտ օձերի նման և միամիտ՝ ինչպէս աղաւնիքը:

„Նթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան զդպրացն եւ փարիսեցւոց՝ ոչ մտանիցէք չարքայութիւն երկնից“: Մտթ. Ե. 20.

Նթէ ձեր չարգարութիւնը դպիրների ու փարիսեցիների արդարութիւնին աւելի չինի, երկնքի արքայութիւնը չէք մտնի:

§ 52. 8

ՅՈՒՂԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ:

Յիսուս Քրիստոսը ցերեկը սովորեցնում էր տաճարում, իսկ գիշերները բարձրանում էր Ձիթենեաց լեռը: Բոլոր ժողովուրդը առաւօտանց վաղ գնում էր տաճարը նրան լսելու համար:

Սրանից լետոյ քահանայապետները, դպիրները և ժողովրդի ծերերը ժողովուեցան այն քահանայապետի սրահը, որի անունը կալիփա էր և խորհուրդ արին, թէ ինչպէս Յիսուսին նենգութեամբ բռնեն և սպանեն. բայց ասում էին՝ ոչ այս տօնի ժամանակ, որպէսզի ժողովրդի մէջ խռովութիւն չընկնի:

Տասներկուսից մինը՝ Յուզա իսկարիովտացին զընաց քահանայապետների մօտ և ասաց. «Ի՞նչ կտաք ինձ, որ Յիսուսին ձեզ մատնեմ»: Նրանք շատ ուրախացան և երեսուն արծաթ խոստացան: Այնուհետև լարմար ժամանակ էր որոնում Յուզան, որ մատնէ:

„Ձի արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է“:

I. Տիմոթ. գ. 10.

„Բայց ոչ իմ կամք, այլ բոլոր վիցին“: Դուկ. իբ. 42.

§ 53. 8

ՈՏՆԱԼՈՒՆՅ ԵՒ ԽՈՐՀՐԻՍՒՈՐ ԸՆԹՐԻՔ:

ա.

Բաղարջակերաց տօնի առաջին օրն աշակերտները Յիսուսի մօտ եկան և ասացին նրան. «Ո՞րտեղ ես կամենում, որ քեզ համար գատիկը պատրաստենք»: Յիսուսն ասաց. «Գնացէ՛ք քաղաք՝ այս ինչի մօտ և ասացէ՛ք նրան, վարդապետն ասում է—իմ ժամանակը մօտեցել է, քեզ մօտ պիտի ուտեմ գատիկն աշակերտներիս հետ»: Նրանք էլ այնպէս արին, ինչպէս որ Յիսուսը հրամայեց և պատրաստեցին գատիկը: Երեկոյեան սեղան նստեց տասն և երկու աշակերտների հետ և ասաց. «Յանկանալով ցանկացայ այս գատիկը ձեզ հետ ուտել՝ իմ չարչարուելուց առաջ»:

Յիսուսը ընթրիքից վեր կացաւ, հանեց հանգերձները և մի դենջակ առաւ ու մէջքին կապեց: Յետոյ ջուր անեց կոնքի մէջ, սկսեց նրանց ոտները լուանալ և մէջքին կապած դենջակովը սրբել: Կարգը Սիմօն Պետրոսին հասաւ. նա թողլ չտուաւ և ասաց. «Տէր, դու պէտք է իմ ոտները լուանաս»: Յիսուսը

պատասխանեց. «Ինչ որ ես անում եմ, դու այժմ չգիտես, բայց յետոյ կիմանաս»: Պետրոսն ասաց. «Երբէք չեմ թող տայ, որ դու իմ ոտները լուանաս»: Յիսուսը պատասխանեց. «Եթէ քո ոտները չլուանամ, ինձ հետ բաժին չես ունենայ»: Այն ժամանակ Սիմօն Պետրոսն ասաց. «Տէր, ոչ թէ իմ ոտները միայն, այլ ձեռներս և գլուխս էլ լուա՛»: Եւ երբ նրանց ոտները լուաց, առաւ իւր հանդերձները, նորից սեղան նստեց և ասաց. «Գիտէ՛ք թէ ես ինչ արի ձեզ: Գուք ինձ կանչում էք վարդապետ և տէր և լաւ էք անում, որովհետև այդպէս էլ եմ: Եթէ ես՝ Տէրս և վարդապետս ձեր ոտները լուացի, դուք էլ պէտք է իրար ոտները լուանաք: Ես ձեզ օրինակ տուի. ինչպէս ես ձեզ արի, նոյնն էլ դուք սրէ՛ք միմեանց: Աշմարիտ եմ ասում ձեզ, ծառան իւր տիրոջից մեծ չէ և ոչ էլ ուղարկուածը՝ ուղարկողից: Եթէ այս գիտէք, երանելի էք, բայց աւելի երանելի կլինիք, եթէ որ այս կատարէք»:

բ.

Յիսուսն այս ասելով՝ Հոգևով տրտմեցաւ և ասաց. «Աշմարիտն եմ ասում, ձեզնից մէկը մատնելու է ինձ»: Աշակերտներն էլ տարակուսած իրար երեսի էին նայում, թէ ու՞մ համար է ասում, ուտտի ամեն մինը տեղից վեր կենալով ասում էր. «Տէր, մի՞թէ ես եմ»: Յիսուսը պատասխանեց. «Մարդու Որդին կգնայ, ինչպէս որ գրուած է, բայց վնայ այն մարդուն, որի ձեռքով նա պիտի մատնուի. աւելի լաւ էր, եթէ այն մարդը ծնուած չլինէր»: Այն ժամանակ Յուզան էլ ասաց. «Մի՞թէ ես եմ, վարդապետ»: Յիսուսն ասաց. «Պու

ասացիր»: Յուզան խակոյն դուրս գնաց: Արգէն կրեկոյ էր:

Երբ Յուզան դուրս գնաց՝ Յիսուսն ասաց. «Տակաւին փոքր ժամանակ էլ ձեզ հետ եմ. այժմ ձեզ եմ ասում. նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ իրար այնպէս սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի: Սրանով ձեզ ամենքը կճանոտչեն, որ իմ աշակերտներն էք»:

Գ.

Ընթրիքից յետոյ Յիսուսը վեր առաւ հաց և օրհնելով՝ կտրեց. աշակերտներին տուաւ ու ասաց. «Առէք, կերէք, այս է իմ մարմինը, այսպէս արէք իմ յիշատակի համար»: Յետոյ բաժակն առաւ. դոհացաւ. տուաւ նրանց և ասաց. «Խմեցէք զբանից ամենքդ, այս բաժակը նոր ուխտն է՝ իմ արիւնովը, որ թափուած է ձեզ և շատերի մեղաց թողութեան համար: Ամեն անգամ՝ երբ խմէք այս բաժակից, յիշեցէք ինձ»:

„Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, եւ „տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց“: Մտթ. Ի. 28: Մարդու Որդին չեկաւ որ իրան ծառայեն, այլ որ ինքը ծառայէ և շատերի փոխանակ իւր անձը փրկանք տայ“:

§ 54.

ՅԻՍՈՒՍԸ ԳԵԹՍԵՄԱՆՈՒՄ:

ա.

Օրհնելուց յետոյ՝ Յիսուսն իւր աշակերտներին հետ միասին անցաւ Կեսարոնի վտակը և բարձրացաւ Ձիթենեաց լեռը: Այստեղ Յիսուսն ասաց իւր աշակերտներին. «Գուք ամենքդ այս գիշեր կգայթակրդւէք ինձնից, որովհետեւ գրած է—հովուին որ զարկեն, ոչխարները կցրուեն»: Բայց Պետրոսը պատաս-

խանեց և ասաց նրան. «Եթէ ամենքն էլ գայթակրդւեն քեզնից, ես չեմ գայթակրուիլ»: Յիսուսն ասաց. «Ճշմարիտն եմ ասում քեզ, այս գիշեր՝ դեռ հաւը չխօսած, երեք անգամ կուրանաս ինձ»: Պետրոսն ասաց. «Եթէ քեզ հետ մեռնելու էլ լինիմ, գարձեալ չեմ ուրանայ»: Այսպէս էլ միւս աշակերտներն էին ասում:

Բ.

Յիսուսն իւր աշակերտների հետ եկաւ մի պարտեզ, որի անունն էր Գեթսեմանի և ասաց նրանց. «Այստեղ նստեցէք մինչև ես զնամ և աղօթք անեմ»: Հետն առաւ Պետրոսին, Ջեփեթիայի երկու որդւոցը և սկսեց տրտմել ու վշտանալ: Յիսուսն ասաց նրանց. «Մեռնելու չափ տրտում է ողիս. մնացէք այստեղ և ինձ հետ արթուն կացէք»: Եւ մի փոքր էլ առաջ զնալով՝ երեսի վրայ ընկաւ, աղօթք էր անում և ասում. «Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն ինձնից անցնի, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու»: Յիսուսը դարձաւ աշակերտների մօտ, տեսաւ նրանք քնած են, ասաց Պետրոսին. «Այդպէս՝ մէկ ժամ էլ չկարողացաք ինձ հետ արթուն կենալ. արթուն կացէք և աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնէք. ողիս յօժար է, բայց մարմինս տկար»: Երկրորդ անգամ Յիսուսը գնաց աղօթք արաւ և ասաւ. «Հայր, եթէ կարելի է, թող այս բաժակն ինձնից անցնի, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ՝ ինչպէս դու»: Գարձաւ ու կրկին քնած գտաւ աշակերտներին: Թողեց նրանց. դարձեալ զնաց. երրորդ անգամ աղօթեց և միևնոյն խօսքերն ասաց: Յիսուսը տաղնապի մէջ էր և ե-

ուանդով աղօթում էր: Այն ժամանակ Ստուծու հրեշտակը երկնքից երևայ և զօրացնում էր նրան, որպէսզի միշտ այդպիսի խօսքեր խօսէ: Աղօթքից վեր կացաւ, եկաւ աշակերտների մօտ և ստաց. «Ինչո՞ւ էք քնում, հասաւ ժամը, մարդու Որդին կմատնուի մեղաւորների ձեռը: Ա՛րք կացէք գնանք, ահա մօտենում է մատնիչը»:

4.

Եւ երբ նա դեռ խօսում էր, Յուդան քահանայապետի և փարիսեցիների ծառաների հետ միասին՝ մեծ ամբոխով ներս եկան՝ սրբրով, ջահերով և լապտերներով: Մատնիչը նրանց նշան էր տուել և ասել. «Որին ես համբուրեմ, նրան բռնեցէք»: Յուդան մօտեցաւ Յիսուսին և ասաց. «Քարև, վարդապետ» և համբուրեց: Յիսուսը պատասխանեց և ասաց. «Յուդա, համբուրելով ես մատնում մարդու Որդուն»: Յիսուսը դուրս եկաւ և ասաց նրանց. «Ո՞ւմն էք ուզում»: Նրանք պատասխանեցին. «Յիսուս Նազովրեցուն»: Յիսուսն ասաց. «Ես եմ»: Երբ Յիսուսը նրանց ասաց թէ ես եմ, ետ-ետ գնացին և դետնի վրայ ընկան: Յիսուսն երկրորդ անգամ հարցրեց նրանց. «Ո՞ւմն էք ուզում»: Նրանք պատասխանեցին. «Յիսուս Նազովրեցուն»: Յիսուսը պատասխանեց. «Ձեզ ասացի թէ ես եմ, եթէ դուք ինձ էք ուզում, թողէք զրանց, որ գնան»: Այն ժամանակ մօտեցան Յիսուսին և բռնեցին: Բայց Սիմօն Պետրոսը քաշեց իւր սուրը. զարկեց քահանայապետի ծառային և նրա աջ ականջը կտրեց: Յիսուսն ասաց Պետրոսին. «Սուրդ պատենի մէջ զիր. ո՞վ սուր

կկերցնի, սրով կկորչի. մի՛թէ չպէտք է խմել այն բաժակը, որ Հայրս է տուել»: Յիսուսը մօտեցաւ նրա ականջին և բժշկեց: Յետոյ դարձաւ և իւր վրայ եկող ամբոխին ասաց. «Ինչպէս մի տւագակի վրայ դուրս եկաք սրբրով և բրբրով: Ես ամեն օր ձեզ հետ էի տաճարումը և սովորցնում էի, այնտեղ ինձ ձեռ չտուիք և չբռնեցիք, բայց սա ձեր ժամն է և խաւարի իշխանութիւնը»: Նրանք բռնեցին Յիսուսին և կապեցին: Բոլոր աշակերտները թողին և փախան:

«Արթուն կացէք եւ աղօթաւ արարէք զի մի անկանիցիք ՚ի փորձութիւն: Հոգիս չօժար է, բայց մարմինս տկար»: Մտթ. իգ. 41.

«Հայր իմ եթէ հնար, է՛ անցցէ բաժակս այս լինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»: Մտթ. իգ. 39.

Հայր, եթէ հնար է, թող այս բաժակն ինձնից անցնի, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս դու:

§ 55.

ՅԻՍՈՒՍԸ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐԻ ԱՌԱՋ:

Երբ Յիսուսին բռնեցին և կապեցին, առաջին անգամ տարան Աննայի մօտ, որ Կայիափայլի աներն էր: Քահանայապետը հարցուփորձ արաւ Յիսուսին նրա աշակերտների և վարդապետութեան մասին: Յիսուսը պատասխանեց և ասաց. «Ես յայտնի կերպով քարոզել եմ աշխարհին. ես միշտ սովորցրել եմ ժողովարանումը և տաճարումը, ծածուկ ոչինչ չեմ խօսել: Ինչո՞ւ ես ինձ հարցնում. լսողներին հարցրու, թէ ինչ եմ քարոզել նրանց»: Այսպէս խօսելիս սպասաւորներից մինը, որ այնտեղ կանգնած էր, Յիսուսին ապտակ տուաւ և ասաց. «Այգպէս ես պատասխանում

քահանայապետին»: Յիսուսը ասաց. «Եթէ չար բան խօսեցի, ցոյց տուր, իսկ եթէ բարի, ինչո՞ւ ես խփում»:

Աննան Յիսուսին կապած ուղարկեց Կալիփա քահանայապետի մօտ, ուր դպիրները և ծերերն էին ժողոված: Պետրոսը դնում էր նրա լետեւից հեռուանց մինչև քահանայապետի սրահը. ներս մտաւ. նստեց ծառաների մօտ, որպէսզի տեսնէ թէ ինչ է պատահում: Քահանայապետները, ծերերը և բոլոր ատենաբը Յիսուսի դէմ սուտ վկայութիւններ էին որոնում, որ մահու դատապարտեն, բայց ոչինչ չկարողացան գրտնել: Թէպէտ այստեղ շատ սուտ վկաներ էին եկել, բայց ոչինչ չկարողացան ասացուցանել: Աերջպպէս երկու սուտ վկաներ առաջ եկան և ասացուցանում էին, որպէս թէ Յիսուսն ասել է, թէ ես կարող եմ Աստուծու տաճարը քանդել և երեք օրում կրկին շինել: Քահանայապետը վեր կացաւ և ասաց նրան. «Ոչինչ չես պատասխանում, ինչ որ սրանք քո դէմ վկայում են»: Յիսուսը լուռ էր: Քահանայապետն ասաց. «Երդում եմ տալիս քեզ կենդանի Աստուծու անունով, ասա՛, դո՞ւ ես Քրիստոսը՝ Աստուծու որդին: Յիսուսն էլ ասաց. «Դու ասացիր. սակայն ասում եմ ձեզ, որ հիմիկուանից կտեսնէք մարդու Որդուն գօրութեան աջ կողմը նստած՝ երկնքի ամպերի վրայ դնալիս»: Այն ժամանակ քահանայապետը պատառեց իւր հանդերձները և ասաց. «Սա Աստուծուն հայհօյում է, էլ ինչ հարկաւոր են մեզ վկաներ. դուք ինքներդ լսեցիք դրա հայհօյանքը. ինչ էք կարծում»: Նրանք պատասխանեցին և ասացին. «Դա մահու արժանի է»: Այն ժամանակ թքեցին նրա երեսին և

բռունցքով ծեծեցին, ոմանք էլ ապտակ տուին ասելով. «Մարգարէացիր, Քրիստոս, ո՞վ է քեզ զարկողը»:

»Տէր, առ ո՞վ երթիցուք, բանս կենաց չաւտենականաց ունիս: Եւ մեք հաւատացաք եւ ճանեաք, եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ»: Յովհ. է. 69. 70.  
Տէր, ո՞ւմ մօտ գնանք, չաւտենական կենաց խօսքեր ունիս դու: Մենք հաւատացինք և ճանաչեցինք, որ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծու Որդին:

§ 56.

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒՂԱՅԻ ՎԱՍՏԱՆԸ:  
ա.

Պետրոսը նստած էր դուրսը՝ սրահում: Մի աղախին մօտ եկաւ և ասաց նրան. «Դու էլ Դալիլիացի Յիսուսի հետն էիր»: Նա բոլորի առաջ ուրացաւ և ասաց. «Ես նրան չեմ ճանաչում»: Սրանից յետոյ մի ուրիշ կին տեսաւ նրան և ասաց այնտեղ եղողներին. «Սա էլ Նազովրեցի Յիսուսի հետն էր»: Պետրոսը դարձեալ ուրացաւ և երգուեց, որ այն մարդուն չէ ճանաչում: Փոքր ժամանակից յետոյ այնտեղ կանգնողներն ասացին Պետրոսին. «Ճշմարիտ է, դու էլ նրանցից ես, քո խօսքիցն էլ երևում է այդ»: Այն ժամանակ Պետրոսն սկսեց անիծել և երգուել, թէ այն մարդուն չէ ճանաչում: Այս միջոցին հաւն իսկոյն խօսեց և Տէրը դարձաւ ու մտիկ տուաւ Պետրոսին: Պետրոսը լիշեց Տէրոջ խօսքը, որ ասել էր՝ «Մինչև հաւի խօսելը երեք անգամ կ'ուրանաս ինձ»: Պետրոսը դուրս գնաց և դառնապէս լաց եղաւ:

բ.

Մատնիչ Յուդան, երբ տեսաւ որ Յիսուսին դա-

տապարտեցին, զղջաց, երեսուն արծաթը չետ դարձրեց քահանայապետներին և ծերերին ու ասաց. «Ես մեզք գործեցի՝ անմեղ արիւն մատնելով»: Երանք պատասխանեցին. «Մեզ ինչ, դու գիտես»: Յուդան արծաթը ձգեց տաճարի մէջ, հեռացաւ, գնաց և խեղդուեց: Քահանայապետներն առան արծաթը և ասացին. «Արժան չէ այս փողը գանձանակի մէջ ձգել, որովհետեւ արիւնի գին է»: Խորհուրդ արին և նրանով բրուտի ազարակը գնեցին՝ օտարականներին թաղելու համար:

«Ամենայն, որ խոստովանեցի չիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես գնմանէ առաջի Հօր իմոյ, որ չերկինս է: Եւ որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես գնա առաջի Հօր իմոյ, որ չերկինս է»: Մտթ. Ժ. 32. 33.

Ո՛վ որ ինձ մարդկանց առաջ կխոստովանէ, ես էլ նրան կխոստովանեմ իմ երկնաւոր Հօր առաջ: Իսկ ով ինձ կ'ուրանայ մարդկանց առաջ, ես էլ նրան կ'ուրանամ իմ երկնաւոր Հօր առաջ:

«Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, յապաշխարութիւն ի փրկութիւն առանց զղջանալոյ, գործէ. իսկ յաշխարհի տրտմութիւն մահ գործէ»: II. թ. ա. Կրնթ. է. 10.

Որովհետեւ աստուածային տրտմութիւնն ասպաշխարութիւն է գործում փրկութեան համար՝ առանց զղջալու, իսկ աշխարհի տրտմութիւնը մահ է գործում:

§ 57.

ՅԻՍՈՒՍԸ ՊԻՂԱՏՈՍԻ ԵՌԱՏ:

Լուսաբացին բոլոր քահանայապետները և ժողովրդի ծերերը Յիսուսի դէմ խորհուրդ արին, որ սպանեն: Կապեցին նրան և տարան, յանձնեցին Պոնտացի Պիղատոսին, որ երկրի կուսակալն էր: Ա-

ռաւօտ էր: Իրանք չմտան պալատը, որովհետեւ զատկի տօնը մօտ էր, կպղծուէին և զատկական գառը չէին կարող ուտել: Պիղատոսն ինքը դուրս եկաւ նրանց մօտ և ասաց. «Ի՞նչ գանգատ ունիք այդ մարդու դէմ»: Նրանք պատասխանեցին. «Եթէ սա չտրագործ չլինէր, քեզ մօտ չէինք բերիլ»: Պիղատոսն ասաց. «Ուրեմն դուք վեր առէք և ձեր օրէնքի համաձայն դատեցէք»: Հրէաներն ասացին. «Օրէնքը մեզ իրաւունք չէ տալիս մահու վճիռ տալ. սա մոլորեցնում է ժողովրդին. արգելում է կայսեր հարկ տալ և իրան թագաւոր է անուանում»: Յիսուսը ոչինչ չպատասխանեց քահանայապետների և ժողովրդի ծերերի մեղադրանքներին: Այն ժամանակ Պիղատոսը հարցրեց. «Չես լսում, թէ որքան բաներ են վկայում քեզ հակառակ»: Յիսուսը ոչինչ չպատասխանեց: Կուսակալը խիստ զարմացաւ այս բանի վրայ: Պիղատոսը ներս մտաւ պալատը. Յիսուսին իւր մօտ կանչեց և ասաց. «Գո՛ւ ես հրէաների թագաւորը»: Յիսուսը պատասխանեց. «Իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ. եթէ իմ թագաւորութիւնն այս աշխարհից լինէր, իմ ծառաները կպատերազմէին, որ ես հրէաների ձեռը չմատնուէի. իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ»: Պիղատոսն ասաց. «Ուրեմն դու թագաւոր ես»: Յիսուսը պատասխանեց. «Գո՛ւ ես ասում, որ ես թագաւոր եմ. ես դրա համար եմ ծնուել և աշխարհ եկել, որ վկայեմ այն ճշմարտութիւնը, որ ես լսել և տեսել եմ Աստուծու մօտ. ով իւր սրտումն այդ ճշմարտութիւնն զգում է, նա իմ ձայնին կրէ»: Այս լսելով Պիղատոսը դար-

ձեալ դուրս գնաց հրէաների մօտ և ասաց. «Ես ոչ մի յանցանք չեմ գտնում նրա մէջ»:

Ժողովուրդն սկսեց ևս աւելի զրպարտել՝ ասելով. «Սա ժողովրդին ազմկում է ամբողջ Հրէաստանի մէջ՝ Գալիլիայից սկսած մինչև այստեղ»: Պիղատոսը, երբ Գալիլիայի անունը լսեց, հարցրեց, թէ արդեօք նա Գալիլիայիցն է և երբ իմացաւ որ Հերովդէսի իշխանութիւնիցն է, ուղարկեց նրա մօտ, որ այդ օրերում Երուսաղէմ էր եկել: Հերովդէսը Յիսուսին տեսնելուն պէս, խիստ ուրախացաւ, որովհետև վաղուց ցանկանում էր նրան տեսնել, շատ բաներ էր լսել նրա մասին. յոյս ունէր, որ մի նշան կտեսնէ նրանից: Հերովդէսը շատ բաներ հարցրեց Յիսուսին, բայց ոչ մի պատասխան չստացաւ: Քահանայապետները և գալիւնները կանգնած էին և սաստիկ չարախօսում էին նրանից: Հերովդէսն էլ իւր զինուորների հետ անարգեց նրան՝ ծաղր անելով, սպիտակ հանգերձ հագցրեց և յետ ուղարկեց Պիղատոսի մօտ: Այդ օրից սկսած Հերովդէսն ու Պիղատոսը բարեկամ դարձան իրար հետ, որովհետև առաջ միմեանց թշնամի էին:

Պիղատոսն ասաց քահանայապետներին և ժողովրդին. «Գուք այս մարդուն ինձ մօտ բերիք և իբրև ժողովրդեան մոլորեցուցիչ ներկայացրիք. ահա ձեր առաջ դատեցի և ոչ մի յանցանք չգտայ նրա մէջ՝ ինչի մասին որ դուք չարախօսում էք նրանից: Հերովդէսն ևս ոչինչ յանցանք չէ գտել նրանում, որ մահու արժանի լինէր, ուստի ես կխրատեմ նրան և կարձակեմ»:

Տօնի օրերն էին: Կուսակալը, համաձայն սովո-

րութեան, բանտարկեալներից մինին պէտք է ազատութիւն տար, որին ժողովուրդը կցանկար: Այն ժամանակ մի նշանաւոր բանտարկեալ ունէին՝ անունը Բարաբբա, որ խռովարարի մէկն էր և մարդասպանութեան համար բանտ էր դրուած: Պիղատոսը ժողովրդին հարցրեց. «Ո՞ւմն էք կամենում, որ արձակեմ, Բարաբբային, թէ Յիսուսին»: Պիղատոսը զիտէր, որ հրէաները նախանձու մատնեցին նրան: Բայց քահանայապետները և ժողովրդի ծերերն ազադակում էին և ասում. «Բարաբբային արձակիլը»: Պիղատոսը հարցրեց. «Իսկ ի՞նչ անեմ Յիսուսին, որին հրէից թագաւոր էք ասում»: Ամենքը միաբերան ազադակեցին և ասացին. «Խաչիլ, խաչիլ նրան»: Կուսակալը նորից հարցրեց. «Բայց ի՞նչ չար բան է գործել նա»: Նրանք և՛ս աւելի բարձր ձայնով ազադակում էին և ասում. «Խաչիլ, խաչիլ նրան»: Երբ Պիղատոսը դատաւորական աթոռի վրայ նստեց, կինը մարդ ուղարկեց ասելու. «Այդ արդար մարդու հետ բան չունիս, երազումս շատ բան տեսայ նրա մասին»:

Սրանից յետոյ Պիղատոսն առաւ Յիսուսին և ձեծեց: Զինուորները փշերից պսակ շինեցին. գլխին դրին. ծիրանի հանդերձ հագցրին. աջ ձեռին մի եղեգն տուին. ձունկ էին չոքում առաջին. ծաղրում էին և ասում. «Ողջ կաց, հրէից թագաւոր»: Նրանք վերառան եղեգը, խփում էին գլխին և երեսին ապտակներ տալիս: Պիղատոսը դուրս բերաւ Յիսուսին: Նա փշեայ պսակ ունէր գլխին և ծիրանի հագած: Պիղատոսն ասաց ժողովրդին. «Ահա՛ այդ ցճեգ»: Երբ քահանայապետը և ժողովուրդը տեսան նրան, ազա-

զակեցին. «Խաչիր, խաչիր նրան»: Պիղատոսն ասաց. «Ես դրա մէջ յանցանք չեմ գտնում, տարէք և ինք- ներդ խաչեցէք»: Հրէաները պատասխանեցին նրան. «Մենք օրէնք ունինք և նա դրա համաձայն պէտք է մեռնի, որովհետև իրան Աստուծու որդի է անուանում»: Երբ Պիղատոսն այս խօսքերը լսեց, վախեցաւ և նորից ներս մտաւ Յիսուսի հետ պալատն ու ասաց նրան. «Ի՞նչ տեղից ես»: Յիսուսը չպատասխանեց: Պիղատոսն ասաց. «Ինձ հետ չե՞ս խօսում. մի՞թէ չգիտես որ ես իշ- խանութիւն ունիմ քեզ խաչելու և արձակելու»: Յի- սուսը պատասխանեց. «Ի՞նչ օչինչ իշխանութիւն չէիր ունենայ ինձ վրայ, եթէ վերեւիցը տուած չլինէր քեզ, դրա համար՝ նա որ ինձ քեզ մատնեց, նրա յանցանքն աւելի մեծ է»: Սրանից յետոյ Պիղատոսն աշխատում էր մի ձևով արձակել Յիսուսին: Բայց Հրէաներն ազդողակում էին և ասում. «Եթէ նրան արձակես, կայսեր բարեկամ չես. ամենայն ոք, որ իրան թագաւոր է անուանում, կայսեր հակառակ է»: Պիղատոսն երբ այս խօսքերը լսեց, Յիսուսին դուրս բերաւ, բեմի վրայ նստեց և ասաց ժողովրդին. «Ա- հնա՛ ձեր թագաւորը»: Նրանք ազդողակեցին և ասա- ցին. «Վեր առ դրան և խաչիր»: Պիղատոսը հարց- րեց. «Ձեր թագաւորին խաչեմ»: Նրանք պատաս- խանեցին. «Մենք ուրիշ թագաւոր չունինք՝ բացի կայսրից»: Պիղատոսն էլ տեսաւ, որ ոչինչ օգուտ չի լինում, այլ աւելի խռովութիւն է լինում, ջուր ա- ուաւ. ձեռները լուաց ժողովրդի առաջ և ասաց. «Ես այդ արդարի արիւնիցն անմեղ եմ, դուք գի- տէք»: Բոլոր ժողովուրդն ազդողակեց. «Թող դրա ա-

րիւնը մեր և մեր որդւոց զլխին լինի»: Այն ժամա- նակ Բարաբբային արձակեց, իսկ Յիսուսին ձեծելուց յետոյ՝ յանձնեց նրանց, որ խաչուի:

«Ահն այրոց ցձեզ». Յովհ. ԺԹ. 5.

Ահն այն մարդը:

«Ահաւասիկ գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշ- խարհի»: Յովհ. ա. 29.

Ահն Աստուծու գառը, որ աշխարհիս մեղքերը պիտի բառնայ:

§ 58.

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ:

Ձինուորները Հանեցին նրա կարմիր քղամխոր և հագցրին իւր շորերն ու տարան խաչելու: Յիսուսն ինքն էր տանում իւր խաչափայտը: Գալիս պատա- հեցին Սիմօն Ալիւրենացի անուշով մէկին, որ գաշտի աշխատանքիցն էր դառնում և ստիպեցին նրան, որ խաչափայտը տանէ: Յիսուսի ետևից մեծ բազմութիւն էր գնում՝ նոյնպէս շատ կանայք, որոնք սուգ էին անում և լաց լինում: Յիսուսը դարձաւ նրանց և ասաց. «Երուսաղէմի աղջիկներ, ինձ վրայ լաց մի լինիք, այլ լաց եղէք ձեր և ձեր որդւոց վրայ, որով- հետև կղան օրեր, երբ կասեն լեռներին՝ թէ մեզ վրայ ընկէք և բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ: Մը- տածեցէք փոքր ինչ, եթէ դալար փայտի հետ այսպէս են վարուում, չորին ինչ կանեն»: Երկու ուրիշ չարա- գործ մարդիկ էլ տարան, որ նրա հետ միասին խաչեն: Երբ եկան այնտեղը, որ գագաթն էր կոչւում, երբայեցերէն Գողգոթայ, Յիսուսին քացախ խմացրին՝ լեղիի հետ խառնած: Յիսուսը ճաշակելուց յետոյ չէր

կամենում խմել: Նրա հետ խաչեցին երկու չարագործները էլ—մինին աջ, իսկ միւսին ձախ կողմում: Ժամը երեքն էր, որ Յիսուսին խաչեցին: Յիսուսն ասաց. «Ներքը դրանց, Հայր, որովհետև իրանք էլ չգիտեն, թէ ինչ են անում»: Զինուորները վիճակ ձգեցին և բաժանեցին նրա հանդերձները: Պահապանները նստել էին այնտեղ և պաշտպանում էին: Պիղատոսը մի տախտակ գրեց և խաչի վերևից կախել տուաւ. տախտակի վրայ գրած էր—Յ Ի ս ո ս Ս Ն ա զ ո վ բ ց ի թ ա գ ա լ ո Ր հ ր է ի ց: Այս տախտակը հրէաներից շատերը կարդացին: Այն ժամանակ քահանայապետներն ասացին Պիղատոսին. «Մի գրի՛ր թագաւոր հրէից, գրի՛ր որ ինքն էր ասում, թէ թագաւոր եմ հրէից»: Պիղատոսը պատասխանեց. «Ի՛նչ որ գրեցի, գրեցի»:

Զինուորները ծաղր էին անում նրան և ասում. «Եթէ դու ես հրէից թագաւորը, փրկի՛ր քո անձը»: Անցուգարձ անողները հայհոյում էին նրան և զլուխները շարժելով՝ ասում. «Ո՛վ տաճարը քանդող և երեք օրում շինող, ազատի՛ր քեզ, եթէ Աստուծու որդին ես և իջի՛ր խաչիցը»:

Այսպէս էլ քահանայապետներն էին անում դպիրների և ծերերի հետ միասին ու ասում. «Ուրիշներին ազատեց, ինքն իրան չէ կարողանում ազատել. թէ որ նա Իսրայէլի թագաւորն է, թող իջնէ խաչիցը և հաւատանք նրան»:

Խաչուած չարագործներից մինը հայհոյում էր նրան և ասում. «Եթէ դու ես Քրիստոսը, փրկի՛ր քո անձն էլ, մեզ էլ»: Իսկ միւսը սաստելով պատասխա-

նեց նրան և ասաց. «Եւ դու չե՞ս վախենում Աստուածանից, որ ինքդ էլ նոյն պատժի մէջն ես: Մենք իրաւացի կերպով ենք պատժուած, որովհետև մեր արած գործերի արդար հատուցումն ենք ստացել, իսկ սա ոչ մի սխալ բան չէ գործել»: Սա դիմեց Յիսուսին և ասաց. «Տէր, իջի՛ր ինձ, երբ որ դաս քո թագաւորութիւնովը»: Յիսուսը պատասխանեց. «Ղշմարիտն եմ ասում քեզ, դու այսօր ինձ հետ դրախտում կլինիս»:

Կանայք ևս կային, որոնք հեռուանց մտիկ էին տալիս. սրանք այն կանայքն էին, որոնք նրա Գալիլիա եղած ժամանակը հետևում էին նրան և ծառայում: Յիսուսի խաչի մօտ կանգնած էին նրա մայրը, մօրաքույրը և Մարիամ Մագթաղենացին: Յիսուսը տեսնելով իւր մօրը և այն աշակերտին, որին սիրում էր, ասաց. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին»: Յետոյ աշակերտին ասաց. «Ահա՛ քո մայրը»: Եւ այն ժամանակից սկսած աշակերտն իրան մօտ առաւ Մարիամին:

Ժամը վեցին խաւար իջաւ բոլոր երկրի վրայ — արևը խաւարեց: Ժամը իննի գէ՛մ Յիսուսը մեծ ձայնով աղաղակեց և ասաց. «Ելի՛, էլի՛, լամա սաբաքթանի», այսինքն՝ Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողի՛ր ինձ: Սրանից յետոյ Յիսուսն ասաց. «Ծառաւ եմ»: Զինուորներից մինը վերցրեց սպունգը, թաթախեց քացախի մէջ և մշտկի ծայրին դրած՝ նրա բերանին մօտեցրեց:

Երբ Յիսուսը քացախը ձաշակեց, ասաց. «Ամենայն ինչ կատարուած է»: Յիսուսը մի անգամ էլ խօսեց՝ ասելով. «Հայր, հոգիս քո ձեռն եմ աւան-

դում»։ Այս ասելով՝ խոնարհեցրեց զլուխը և հողին աւանդեց։ Եւ ահա տաճարի վարագոյրը երկու կտոր եղաւ՝ վերեւից մինչև ներքև. երկիրը շարժուեց. ժաշոեքը պատառուեցան և գերեզմանները բացուեցան։ Հարիւրապետը և պահապանները երբ տեսան շարժը և այն ամեն եղածներն, ասացին. «Ճշմարիտ, որ սա Աստուծու որդի էր»։ Փողովուրդը, որ այս տեսարանը դիտելու համար եկել էր, եղած բաները տեսնելով, կուրծքները ծեծում էին և յետ դառնում։

«Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր «գիցէ 'ի վերայ բարեկամաց իւրոց»։ Յովհ. Ժե. 13.

Սրանից մեծ սէր չկայ, եթէ մինը իւր անձը չօգուտ իւր բարեկամների է զոհում։

«Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝ մինչև զՈրդին իւր միածինն ետ, զի ամենայն՝ որ հաւատայ 'ի նա, մի կորցէ, այլ բնկայցի զկեանս յաւիտեանականս»։ Յովհ. 4. 16.

«Քրիստոս 'ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ, որ 'ի վերայ նոցայն մեռաւ եւ յարեաւ»։ II. Թ. ա. Կրնթ. Ե. 15.

Քրիստոսն ամենքի համար մեռաւ, որ կենդանի լինողներն այլ ևս ոչ թէ իրանց անձերի համար կենդանի լինին, այլ նրա կամար, որ իրանց համար մեռաւ և յարութիւն առաւ։

§ 59.

ՅԻՍՈՒՍԻ ԹԵՂՈՒՄԸ ԵՒ ՅԵՐՈՒԹԻՒՆԸ։

ա.

Թ ա դ ու մ ն : Աւրբաթ օրն էր։ Արպէսզի մարմինները շաբաթ օրը չմնային խաչերի վրայ, հրէաները խնդրեցին Պիղատոսին, որ իրաւունք տրուի մարմինները խաչերի վրայից վեր առնելու։ Զինուոր-

ներն եկան և առաջինի սրունգները ջարդեցին, այնպէս էլ արին միւսինը, որ նրա հետ խաչուած էր։ Քաջ երբ Յիսուսի մօտ եկան, մեռած գտան, ուստի սրունգները չջարդեցին։ Զինուորներից մինը՝ նրա մահը ստուգելու համար, գեղարգով կողը խոցեց և իսկոյն արիւն և ջուր դուրս եկաւ։ Սրանից յետոյ Յովսէփ անունով մէկը, որ Արեմաթիայիցն էր և ծածուկ աշակերտ էր Յիսուսին, եկաւ Պիղատոսի մօտ և ինդրեց նրա մարմինը։ Պիղատոսը զարմացաւ, որ Յիսուսն այդպէս վաղ էր մեռել, սրա համար կանչեց Հարիւրապետին և պատուիրեց, որ տեղեկանայ այդ մասին։ Երբ Հարիւրապետից տեղեկացաւ, մարմինը Յովսէփին շնորհեց։ Նիկողիմոսն էլ, որ մի անգամ Յիսուսի մօտ էր եկել զիշիրով, եկաւ և բերեց զմուռս՝ հալուէի հետ խառնած։ Առան Յիսուսի մարմինը, կտաւներով պատեցին, ինչպէս որ հրէաների սովորութիւնն էր թաղման ժամանակ։ Այնտեղ՝ ուր Յիսուսին թաղեցին՝ մի պարտեզ կար, այն պարտիզում մի նոր գերեզման, որի մէջ դեռ ոչ ոք չէր գրուած, ահա այնտեղ գրին Յիսուսի մարմինը և մի մեծ քար էլ զլորեցին դռնանն ու հեռացան, գնացին։ Այն կանայքն էլ, որ Գալիլիայից նրա հետ եկել էին, գնում էին նրա յետեւից։ Սրանք տեսան գերեզմանը։ Յետ դարձան, խունկ և իւղ պատրաստեցին. բայց շաբաթ օրը հանգարտ մնացին, ոչինչ չարին՝ պատուիրանի համաձայն։

Յ ա Ր ու թ ի ւ ն : 1. Երբ շաբաթ օրն անցաւ՝ Քարիամ Մագթաղենացին, Յակովբի մայր Մարիամը

և Սաղօմէն առան զանազան տեսակ խուսկ և գնացին դէպի գերեզմանը, որպէսզի մարմինն օծեն: Նրանք շատ վաղ եկան — արեգակը դեռ նոր էր ծագել: Կանայքը միմեանց ասում էին. «Ո՞վ կզուրէ մեզ համար քարը գերեզմանի դռնիցը»: Նայեցան, տեսան որ քարը գերեզմանից հեռու էր գլորած: Քարը շատ մեծ էր: Մարիամ Մագթաղենացին վազում, գալիս է Սիմօն Պետրոսի և միւս աշակերտի մօտ, որին Յիսուսը սիրում էր և ասում է նրանց. «Տիրոջը գերեզմանից վեր են առել և չենք իմանում, թէ որտեղ են դրել»: Միւս երկու կանայքը ներս մտան գերեզմանը և տեսան, որ մի երիտասարդ նստած է աջ կողմում՝ հագած սպիտակ պատմուճան ու խիստ զարհուրեցան: Երիտասարդն ասաց նրանց. «Մի՛ զարհուրէք, դուք խաչուած Նազովրեցի Յիսուսին էք փնտռում, նա յարուժիւն առաւ. այստեղ չէ, ինչ էք կենդանին մեռելների մէջ որոնում. ահա այն տեղը ուր նրան դրին: Գնացէք, ասացէք նրա աշակերտներին և Պետրոսին, որ նա ձեզնից առաջ կգնայ Գալիլիա և այնտեղ կտեսնէք նրան, ինչպէս ձեզ ասել է»: Կանայքը շուտով գերեզմանից դուրս եկան և վազեցին, պատմեցին տասնումէկ աշակերտներին և ուրիշներին: Այս խօսքերը ցնորք երևեցան նրանց և չէին հաւատում, բայց Պետրոսը և Յովհաննէսը վեր կացան. գնացին գերեզմանը և տեսան որ կտաւն առանձին մի կողմն էր դրած: Նրանք յետ դարձան այնտեղից, իրանց մտքումը խիստ զարմանում էին եղածի վրայ:

2. Բայց Մարիամը գերեզմանի մօտ կանգնած

էր դուրսը և լաց էր լինում: Լաց լինելիս կուացաւ, մտիկ տուաւ գերեզմանի մէջ ու տեսաւ երկու հրեշտակ՝ սպիտակ շորերով նստած, մէկը գլխի կողմը և միւսը՝ ոտների: Հրեշտակներն ասացին Մարիամին. «Ո՞վ կին, ինչո՞ւ ես լաց լինում»: Մարիամն ասաց. «Իմ տիրոջը վեր են առել և չգիտեմ թէ ո՞ւր են դրել»: Եւ երբ այս ասաց, յետ դարձաւ և տեսաւ Յիսուսին կանգնած, բայց չգիտէր, թէ նա է: Յիսուսն, ասաց. «Կին, ինչո՞ւ ես լաց լինում, ո՞ւմն ես որոնում»: Մարիամը կարծելով թէ պարտիզպանն է, ասաց. «Տէր, եթէ դու վեր առար նրան, ասն ինձ, ո՞ւր ես դրել»: Յիսուսն ասաց. «Մարիամ»: Մարիամը դարձաւ և ասաց նրան. «Քարունի», որ նշանակում է վարդապետ: Յիսուսն ասաց՝ «Մի՛ դիպչիր ինձ, որովհետեւ դեռ չեմ վեր ելել իմ Հօր մօտ: Բայց գնա՛ իմ եղբայրների մօտ և ասն նրանց. ես վեր եմ ելնում իմ Հօր մօտ և ձեր Հօր մօտ. իմ Աստուծու և ձեր Աստուծու մօտ»: Մարիամ Մագթաղենացին եկաւ և պատմեց աշակերտներին, թէ ես տեսայ Տիրոջը և այս բանն ինձ նա ասաց:

3. Յիսուսի աշակերտներից երկուսը միևնույն օրը գիւղն էին գնում, որ վաթսուն ասպարէզ Երուսաղէմիցը հեռու էր: Գիւղի անունն Իմմաուս էր: Նրանք իրար մէջ խօսում էին այն բաների մասին, որ պատահել էր: Երբ այսպէս վիճաբանում էին, հէնց ինքը Յիսուսը մօտեցաւ նրանց և գնում էր հետները: Բայց նրանց աչքերը բռնուած էին, չճանաչեցին: Յիսուսը հարցրեց. «Այդ ինչ բաներ են, որոնց համար իրար հետ վիճում էք և տրտմած էք»: Նրանցից մի-

նը, որի անունը Աղէսպաս էր, պատասխանեց և ասաց. «Մեթէ դու Երուսաղէմում բնակուող միակ օտարականն ես, որ չգիտես թէ այս օրերում ինչ բաներ պատահեց այնտեղ»: Յիսուսն ասաց. «Ի՞նչ բաներ»: Նրանք ասացին. «Յիսուս Նազովրեցու մասին, որ մի մարդարէ մարդ էր՝ զօրաւոր զործերով Աստուծու և բոլոր ժողովրդի առջև, թէ ինչպէս քահանայապետները և իշխանները մահու դատաւտանի մատնեցին և խաչեցին նրան: Իսկ մենք յայս ունէինք թէ նա է, որ Իսրայէլին փրկելու է, բայց և այնպէս այս երրորդ օրն է, որ այս բաները եղան: Մի քանի կանայք էլ մեր միջիցը զարմացրին մեզ—նրանք առաւօտանց կանուխ գնացին գերեզմանը, մարմինը չգտան, եկան և ասացին որ հրեշտակներ են տեսել, որոնք ասել են թէ նա կենդանի է: Մեզնից մի քանիսը գնացին գերեզմանը և գտան իսկ այնպէս, ինչպէս կանայքն էին պատմել, բայց իրան չէին տեսել»: Յիսուսն ասաց նրանց. «Ո՛վ անմիտներ և թուլասիրտներ՝ հաւատալու է այն բոլոր բաներին, որ մարդարէները խօսեցան: Չէ՞ որ Քրիստոսը պէտք է չարչարանքները քաշէր, որպէսզի իւր փառքի մէջը մտնէր»: Եւ սկսեց խօսել Մովսէսից և բոլոր մարդարէներից. մեկնում էր նրանց, ինչ որ գրքերի մէջ գրուած էր իւր մասին: Նրանք մօտեցան այն զիւղին, ուր գնում էին և Յիսուսը այնպէս էր ցոյց տալիս, որպէս թէ էլի հեռու է գնալու: Այն երկուսը ստիպեցին նրան և ասացին. «Մնա՛ մեզ մօտ, որովհետև իրիկուսոյ դէմ է, օրն էլ տարածամ»: Յիսուսը մնաց նրանց մօտ: Երբ սեղան նստեցան.

առաւ հացը. օրհնեց. կտրեց և տուաւ նրանց: Աշակերտների աչքերը բացուեցան և նրան ճանաչեցին, բայց Յիսուսը հեռացաւ, աներևոյթ եղաւ: Սրանից յետոյ սկսեցին իրար հետ խօսել և ասել: «Չէ՞ որ մեր սրտերը բորբոքում էին, երբ ճանապարհին մեզ հետ խօսում էր և ինչպէս գրքերը բաց էր անում մեզ համար»: Նոյն ժամին վեր կացան, դարձան Երուսաղէմ և գտան տասնութկին ժողովուած ու պատմեցին նրանց այն ամենը, ինչ որ ճանապարհին պատահել էր և թէ ինչպէս ճանաչեցրեց իրան՝ հացը կտրելու ժամանակ: 4. Միւսնայն օրը՝ երեկոյան աշակերտները հաւաքուած էին և հրէաների երկիւղից դռները փակած ունէին: Յիսուսն ասաց նրանց. «Ինչո՞ւ էք շփոթուած և ինչո՞ւ համար այդպիսի խորհուրդներ են ծնում ձեր մէջ. տեսէ՛ք իմ ձեռները և ոտները, որ ես ինքս եմ, շօշափեցէ՛ք ինձ և տեսէ՛ք, որովհետև հոգին մարմին և ոսկոր չունի, ինչպէս ինձ տեսնում էք, որ ունիմ»: Այս ասաց և ցոյց տուաւ ձեռներն ու ոտները և կողը: Աշակերտները չափից դուրս ուրախացան, որ Տիրոջը մի անգամ էլ տեսան: Յիսուսը դարձեալ ասաց. «Խաղաղութիւն ձեզ, ինչպէս իմ Հայրն ինձ ուղարկեց, այնպէս էլ ես եմ ձեզ ուղարկում»: Այս ասելով փչեց նրանց վրայ և ասաց. «Առէ՛ք սուրբ Հոգին, ում մեզքը որ թողնէք, թողած լինի, ում որ կապէք՝ կապած»: Թովմասը, որ տասներկուսից մինն էր, նրանց մօտ չէր: Միւս աշակերտներն ասում էին նրան. «Մենք տեսանք Տիրոջը»: Իսկ նա ասաց. «Մինչև

ես իմ աչքով չտեսնեմ ձեռների բեռների նշանը  
 և մատս չդնեմ բեռների տեղի վրայ: մինչև նրա  
 խոցուած կողը ձեռով չշօշափեմ, չեմ հաւատայ»: **Ութ** օրից յետոյ աշակերտները կրկին հաւաքուել  
 էին միւսնայն տանը: Թովմասն էլ նրանց մօտն էր:  
 Յիսուսը փակ դռներից մտնելով, նրանց մէջը կանգ-  
 նեց և ասաց. «Խաղաղութիւն ձեզ»: Թովմասին ա-  
 սաց. «Տէր քո մօտն այստեղ և տես իմ ձեռները.  
 բեր ձեռք և կողս շօշափիր. անհաւատ մի լինիր,  
 այլ հաւատացեալ»: Թովմասը պատասխանեց և ա-  
 սաց՝ «Իմ Տէր և իմ Աստուած»: Յիսուսն ասաց. «Թով-  
 մաս, դու ինձ տեսար և հաւատացիր, բայց երանի  
 նրանց, սրտնք չեն տեսել և հաւատում են»:

5. Սրանից յետոյ Յիսուսը զարձեալ իւր անձը  
 յայտնեց աշակերտներին Տիբերական ծովի ափին: Յի-  
 սուսն եկաւ նրանց մօտ և ասաց. «Սկէք, ճաշեցէք»: **Աշակերտները** ճանաչեցին Տիրոջը: Աշակերտաց յետոյ  
 Յիսուսն ասաց Սիմօն Պետրոսին. «Սիմօն՝ Յովնանի  
 որդի, սիրո՞ւմ ես ինձ դրանցից աւելի»: Նա ասաց.  
 «Այո՛, Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ քեզ»: Յի-  
 սուսն ասաց. «Արածացրո՞ւ իմ դառները»: Դարձեալ  
 հարցրեց. «Սիմօն՝ Յովնանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»: **Նա** ասաց.  
 «Այո՛, Տէր, դու գիտես, որ ես սիրում եմ  
 քեզ»: Յիսուսն ասաց. «Արածացրո՞ւ իմ դառնե-  
 րը»: Յիսուսն երրորդ անգամ հարցրեց. «Սիմօն՝ Յով-  
 նանի որդի, սիրո՞ւմ ես ինձ»: Պետրոսը տրտմեցաւ  
 և ասաց. «Տէր, դու ամեն բան գիտես, դու գի-  
 տես, որ ես սիրում եմ քեզ»: Յիսուսն ասաց նր-  
 բան. «Արածացրո՞ւ իմ ոչխարները: Աշմարիտը, ճըշ-

մարիտն եմ ասում քեզ, երբ որ պատանի էիր, ին-  
 քոր էիր գօտիդ կապում և գնում, ուր կամենում-  
 էիր, բայց երբ կձերանաս, ձեռքերդ կմեկնես, ուրիշը  
 գօտիդ կկապէ և կտանէ, ուր որ չես կամենում:

„Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք, եթէ դու ես Քրիս-  
 տոսն որդի Աստուծոյ“: Յովհ. գ. 70.  
 „Յիշեան գՔրիստոս Յիսուս յարուցեալ 'ի մեռելոց“: II.  
 Տիմոթ. բ. 8.  
 „Ձի որպէս յարեաւ Քրիստոս 'ի մեռելոց փառօքն Հօր  
 „նոյնպէս եւ մեք 'ի նորոգումն կենաց շրջեսցուք“: Թ.  
 ա. Հռոմ. գ. 4.  
 Ինչպէս որ Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից  
 յարութիւն առաւ, նոյնպէս մենք էլ կենաց նորոգու-  
 թեան մէջ շրջենք:

§ 60.

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ:

Յարութիւնից յետոյ Յիսուս Քրիստոսը քառա-  
 սուկն օր էլի մնաց երկրիս վրայ իւր աշակերտների  
 մօտ և այդ ժամանակամիջոցում խօսում էր նրանց  
 հետ երկնքի արքայութեան մասին: Սրանից յետոյ  
 Ձիթենեաց լեռը բարձրացաւ աշակերտների հետ և  
 այնտեղ նրանց պատուէրներ տուաւ: Երբ այս բանը  
 տեսան, երեսների վրայ վայր ընկան: Յիսուսը մօ-  
 տեցաւ նրանց և ասաց. «Երուսաղէմից չհեռանաք,  
 այլ սպասեցէք Հօր աւետիքին, որ ես ձեզ խոստա-  
 ցել եմ: Յովհաննէսը ջրով մկրտեց, բայց դուք սուրբ  
 Հոգւով կմկրտուէք փոքր ժամանակից յետոյ»:

Աշակերտները հարցրին. «Տէր, այս ժամանակա-  
 միջոցում կրկին պիտի կանգնես Իսրայէլի թագաւո-

րութիւնը»: Նա պատասխանեց նրանց. «Ձեր գործը չէ զիտենալ ժամը և ժամանակը, որ Հայրը իւր իշխանութեան մէջ դրաւ: Բայց դուք զօրութիւն կրօտանաք, երբ Հոգին ձեզ վրայ կիջնէ և կլինիք իմ վկաները Երուսաղէմում, ամբողջ Հրէաստանում, Սամարիայում և մինչև երկրի ծայրերը: Ամենայն իշխանութիւն արուած է ինձ երկնքում և երկրիս վրայ: Աւրեմն զնացէք և բոլոր ազգերին ուսուցէք Հօր, Արդույ և Հոգւոյն Սրբոյ անունով: Աւսուցէք նրանց որ պահեն այն ամենը, ինչ որ ես ձեզ պատուիրեցի: Ով կհաւատայ և կմկրտուի, նա կիբրուի, իսկ ով չի հաւատայ, նա կդատապարտուի: Եւ ահա ես ձեզ հետ եմ ամեն օր՝ մինչև աշխարհիս վերջը»:

Երբ որ այս ասաց, բարձրացրեց ձեռները և օրհնեց նրանց: Օրհնելու ժամանակը բաժանուեց նրանցից և վերացաւ երկինք: Մի ամս ծածկեց նրան աշակերտների աչքից: Նրանք երկրպագեցին ու մեծ ուրախութիւնով յետ դարձան Երուսաղէմ և ամեն օր տաճարում զոյում և օրհնում էին Աստուծուն:

«Այս արքայութիւն Աստուծոյ խորանօք, զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է»: Դուկ. ժէ. 20. 21.

«Ի տան Հօր իմոյ օթեւանք բազում են, երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնում զձեզ յառ իս, զի ուր են իցեմ և դուք անդ իցէք»: Յովհ. ժդ. 2. 3.

«Եթէ յարեուք ընդ Քրիստոսի, այս գլխերին խնդրիցէք՝ ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստուծոյ»: Թժ. ա. Կոդ. գ. 1.

Արդ եթէ Քրիստոսի հետ յարութիւն էք տաել, հապա ուրեմն այն խնդրեցէք, ինչ որ վերեւումն է (երկնացին բարիք), ուր Քրիստոսն է նստում Հօր աջ կողմը:

Յ Ա Ն Կ

ՆՈՐ-ԿՏԵԿԱՐԱՆ


ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԿԵՂՈՒԹԻՒՆԸ

§	I.	Եջէ»
1.	Յիսուսի ծնունդը . . . . .	5
2.	Արևելքի մոգերը և Յիսուսի Եղիպտոս փախելը . . . . .	7
3.	Տասներկու տարեկան Յիսուսը տաճարում . . . . .	11
4.	Յովհաննէս Մկրչաի ծնունդը . . . . .	12
5.	Յովհաննէսն սպաշխարութիւն է քարոզում և մկրտում . . . . .	14
	II.	
6.	Յիսուսի մկրտութիւնը . . . . .	16
7.	Յիսուսն քնտրում է Սիմօնին և նրա բնակերտներին առաքելներ . . . . .	17
8.	Յիսուսը կանչում է Մատթէոսին . . . . .	18
9.	Յիսուսը և մանուկները . . . . .	19
10.	Մշակերտները գնում են, թէ ով է մեծ երկ. արք. մէջ . . . . .	20
11.	Վանայի հարսանիքը . . . . .	20
12.	Վափառնայումի հարիւրապետը . . . . .	21
13.	Տան բորոտների բժշկուելը . . . . .	22
14.	Փարիսեցին և մաքսաւորը . . . . .	23
15.	Անառակ որդու առակը . . . . .	24
16.	Յիսուսը բժշկում է կոյրին Երիքոյի մօտ . . . . .	26
17.	Յիսուսը և Զակէոսը . . . . .	27
18.	Յիսուսը բժշկում է խուլահամրին . . . . .	28
19.	Ողորմած սամարացու առակը . . . . .	28
20.	Արի կնոջ լուծան . . . . .	29
21.	Չար ծառայի առակը . . . . .	30
22.	Հինգ հազարի կերակրելը . . . . .	32
23.	Քանանացի կինը . . . . .	34
24.	Յիսուսը քարոզում է Նազարէթում . . . . .	34
25.	Հարուստ երիտասարդը . . . . .	36
26.	Անմիտ հարստի առակը . . . . .	37
27.	Վորուսեալ ոչխարի և գրամի առակը . . . . .	38
28.	Յայրոսի գուտարը և Նաչինի պատանին . . . . .	39
29.	Յովհաննէս Մկրչաի դեսպանները և Պետրոսի խոստովանութիւնը . . . . .	41

§		Երև.
30.	Յովհաննէս Մկրտչի մահը . . . . .	42
31.	Սերմանացանի առակը . . . . .	43
32.	Որոմի առակը . . . . .	44
33.	Ագարակի գանձի և մարգարտի առակը . . . . .	45
34.	Մեծ ընթրիքի առակը . . . . .	46
35.	Անդամալուծի բժշկութիւնը Կափառնայում քաղաքում և կաղի բժշկութիւնը Պրոպատիկէ կամ Բեգհեղդա աւազանի մօտ . . . . .	47
35.	ա. Յանցաւոր կիներ . . . . .	50
35.	բ. Չնացող կիներ . . . . .	51
36.	Յիսուսը սաստում է մըրկին . . . . .	52
36.	Յիսուսը գնում է ճովի վրայով . . . . .	52
37.	Կոյր ծնածի բժշկութիւնը . . . . .	53
38.	Այգու մշակների առակը . . . . .	56
39.	Քանքարների առակը . . . . .	58
39.	ա. Անիրաւ դատաւորի առակը . . . . .	59
40.	Մեծատան և աղքատ Ղազարոսի առակը . . . . .	60
41.	Տասն կոյսերի առակը . . . . .	62
42.	Վերջին դատաստան . . . . .	63
43.	Լերան քարոզը և իննը երանութիւնները . . . . .	64
44.	Յիսուսի խօսակցութիւնը լուսաման, կերակրի, պահքի և շաքարի սրբելու մասին . . . . .	71
45.	Յիսուսը և սամարացի կիներ . . . . .	73
46.	Մարիամ և Մարթա . . . . .	76
47.	Ղազարոսի չարութիւնը . . . . .	77

III.

48.	Յիսուսի թշնամիները . . . . .	79
49.	Յիսուսի օժուժը Բեթանիայում . . . . .	82
50.	Յիսուսը մտնում է Շրուսաղէմ . . . . .	83
51.	Յիսուսը վիճաբանում է թշնամիների հետ . . . . .	85
52.	Յուդայի մատնութիւնը . . . . .	89
53.	Ոտնալուսչ և խորհրդաւոր ընթրիք . . . . .	90
54.	Յիսուսը Գեթսեմանում . . . . .	92
55.	Յիսուսը քահանայապետների առաջ . . . . .	95
56.	Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի վախճանը . . . . .	97
57.	Յիսուսը Պիղատոսի առաջ . . . . .	98
58.	Քրիստոսի խաչելութիւնը . . . . .	103
59.	Յիսուսի թաղումը և չարութիւնը . . . . .	106
60.	Յիսուսի համբարձումն . . . . .	113



Լիտոգր. Ն. Կապուստյանի Տիֆլիսում

440

0026834

2013

<< Ազգային գրադարան



NL0026834

4 40

